ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետև ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինեական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութենից։

Ս. Նազարեանց:

ԱՌԱՋԻ՛Ն ՏԱՐԵԳ՛ՆԱՑՔ·

ՕԳՈՍՏՈՍ **1858** ԹՈՒԱԿԱՆԻ·

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 8.

ՄՈՍԿՎԱ

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ՆԱՊՈԼԷՕՆԸ ԷԼԲԱ ԿՂԶՈՒ ՎԵՐԱՅ։

—Ինչքան աւելի մօտենումէ ճանապարհորդը Էլբային, այնքան և խոշորատեսիլ երևումէն նորան այդ կղզու ապառաժքը· հազիւ թէ տեսանելի էր շէնքերի հետք, բաց ի մի փոքրիկ նաւահանգստի տեղից, որ ձախ ձեռքի վերայ թողումես դու։ Էլբայի եզերքը շատ զառ ի վեր են և ունին մի մռայլ մեծվայելչութիւն։ Բարձր վերևումը, մի սարի առաւել բարձր կատարի վերայ կանգնած է համարձակապէս մի առանձին մոխրագոյն աշտարակ, հին ժամանակների շէնք, որին ասումէ ժողովուրդը Torre di Giove (Աշտարակ Իւպիտերի), մի պատկառելի ազդարար նշան նաւարկուի համար, որ ղեկավարումէ իւր նաւը դէպ ի այս նապոլէոնեան կղզին։

Այժմ թռչումէ նաւը մի թխագոյն սարաւանդի մօտից և փոքր չէր ուրախութիւնը մի անակնկալ տեսարանի վերայ· պատճառ, յանկարծ դուրս է երևում այն մեծ գեղեցիկ ծովախորշը Պօրտօ-Ֆերրայիօյի, մի փառաւոր կիսաբոլորակ, ամփիթէատրոնապէս շրջափակվելով բարձր սարերից որոնց զառ ի վայրքը մինչև ծովը պատած են այգեստաններով, ամարանոցներով, ագարակներով, փոքրիկ մատուռներով, մի զմայլեցուցիչ սահմանի մէջ, կիպարիսների, բարձրուղէշ հալուէների և կա-

նաչ հովանաւոր թթենիքի տակ։ Այս փոքրիկ ծովածոցը աջ ձեռքի վերայ շրջաբերվումէ մի կիսակղզուց, որի երկրապարանոցը շատ նեղ է․ այս կիսակղզու վերայ դրած է ակնածելի կերպարանքով քաղաք ու նաւահանգիստ Պորտօ-Ֆերրայօ անուն, հին Արգօուսը և յետոյ ժամանակի Կոսմոպօլիսը, մի գեղեցիկ յիշատակարան, որ վկայումէ Մեդիչեան ազգատոհմից շառաւիղած Կոսմոսի Առաջինի երջանիկ օրերը, — այն պատկառելի բանտը Նապոլէոն կայսրի։

Ես ներս մտայ քաղաքի մէջ զգալով որպէս թէ ոտք էի կոխում մի ստուգապէս եղած պարզ աշխարհի մէջ։ Գեղեցիկ ծովախորշի մեծ և ծանրատեսիլ գծակերպութիւնքը ցուցանումեն մի հանդիսաւոր բան մեծափառ խաղաղութեամբ․ քաղաքը կիսակղզու վերայ լինելով այնքան շնորհաշուք տոսկանաշէն, այնքան ախորժելի և փոքրիկ, ունի ամենայն բան որ սեփական էր շինական միայնութեանը և աշխարհահրաժեշտ դիւրակեցութեանը։

Փողոցները սեղմած են, բայց հեշտ բոլորելի աչքի տակ․ փոքրիկ տեղերը և կանաչազարդ նարինջատունկ այգիները, որ ազատ ու օդարձակ վեր են ձգվում դէպ ի սարը, ունի մի անսովոր գրաւիչ բան։ Բոլոր քաղաքը շողշողումէ մի պայծառ դեղին գլխաւոր գունով, որ ծառերի դալար կանաչութեան և ծովի մթնագոյն կապտութեան հետ միասին ուրախացնումէ հոգին։ Մի փառաւոր կացութեան տեղի աթոռից զրկված թագաւորների համար, եթէ կամէին գրել իւրեանց յիշատակարանքը։

Նոյն և աշտարակները և մարտկոցները երեք ամրոցի, որ են ամրոցքը Ստելլա, Ֆալկօնէ և Ինգլեզէ չունին ոչինչ խոժոռ և տրտում կերպարանք, այլ յստակ ու կենդանագիր են։ Այս ամրոցների ոտքումը դրած է նաւահանգիստը, մի ապահով ու գեղեցիկ բոլորակ, պատուական եզերքով յօրինած, գործ Մեդիչեան Կոսմոսի։ Թրոմբայի, այսինքն այն փառահեղ դարպասի միջով որ շինած է բոլորակի միջոցումը, մտանումես դու քաղաք, երբ որ արդէն կարդացած էիր հաճութեամբ այդ դարպասի բազմաքարող մակագիրը որ այսպէս է․

Templa Moenia Domos
Arces Portum Cosmus Med. Florentinorum Dux II.
A fundamentis Erexit A. D. MDXLVIII.

(Տաճարները, պարիսպները, տուները, ամրոցները, նաւահանգիստը հիմքից կառուցել է Ֆլորենտացոց դուքս երկրորդ Մեդիչեան Կոսմոսը․ Տիրոջ թուականին 1548․)

Ուրեմն բոլորը կառուցել է այս տեղ այն բաղդաւոր կոմսը. տաճարներ, պարիսպներ, տուներ ամրոցներ և նաւահանգիստ — և Նապոլէոնին չէ թողել ոչինչ բան շինելու, բաց ի իւր նորոգեալ կայսրութեան օդեղէն ամրոցները։

Նաւը հասանում է ցամաքին այն սանդուղքի մօտ, ուստի միանգամ Նապոլէոնը իւր թիկնապահ զինուորներով նաւ նստեց դէպ ի Ֆրանսիա գալու. մի տեսարան որ միշտ և հանապազ պատկերացնում է իւրեան երևակայութիւնը. և քանի՛ քանի՛ անգամ և ի՛նչ տեղ աշխարհիս մէջ նկատած չէինք այդ պատկերը. Նապոլէոնի նաւ նստելը Էլբա կղզուց. բայց ճանապարհորդի աչքը վեր է նայում դէպ ի այս զարդարուն քաղաքը և որոնում է սորա մի հատիկ, ուշադրութեան արժանաւոր բանը, այսինքն աքսորված կայսրի բնակարանը։

— «Չէ՞ք տեսանում այն տեղ վերևումը, այն դեղին ուրախատեսիլ տունը Ստելլա ամրոցի տակ. դա նայում է ուղիղ դէպ ի նաւահանգիստը. ուղղեցէ՛ք ձեր աչքը դէպ ի այն՝ կողմ, ուր պահապանը կանգնած է իւր օթարանի առաջև։

— Այն տո՛ւնը փոքրիկ փոքրիկ լուսամուտներով, այդ ի՛նչ Տուիլըրեան ամրոց է մի թզուկների-թագաւորի համար. դա այնպէս փոքր է որպէս մի հովանոց այգիների մէջ։

— «Այդ է կայսրի պալատը, և այժմուս Պորտօ-Ֆերրայիօյի կուսակալի տունը։

Մի նաւակ բերում է մեզ և մօտեցնում է նաւահանգստի եզերքին, ուր նորասիրութեամբ հաւաքված են քաղաքի խաղաղաբարոյ բնակիչքը։ Այս տեղ չկայ այն համարձակութիւնը մարդերի, ինչպէս Լիվօռնօյումը, ուր փոքրիկ նաւակների, և նաւաստիների երեսից ազատվել չէ կեանքը. ամենայն ինչ հանդարտ է, համեստ, գոհ։ Դարպասից ներս մտանելով և անցանելով մի փողոցի միջով որ ձկնավաճառութեան և կանաչեղէնի հրապարակ է, ոտք ես կոխում Պորտօ-Ֆերրայիօյի գլխաւոր տեղի վերայ, որ ասվում է Piazza d'arme, մի երկայն ու նեղ տեղ, որի մի ծայրումը դրած է քաղաքի գլխաւոր եկեղեցին։ Այս տեղ թագաւորում է մի անբարբառ խաղաղութիւն կիւրակէի, մի ճշմարիտ անմեղ ու պարզ տրամադրութիւն և քաղցր կեանք։ Մաքուր տուները ծաղիկներով զարդարած են, և բնակիչների սակաւապիտութիւնը ցուցանում են փոքրիկ խանութները, փոքրիկ ղահվէտունը և այն պարկեշտ, Ոսկի Մեղու անունով հիւրանոցը, ուր իջևանեցի ես իմ ճանապարհորդակիցներով միասին։ Մի պարզ սեղանատուն, մի երկու հասարակ ամենևին լուռ սեղանահիւրք, մի միջակային կղզիական գինի, մի չքաւոր ճաշու հաց, և մի չափաւոր գին պահանջող, քաղցրաբարոյ տանուտէր։

Ես չկամիմ ոչինչ ասել նոյն իսկ քաղաքի ներքի մասին, որ պարունակում է 3,000 բնակչից աւելի. պատճառ, ոչինչ բան չկայ ասելու, քան թէ դա փոքրիկ, զարդարուն և բարետեսիլ էր, և թէ նորա փողոցները անսրժելի կերպով վաղումեն դէպ ի վեր և դէպ ի ցած ։ Փողոցներից մինը ասվում է ևս del Paradiso (Դրախտ), մի ուրիշը Via degli Ebrei (Եփրայեցոց փողոց). Մեդիչեան իշխանքը, որ այնքան շնորհ էին ցուցանում Հրէաներին Լիվօռնոյի մէջ, բնակութիւնք տուեցին նոցա և Պօրտօ-Ֆերրայիոյի մէջ ։

Մենք չենք գտանում խաղաղութիւն, մինչև վերելած չէինք դէպ ի Նապօլէոնի բնակարանը. Նա դրած է Ստելլա և Ֆալկօնէ ամրոցների մէջ բարձր եզերքի վերայ և ունի այնպիսի նիստ, որ առաջնակողմից նայում է ծովախորշի վերայ, յետնակողմից Պիոմբինեան ծովի վերայ և ցուցանում է մի այնպիսի տեսարան, որ չէր կարելի ևս առաւել զմայլեցուցիչ մտածել ։ Բայց այս տեսարանը սփռելով աչքի առաջև արևային արձակ ծովը և կախարդաբար հրապուրիչ ծովեզերեայքը Իտալիայի, անչափ գրգռեցուցիչ է մի աքսորված կայսրի համար ։ Տունը շատ փոքր է. Նա բաղկանում է մի տափակատանիք միջին շինուածից երկու յարկով, չորս պատուհաններով երեսի կողմից, և երկու աւելի փոքրիկ կողմնական շէնքերից, որ բաւական շատ ցած էին ։ Սոցա միջով ներս ես գնում դու, որովհետև միջին շինուածը չունի դուռն ։ Մի այգու պատ երկու կողմից կող.քը տալիս է դորան և շրջափակում է փոքրիկ այգին, ուր Նապօլէոնը սովոր էր զբօսնուլ առաւօտուն և երեկոյին ։ Լիմօնի ծառեր կանաչապատումեն այգու ցանկը, մի քանի ծաղկարոյսեր, այս տեղ ու այն տեղ մի ծաղկի աման և մի քանի մարմարիոնեայ արձաններ կանաչի մէջ. ահա բոլոր ճոխութիւնը կայսերական այգու, Էլբայի մէջ ։ Նոյն իսկ Նապօլէոնը տնկել է այդ այգին և զարդարել է նորան ակացիաներով ։ Ինձ շատ խորհրդաւոր երևեցաւ այն բանը, որ այգու մէջ հաստատած էին թնդանօթներ ։ Որովհետև այգին պատկանում է Ստելլա ամրոյի սահմանին, վասնորոյ սպասաւորում է նոյնպէս իբրև պատսպարան, և անտարակոյս, այն տեղ, ծաղիկների մէջ դրած էին թնդանօթները արդէն Նապօլէոնի ժամանակում. և դոքա կայսրի սիրած ծաղիկներն էին, աւելի անուշահոտ նորա համար քան թէ վարդերը և նարինջի ծաղիկները. և այդպէս կարելի էր մտածել, թէ նա այս տեղ իւր փոքրիկ թնդանօթազարդ այգու մէջ զբօսնումէր, դադար առնելով այս և այն թնդանօթի մօտ, խորհուրդներ յղանալով իւր սրտումը, առաջարկութիւններ կշռադատելով, լրտեսելով ծովը ուր Իտալիայի եզերքը հասանելի են աչքին, այլև խուզողական միտքը փոխաբերելով դէպ ի ցամաքահողը, իւր փառքի հանդիսարանը, որ

նորա հսկայական հոգու գործերը ձայն տալով յիշեցնումէն նորան, մեղադրումէն նորա անգործութիւնը և անդադար խթումէն նորա սիրտը, ասելով. «Կեսար, մի՞ թէ քնած ես դու:»

Բայց խոստովանենք, Նապոլէոնի յիշատակը Էլբա կղզու վերայ չէ շատ փառաւորում մեր հոգին: Մի անհատ մարդու հսկայական զօրութիւն, որ պատերազմումէ ընդդէմ աշխարհի և խրոխտաբար հանդէպ է երթում վտանգների, արդարև արժանի է զարմանալու. բայց դա թողումէ մեզ սառն, երբ որ այլ ևս չէ սպասաւորում աշխարհի բարոյական գաղափարներին և խորհուրդներին, այլ միայն մի առանձին մարդու անձնահաճութեան: Աշխարհի կարգը ոտնակոխ էր արել Նապոլէոնը. երբ որ նա Էլբայից բարձրացաւ, երևումէր նա մի մարդ, որ աշխարհի վերայ չունէր այլ ևս գործ և ջոկած ու բաժանած էր նորա խնդիրներից. նորա պատերազմը մի տիտանական բան էր, ինչպէս պիտոյ է լինի ամեն մի առանձին մարդու գործ ընդդէմ աշխարհական կարգին. այդ աշխարհը խորտակեց նորան, ինչպէս որ սա միանգամ խորտակել էր աշխարհը որպէս մի եղէգն, որ ջաղջախումէ մի անիւ գլորվելով նորա վերայ: Այս է Էլբայի ողբերգական խորհուրդը և այն հարիւրօրեայ ժամանակի կշիռը, որ Նապոլէոնը անցուցել է այն տեղ:

Նապոլէոնը Սանտ-Հելենա կղզու վերայ է դարձել մի ուրիշ յայտնութիւն: Այն տեղ զարթուցանումէ մեր սրտի մէջ մի տրտում ցաւակցութիւն որպէս մի՛ մեծ եղերական թէատրոնի հերոս, որ մեռանումէ մեր աչքի առաջև ախտերից մաքրած և հաշտուած հոգով:

Ի՛նչ օտարանշան երևոյթ: Նոյն իսկ Տիւրհենեան ծովումը Իտալիայի կայ մի այլ ապառաժեայ կղզի, որ իբրև աքսորական տեղ մի կայսր մարդու միշտ և հանապազ կրելու է մի անմահ անուն աշխարհի պատմութեան մէջ: Սա է կղզին Կապրի, Տիբերիոս կայսրի մենաստանը: Էլբա և Կապրի, Նապոլէոն և Տիբերիոս են երկու, միմեանց շատ ներհակ միւս կողմերը բնակալութեան. այն տեղ մի կայսր բռնութեամբ աքսորված փոքրիկ կղզու վերայ, որ իւր անտանելինեղ օթևանից ցանկանումէ միւսանգամ վերադառնալ դէպ ի աշխարհական գործերի հանդէսը, երբէք չյագենալով տիրակալութեամբ կամ քաջաղնական գործերով. այս տեղ մի կայսր որ ունի իւր ձեռքի մէջ բոլոր անվիճելի աշխարհը և նորա ընթացքը կառավարումէ ասես թէ իւր յօնքերի մի լոկ շարժողութեամբ, որ և կիսով չափ հեգնական և կիսով չափ երկիւղած ժպիտով կամաւորապէս հրաժարվումէ աշխարհի հրապարակից, որ իւր թագաւորութեան ամենափոքրիկ ապառաժի կոշտի վերայ ապրի որպէս առանձնաւոր:

Արդարև մի անմեղ մանկական միտք էր այն խորհուրդը որ յղացան իւրեանց մէջ 1814 Թուականի պետութիւնքը, այսինքն է, Նապոլէոնին տարագիր առնել դէպ ի Էլբա կղզին։ Շատ յօժար էր մարդ այս անմիտ մտածութիւնը Եւրոպայի ամենամեծ քաղաքագէտ մարդերի հեռացնել մի քաղցր բանաստեղծական հոգեշարժութենից։ Գոնեայ այս մի հատիկ խորհուրդը, որ ունի Նապոլէոնի աքսորանքը դէպ ի Էլբա, յանկարծ կենդանացաւ իմ մէջ, երբ որ ես կանգնած էի Րիոյի երկաթահանքի մօտ, և ասացի ես ինքս ինձ, որ 1814 Թուականի գերագոյն պայմանադիրքը, շատ գեղեցկապէս մտածել են կռիւների աստուած Նապոլէոնը, այս երկաթի Թուրը համաշխարհական գործերի մէջ աքսորելով դէպ ի Երկաթածին կղզին։ Նորա անսպառելի երկաթահանքներից աւելի քան Թէ 20 հարիւրեակ տարի կռանած են ազգերը զէնք, և Հռոմը, որի վերայ Պորսեննա անուն Թագաւորը այն Էտրուսկացոց որ առաջին անգամը կռանի տակ էին ձգել Էլբայի հրահալելիքը, պայման էր դրել, որ նա երկաթը գործ դնէ այնուհետև երկրագործութեան համար միայն, այդ Հռոմը Էլբայի երկաթով նուաճել է աշխարհը իւր ձեռքի տակ։ Ուրեմն մի յարմարաւոր բան էր, որ Նապոլէոնը տարագիր արվեցաւ դէպ ի Էլբա և շինվեցաւ այն մարդը երկաթի դիմակով։ Պատուականաբար կրեց նա այս դիմակը Էլբայի։

Այնու ամենայնիւ համարձակվումէին մտածել Թէ կէս աշխարհի հրամայողը, որ սովորել էր ազգերի օրհասը պահել իւր ձեռքի մէջ և խաղալ արքայական Թագերի հետ, յանկարծ կարող էր փոխվել մի Թոշակակեր հրաժարված աստիճանաւոր, որ մի պարզ շինական կղզու վերայ կաղամբ էր տնկում, Թռչունք էր վարժում, գործ էր ածում մի քանի գրենադիր զինուորներ որպէս յիշատակաւոր խաղալիք իւր համար, և կիւրակէին իւր դրացիների հետ միասին գնումէր որս։ Մի՛ Թէ կարծումէին, Թէ Նապոլէոնը լինելու է մի Դիոկղետիանոս, մի Տիբերիոս, կամ Կարոլոս հինգերորդ։ Արդարև ձանձրացած իշխաններ ցած են դնում իւրեանց Թագը, ըստ որում ճնշող էր դա և երբ ինքեանք ևս յագեցած էին. բայց և ամենածանր Թագը երբէք ծանր Թուեցած չէ մի այր մարդու, որ բարձրացել էր ցած դրութենից և աշխատութեամբ ստացել էր նորան բաղդի կամ ճակատագրի ձեռքից։ Այդպիսի մարդիկ երբէք կարող չեն դադարել իշխելուց, մինչև նոյն ճակատագրի հետ պատերազմելով չյաղԹվէին նոքա։ Ուրեմն մի օտարոտի երազական մտածութիւն էր, Կորսիկեան առիւծը փոխադրել այս կղզու վերայ, այն արձակ ծովումը Ֆրանսիայի և Իտալիայի մէջ, իսկապէս նորա իշխանական աւետերի վառարանի մէջ։

Բայց մի մեծ անհրաժարելի հարկաւոր խորհուրդ կայ այս աքսորական տեղումը Նապոլէոնի։ Պատճառ, ճակատագիրը որ կործանումէ մեծ մարդիկ, սովորաբար հեգնող է և նորա այպանութիւնը ունի շատ ողբերգական և սրտառուչ զօրութիւն։ Նա սովոր է և շատ սիրումէ իւր հալածականքը յետ կործանել իւրեանց սկզբնական դրութեան մէջ և ապա սպանել նորանց, եթէ կամէին դօքա կրկին անգամ փորձել բաղդի աստուածները։ Երբ որ Նապոլէոնը վեր էր ելանում այն Մարցիանայի վայրենի և ահագին սարերի մինի վերայ, ինչպէս որ յաճախ առնումէր նա, նորա ծայրից կարող էր տեսանել չէմ ասում անսահման հեռաւորութենների ամենափառաւոր թէատրոնը, այլ շատ մօտ իւր առաջեւ, Կորսիկա կղզին իւր քաղաքներով, անտառներով և սարերով, այլև հազարաւոր տեղերով որ նորա մանկութիւնը յիշեցնումէին նորան։ Այս տեսարանը պիտոյ է ցաւելի լինէր նորան։ Այսպէս ահա ճակատագիրը յետ էր հալածել նորան դէպ ի այն աշխարհը, ուստի դուրս էր գնացած նա որպէս երիտասարդ, անծանօթ, պարզ քաղաքացի, որին դեռ ևս չէր կարելի մի նոր բարձրացած մարդու անուն տալ, ըստ որում առանց գուշակելու հոյակապ գալոց օրեր, էր նա միայն բաղդի որդի կրելով իւր սրտումը մի անորոշ կարօտութիւն մեծամեծ գործերի։ Ճակատագիրը տարածվեցաւ այս տեղ նորա չորս կողմով որպէս մի օձ տուտը բերանումը։ Սա մի անտանելի բան էր. Նա պիտոյ է փշրէր այդ ճակատագրական օղը. բայց նա չազատվեցաւ բաղդի խաղարկութենից. պատճառ, նա յետ չպահեց նորանից այն արհամարհանքը, որ Նապոլէոնը միւսանգամ որպէս անսովոր բաների հետամուտ դուրս գնար դէպ ի Ֆրանսիա, ինչպէս մի օր Կորսիկայից ոտք էր կոխած աշխարհի հրապարակի վերայ։

Երբ որ Մակդոնալդ և Նէյ մարշալները Ֆօնտենեբլօ քաղաքումը ծանօթութիւն տուեցին Նապոլէոնին, թէ նորան պիտոյ էր ընտրել կամ Էլբայի կամ թէ մի այլ տեղի, զոր օրինակ Կորսիկայի իշխանութիւնը. սաստկութեամբ ձայն արձակեց նա. — «ոչ, ոչ. ես չկամիմ ոչինչ հաղորդակցութիւն ունել Կորսիկայի հետ։» Շատ փոքր հոգեբանական գիտութիւն հարկաւոր էր այս տեղ, Նապոլէոնի հոգու գաղտնիքը իմանալու համար։ — «Էլբա կղզին. ով գիտէ Էլբա կղզին. ցոյց տուեցէք ինձ աշխարհացոյցքը, որ ասումէին ինձ Էլբայի դիրքը։» Էլբա — այնու ամենայնիւ — Էլբա։ Եւ մի սրաթափիչ խորհուրդ փայլատակեց նորա սրտի մէջ. այսպէս, կայսրի պատուանունը վերան, գնաց նա որպէս իշխան դէպ ի Էլբա, որ իբրև փոխարէն իւր հսկայական հոգու այնքան աշխարհասասան կռիւների ստանայ վերջապէս ծիծաղելի իշխանութիւնը մի փոքրիկ կղզու։

20-ին ապրիլի 1814 Թուականի Նապոլէոնը հրաժարական ողջոյն տուեց իւր պահապան զօրքին. Թող ներեն մեզ յիշատակել այս տեղ հին ու ծանօթ բաներ. շատ քաղցր է վերստին կենդանացնել իւր մէջ մի անսովոր մեծ մարդու պատկեր, մանաւանդ դորա կործանմանից յետոյ. որովհետև մի այդպիսի տեսարանի հանդէպ բարձրանալով հոգին սկսանումէ առաւել իմաստուն աչքով նկատել կեանքը և նորա յաւիտենական կարգը: Երբ որ փոքրիկ մարդեր կործանվումեն մեծամեծների բարձրութենից ուր հասուցած էր նորանց ոչ թէ իւրեանց յատուկ և սեփական զօրութիւնը, այլ միայն ժամանակի տկարութիւնը, այն տեղ վերջանումէ ամենայն զարհուրանք, բայց չկայ ոչինչ ողբերգական բան: Գուցէ թէ Նապոլէոնի վերջը է ամենամեծ ողբերգութիւնը համաշխարհական պատմութեան մէջ:

Ի՛նչ ասաց այս մարդը, երբ որ հրաժարվումէր իւր պահապան զօրքից, այսինքն իւր պատերազմական վաստակաւորութենից. Նորա խօսքերը մի արժանայիշատակ կերպով խառնած ու հիւսած են ճշմարտութենից և խաբէութենից, քաղաքական խորամանկութենից և քաղցրը կեղծաւորութենից: Նորա հրաժարական ողջոյնի բոլոր հանդէսը շատ քաջ նկարագրումէ նորա բնաւորութիւնը, ըստ որում ամենևին թէատրոնական է: Առ հասարակ Նապոլէոնի վերայ շողշողումէ աւելի թէատրոնական փառահեղութիւն և բեմական ոսկենկար ծաղիկներ քան թէ Ալէքսանդր Մակեդոնացու և հռոմէական Պոմպէոսի վերայ: — «Հաւատարի՛մ կացէք ձեր նոր Թագաւորին, որ Ֆրանսիան ընտրել է իւր համար» — ասաց նա իւր արտասուող պահապան զինուորներին. — «անտես մի՛ արէք մեր Թանգագին, այդքան երկար վատաբաղդ հայրենիքը. մի՛ լացէք իմ վախճանի վերայ. ես միշտ երջանիկ կը լինիմ, եթէ գիտէի որ և դուք էիք: Ես կարող էի մեռանել — ոչինչ այնքան հեշտ չէր ինձ. բայց ես կամիմ առանց դադարելու հետևել պատուի շաւղին: Դեռ ևս մնումէ ինձ գրելու ինչ որ մեք արած էինք: Ես չեմ կարող գրկախառնել ձեզ բոլորիդ, բայց կը գրկախառնեմ ձեր զօրապետը: Արի՛, զօրապետ . . . (Նա գրկախառնումէ գեներալ Պետիտը): Բերեցէք այս տեղ արծիւը (դրօշակը).» Նա համբուրումէ արծիւը, և ասումէ. «պատուական արծիւ. Թող այս համբոյրքը զգան իւրեանց սրտի մէջ բոլոր քաջ զինուորները . . . բարեաւ մնացէք իմ մանուկներ . . . իմ աղօթքս և խնդրուածքս միշտ լինելու են ձեզ ճանապարհակից . . . պահեցէք իմ յիշատակը:»

Նապոլէոնը մի թշուառ կերպարանքով Պրովանսացոց դարանագործութենից ազատվելով, 27-ին ապրիլի հասանումէ Ֆրէյուս նաւահանգստին, յետ վազելով իւր բաղդի յատուկ ճանապարհը: Այն ճա-

նապարհը, որի վերայ միանգամ Եգիպտոսի կողմից թռչելով անցել էր, կատարեց նա այժմ փոստիլիոնի և ծառայի կերպարանքով։

Նաւահանգստումը դրած էին պատրաստ մի ֆրանսիական և մի անգլիական նաւ․ Նա ընտրեց անգլիականը․ 3-ին մայիսի ցամաք դուրս եկաւ նա Պօրտօ-ֆերրայիօ Էլբայի վերայ․ 7 տարի յետոյ նոյն իսկ օրին պիտոյ էր նորան մեռանել Սանտ-Հելենա փոքրիկ կղզումը, որի անունը հազիւ թէ լսած էր։

Երեկոյի 6 ժամն էր, մի հարաւային գեղեցիկ օր։ Էլբայի ժողովուրդը, նորա հպատակքը, կանգնած էր նաւահանգստի պարսպի վերայ։ Աղքատ մարդիկ, ոչխարի բուրդից շինած բաճկոններով, փրիւգեան գդակը ձեռքին, զարմացած նայումէին վախկոտութեամբ և նորասիրութեամբ այն մեծ տղամարդի վերայ, որ հնազանդեցուցել էր աշխարհը և բաշխել էր սորան նորան երկիրներ և թագեր, ինչպէս միւս թագաւորները ոսկի մատանիք ու մեծարական խաչեր էին բաշխում։ Նոքա նայումէին Նապոլէոնի վերայ որպէս իւրեանց սեփական իշխանի, որպէս Էլբայի թագաւորի վերայ։ Մի ընկերութիւն երաժիշտների կատարումէր նուագածութիւն որպէս թէ մի հովուական թէատրոնի համար․ Նապոլէոնը բոլոր գիշերը մնաց նաւի վերայ, այն փոքրիկ նաւահանգստումը։ Ինչպէս պիտոյ էր նորան զգալ իւր անձը նեղի մէջ այս շրջափակած խորշումը, որ ապառաժեայ սարերի մէջ բանտարկված էր։

Երբ որ նա ոտք կոխեց ցամաքի վերայ, ընդունեց նորան Դալեսմը ֆրանսիացին, որ մինչև այն միջոցը եղած էր Էլբայի կուսակալ։ Սորան ծանուցել էր Նապոլէոնը իւր գալուստը, գրելով այսպէս․ «Պարոն գեներալ, ես իմ իրաւունքից հրաժարվել եմ հայրենիքի համար, պահելով ինձ Էլբա կղզու սեփականութիւնը և իշխանութիւնը․ յայտնեցէք բնակիչներին, թէ ես նոցա կղզին ընտրել եմ ինձ կացութեան տեղ, թէ ես միշտ ունիմ առ ի սրտէ հոգաբարձու լինել նոցա երջանկութեանը։»

Այս թուղթը հնչումէ որպէս իւր յատուկ մահու դատակնիքը, որ ստորագրեց Նապոլէոն — այնուհետև պիտոյ է Էլբա կղզին լինէր նորա ջերմ հոգաբարձութեան առարկան․ մի կտոր հող փոխանակ մի ամբողջ աշխարհի։

Պօրտօ-ֆերրայիօյի քաղաքապետը և աւագանին (մեծամեծքը) ներկայացան, մատուցանելով քաղաքի բանալիքը․ Թագաւորը ընդունեց նորանց։ Սա էր մի և նոյն հանդէսը որ այնքան յաճախ տեսած էր նա իւր կեանքի մէջ, Բերլինի, Վիեննայի, Դրեզդնի, Մայլանդի, Մադրիդի, Մոսկվայի դարպասի առաջև — միայն թէ հանդիսական խաղարկու-

քը այլ մարդիկ էին դարձել․․․ մի չքաւոր կակաղող քաղաքապետ Պորտո-Ֆերրայիօյից և քանի մեծամեծք այն փոքրիկ քաղաքից։

Նապոլէոնը տեղաւորւեցաւ կուսակալի օթևանումը, և այս է ահա այն կայսերական ապարանքը այն փոքրիկ թնդանօթաձգարդ այգով և փոքրիկ ծաղկատունկերով։ Նա անյապաղ սկսեց նորոգել այս շինութիւնը։ Ես տեսայ այս տեղ մի գեղեցիկ սեղանատուն և մօտ 10 մինչև 12 բնակելի մեծ ու փոքր սենակներ, ուր այժմուս բնակւումէ քաղաքի ամրոցի կուսակալը։ Նապոլէոնի փոքրիկ ննջարանի մէջ պատերի վերայ կախած են պղնձաքանդակ պատկերներ, որ ցուցանումէին եգիպտոսեան պատերազմի հանդէսները, և նորա աշխատութեան սենեկումը դրած կայ դեռ ևս նորա գրութեան սեղանը։ Այս էր կայսրի տուիլըրեան ամրոցը, նորա իշխանութեան փոքրաձև պատկերը, ինչպէս որ նոյն ինքն Էլբան, և այս համեմատութեամբ փոքր էր նոյնպէս նորա պալատը։ Ապարանքի մեծ մարշալ էր կոմս Բերտրանը․ կոմս Կամբրոննը, թնդանօթական զօրապետ Դրուօն և միւսեր բաղկացնումէին պալատի ընկերութիւնը, որ իւր բոլոր տնտեսութեան մէջ հաշւումէր 35 պատուանունաւոր կայսերական պաշտօնեայք։

Արդարև կացութիւնը Էլբայի մէջ այնպէս էր, ինչպէս շինական ամարանոցի զբօսանքը մի հոռմէական կայսրի, որ հեռանալով մեծահարկի պալատական կեանքի ստիպողական արարողութեններից մայրաքաղաքումը, մի քանի մտերիմ մարդերով և սպասաւորներով գնումէ հովութիւն ու հանգիստ վայելելու դէպ ի Անցիում կամ թէ Բայիէ։ Բայց ոչ, այս շինական օդը Էլբայի էր գուցէ թէ մի աւելի ճնշող բանտարկութիւն Նապոլէոնի սրտի համար, քան թէ օդը այն Սանտ-Հելենայի լեռնակոշտի վերայ, որի վերայ կատարեալ անձնուրացութեամբ ոտք կոխեց նա։

Նապոլէոնին որպէս թէ խաղալիք թողած էին 700 մարդ պահապան զօրք և մօտ 80 մարդ ձիաւոր։ Այժմ պատկերացուցէք ձեզ մտքով այս փոքրիկ գունդը հին զինուորների հաւաքված մի տեղ, որպէս թէ նաւաբեկութեամբ դուրս էին ձգած մի կղզու վերայ, և այն տեղ, ծովեզերեայքումը հանգստացած էին։ Ով որ ականջ էր դնում այն զրոյցներին, որ տալիս էին միմեանց հետ այս խոշոր մարդիկը, Ֆրանսիացիք, Կորսիկացիք, Իտալացիք, Պոլոնացիք, կարող էր ամենազարմանալի բաներ լսել, և կէս աշխարհի պատկերներ պիտոյ է անցանէին նորա աչքի մօտից, Եգիպտոսի բրգունքը, Ռուսաստանի ահաւոր սառնապատ դաշտերը, Շվէցիայի Ալպերը, Լէյպցիգ, Մարենգօ, Աւստերլիցի արևը, Էյլաու և միւս այլ բաներ շատ — անուններ, ինչպէս Նէյ — ո՜վ, և Նէյ․ այդ ցաւելի է — Մարմօն — Բեռնադօտտէ, այս զայ-

րացնում պատերազմողների ծեր սիրտը — ուխտաղանց փառաւոր Մուրատը։ Ի՞նչ եղաւ այս Մուրատը. ո՞վ. Նա այն տեղ է Իտալիայումը, դեռ ևս արքայ։ Եթէ մի նաւ երկու, երեք օր ճանապարհ կատարէ, այնուհետև կարելի էր ողջունել դորան «Pazienza» (համբերութիւն), ասում Իտալացին — «Vive l'empereur !» (կեցցէ՛ կայսրը) — ձայն է արձակում Ֆրանսիացին։ — «Դեռ ևս ոչինչ կորած չէ», — ասում Պոլոնացին։ — Երբեմն լինում պատերազմական վարժութիւն, կայսրը մոռացել չէ իւր արուեստը. փառաւորապէս թնդանօթներ են արձակում, բայց թնդանօթքը գոռումեն միայն օդի մէջ. մի անախորժ բան. սա մի վատ նուագածութիւն է։

Պիտոյ է մի ձեռնարկութիւն յառաջ տանել։ Էլբայի կայսրը կամենումէր իւր նոր թագաւորութեանը անյապաղ ծանօթանալ և մի անգլիական ուղեկից Նիլ Քամբել անուն առած իւր հետ, ման եկաւ կղզու մէջ։ Կարծումեն, թէ նա երկիւղից, մի՛ գուցէ որ դարանագործութեամբ սպանվի, առած է իւր հետ Քամբելլին և զինաւորներ։ Պատճառ, նա երկիւղ ունէր մանաւանդ թէ մօտակայ Կորսիկայի կուսակալից Բոխլար անունով, որ յառաջուց եղած էր Շուանների (*) գլխաւոր, և բարեկամ Գէորգ Կադուդալի, և այժմ հրամանակալ էր Կորսիկայի, ասես թէ Նապոլէոնի սիրտը վշտացնելու համար։ Մի քանի օրի մէջ կայսրը խելամուտ եղաւ, որ նորա թագաւորութիւնը մեծ չէ. բայց նա յղացել էր իւր մտքումը շինել կղզին, ճանապարհներ, ջրմուղներ և առաւել լաւ կարգեր պատրաստել։ Նա կամենումէր այս փոքրիկ Էլբան կայսերավայել կերպով վայելչացնել, ինչպէս երբեմն Տիբերիոս գեղեցկացուցած էր Կապրի կղզին։ Նորա անհանգիստ հոգին ծարաւի էր զբաղման և գործակալութեան, և պիտոյ է ժամանակը մի բանի վերայ անցուցանվէր։

Նապոլէոնը փոքրիկ Էլբա կղզու վերայ շէնքեր գործելով և ճանապարհներ բանալով սարերի միջից երևում մեզ մի խոր մտախոհ մարդ, որ գծագրում աւազի մէջ ձևեր և գծեր. դա է մի Ֆրիդրիկոս մեծ, որ անյաջող գտանվելով կռուի մէջ, նստած էր մի ջրհորի փողովակի վերայ և գաւազանովը փորումէր հողը իւր առաջև։

(*) Շուանք (Chouans) ասվումէին Ֆրանսիական ռեվօլիւցիայի միջոցին աղմկարար և աւազակաբարոյ բնակիչքը Լօար գետի աջակողման եզրի սահմանումը, որ թէև կամենումէին միաւորվել Վենդէի հետ և կեղծաւորվումէին որպէս թէ կռուումէին կրօնի և թագաւորութեան օգտի համար, բայց նոցա խորհուրդը էր միայն սպանողութիւն և յափշտակութիւն։ Նոցա գլխաւոր առաջնորդների մինը էր Կորմատէն։ Գեներալ Հօշէն էր վերջապէս, որ վախճան դրեց այս կորստաբեր խռովութեանը 1796 թուականին։

Նապոլէոնի աչքը ընկաւ փոքրիկ քարաժայռեայ Պալմարօլայի վերայ. 40 մարդ իւր պահապան զինուորներից ուղարկեց այդ կղզուն տիրապետելու, և այս բանին ոչ ոք չընդդիմացաւ, որովհետև ոչ ոք բնակում չէր այն տեղ։ Հին օրերի զօրականքը անյապաղ առան կղզին, կառուցին այն տեղ մի աշտարակ, ուրեմն և մեծացուցել էին Էլբայի սահմանը։

Նաև այն փոքրիկ անապատ կղզին Պիանօզա, ուր մի ժամանակ Օգոստոս աքսորել էր իւր թոռն Ագրիպպա Պոստումոսին, որ Տիբերիոսը մի փոքր յետոյ հրամայեց խեղդամահ անել ուղարկած սպանողների ձեռքով, վեր կալաւ Նապոլէոնը և ամրացրեց նորան պարսպով, գուցէ թէ սիրտը գրաւելով այն հին հռոմէական կայսրների անուններով, կամ թէ այն տրտում վախճանից Ագրիպպայի, որի հետ համեմատումէր իւր սեփական վերջը։

Նա շինեց շտեմարաններ, ծովեզերեայ պարիսպներ, մի քանի ախոռներ ձիաների, մի ջրմուղ, մի հիւանդանոց, այո և փոքրիկ թէատրոնը Պորտո-Ֆերրայիօյի մէջ, ուր ունէր նաև իւր կայսերական նստարանը, ինչպէս Փարիզի մէջ։ Իւր համար, քաղաքից դուրս շինել էր մի ամարանոց։ Ծովախորշից դէպ ի աջ տանումէ դէպ ի այս Վերսայլը Էլբայի Նապոլէոնի ձեռքով շինած ճանապարհը։ Այս տեղ ոտով կամ ձիով սիրումէր գալ կայսրը և շատ անգամ խօսակից էր լինում շինական մարդերի հետ, որ անցանումէին ճանապարհից վարելով իւրեանց առաջև, իւրեանց պտուղներով բեռնաւորված էշերը։ Այն ձորը, որի մէջ դրած է այս ամարանոցը Դի Սան Մարտինօ անունով, որ և, ինչպէս պատմումեն, Սկիպիոն Նասիքան ունէր ժամանակով մի ապարանք, շատ զմայլեցուցիչ է։ Դա ամփոփած է մեծավայելուչ սարերի գոգում, որ բարձրանումեն դէպ ի Կորսիկեան կղզին։ Մի առու օձապտոյտ ոլորվումէ կանաչ ձորի միջով. երկու կողմից զեղխ առատութիւն ծառատունկերի, շատ ամարանոցներ ցիր ու ցան կանաչի մէջ, և, ինչքան հեռի կարող էր միայն հասանել աչքը, լի ու առատ գինի սև ուռուցահատիկ խաղողից, որպէս թէ դու կանգնած էիր այս տեղ Նէապօլիայի Կամպանիա Ֆելիչէ անուն սահմանումը։ Ով որ ունի գոհունակ սիրտ, կարող է այն տեղ երջանկապէս ապրել։ Բոլոր տարին ծաղկումէ վարդ գինու բաժակը պսակելու համար, և պատատուկ գլուխը զարդարելու։ Օդերը մեղմ ու համեմայն են, և ուր բացվումէ ձորը դէպ Պորտո-Ֆերրայիօ, այն տեղ ճառագայթանումէ աչքի հանդէպ ջրախորշը և Տոսկանեան ծովի հեռաւորութիւնը։

Նապոլէոնի ամարանոցը այժմուս պատկանումէ Դեմիդով իշխանին։ Այս ռուսազգի կրեսոսը կամենումէ շինել և յօրինել նորան մի

Նապոլէոնեան թանգարան. սա պիտոյ է մի փառաւոր բան դառնայ մարմարինեայ սիւնազարդ սրահներով և կախարդական դահլիճներով, ուր պիտոյ է պատերի վերայ տեսանելի լինին կայսրի բոլոր գործերը թաց ծեփի վերայ նկարած։ Ինքը Նապոլէոնը որ նարնջենիքը ամարանոցի հողաբլուրի չորս կողմով տնկած էր, բաւականացաւ նկարազարդել տալով սեղանատունը Եգիպտացի ոճով։ Եգիպտոսի յիշատակը, ինչպէս երևումէ, առաւել սիրելի էր նորան իւր կեանքումը առ հասարակ. պատճառ, դա էր նորա հերոսական մանկութեան առաւել գերօրինակ և առաւել քաղցր պատմական գործողութիւնը։ Այսօր իշխան Դեմիդովը հաւաքել է ամենայն տեսակ նշխարներ (հատուկտոր բաներ), որ յարակցութիւն ունէին Նապոլէոնի պատմութեան հետ, և նորան դասաւորելու է Սան-Մարտինոյի սենեակների մէջ։ Մի կենդանի նշխար, Նապոլէոնից մնացած, որ եղած է իշխան Դեմիդովի ձեռքում, չէ դնելու այս ամարանոցի մէջ, որովհետև, ինչպէս ասումեն, լաւ չէ վարվել նորա հետ. այսինքն իւր առաջին ամուսինը Մաթիլդէ Բօնապարտէ, դուստր իշխանութենից ձգած Ժերոմի. մի նշխար Վեստֆալիայից։

Երբ որ այս բոլոր նշխարները կարգադրած կը լինին, ասացին ինձ ամարանոցի աշխատաւորքը, այնուհետև իշխան Դեմիդովը իւր ծախքով ամենայն ուրբաթ օր մի շոգենաւ ուղարկելու է Լիվօռնօ քաղաքից դէպ Պորտօ-Ֆերրայիօ, և ապա բոլոր աշխարհը գալու է այս տեղ տեսանելու այս գեղեցիկ առարկայքը։ Բայց այժմ ոչ ում համարձակութիւն չկայ ներս մտանել, և այս պատուէրը գրած է զգուշացուցիչ տախտակի վերայ։ Եւ այսպէս չկարողացայ ես, ասումէ ճանապարհորդը, ներս մտանել Նապոլէոնի փոքրիկ, համեստ ամարանոցի մէջ։

Երբ որ ես վերադարձայ դէպ ի Պորտօ-Ֆերրայիօ, իմ տհաճութիւնս մխիթարվեցաւ գեղեցիկ լուսնակ գիշերի փայլողութեամբ, որ շատ բաներ գիտէ պատմել։ Աւերակներ որպէս և ամենայն տեսակ յիշատակարաններ առաւել լաւ կարելի է նկատել և մտածել լուսնի փայլողութեան տակ. լուսնի երկդիմի լուսի կախարդիչ փայլողութիւնը այնքան համաձայն էր բոլոր անցաւոր բաների հետ։

Կարելի՞ է սիրել Նապոլէոնին. կարօ՞ղ էր հազար տարուց յետոյ մի մարդկային սիրտ իւր կեանքի որ և իցէ ասպարէզի մէջ մտաբերելով նորան շարժվիլ դէպ ի քաղցր ցաւակցութեան արտասուք. չգիտեմ ես։

Պատմութեան մէջ կայ մի մեծ անուն որ կիսով չափ հնչումէր որպէս Նապոլէոն. նա ասվումէ Տիմոլէոն։ Ես խոստովանումեմ, որ այս մարդու յիշատակը ճնշել է իմ աչքերից սիրու արտասուք, երբ որ ես Սիրակուսի թէատրոնումը մտաբերեցի նորան։ Ի՞նչպէս պիտոյ է

Նապոլէոնը երկիւղ ունեցած լինէր սորանից, որ խորին արհամարհութեամբ ուղարկած կը լինէր նորան դէպ ի Կորինթոս, ինչպէս արած է Դիոնիսիոս բռնակալի հետ: Ուրիշ ժամանակներ, ուրիշ տեսակ մեծ մարդիկ: Նապոլէոնը իւր մանկութեան օրերումը հիացութեամբ սիրումէր Պլուտարքի նկարագրած հոյակապ մարդը. բայց երբ որ ինքը կայսր դարձաւ, դառնութեամբ յանդիմանումէր Տակիտոս պատմաբանին և գովասանութեան ճառ էր ասում Տիբերիոսի վերայ:

Նապոլէոնին այնքան յաճախ համեմատած են կալանաւոր Պրոմեթէոսի հետ, որ այս պատկերը դարձել է արդէն մի մաշած կտրատած ոճ խօսքի. այնու ամենայնիւ դա շատ պատկանաւոր է այս աքսորված հերոսին, որ կարողացաւ Եւրոպայի շղթայքը պատառել, մինչև զօրութիւն ու բռնութիւն անլուծանելի անդամանդեայ շղթաներով կռանեցին նորան Սանտ-Հելենայի ապառաժի վերայ: Բլիւխեր և Վելլինգտօն պիտոյ է յաղթահարէին այս մեծահանճար մարդը, որպէս զօրութիւն ու բռնութիւն յարձակվելով այս կիսաստուածի վերայ: Հուսարների զօրապետ Բլիւխերը ճակատագրի ձեռքումը գործ դրած որպէս հնարք գահավէժ առնելու մի Նապոլէոն, կամ թէ, խօսենք մի փոքր պարզ ոճով, «ջարդելու» նորան. պատճառ, ի՞նչ միւս բան կարող էր մի քաջ մարդ, ինչպէս Բլիւխերն էր, քան թէ օրինաւոր ջարդել... այս մի դառն արհամարհութիւն էր: Բայց բնութիւնը գործ է դնում ամենամեծ զօրութիւնքը, երբ որ կամենումէ մի բան գոյացնել և կերպարանագործել, իսկ ամենաչնչին հնարներ, եթէ կամենումէ նա գլխաւորել և ոչնչացնել:

Արդարև, Նապոլէոնի համար պիտոյ է այն շաբաթները որ անցուց նա Եւրոպայումը, երևէին տարեչափ շաբաթներ. նա յաճախ դառնապէս գանգատումէր Քամբելլին, և մանաւանդ որ խլած էին նորանից իւր սիրելի կին ու զաւակը, նա զուրկ էր այն շնորհից որ աքսորականներից ամենաթշուառին ևս ցուցած էին մարդասիրութեան պատճառով:

Նորա մայր Լէտիցիան եկաւ ամառան միջոցին. Լետիցիա Ռամօլինօն ի՞նչ դրութեան մէջ գտաւ իւր որդին. Բաղդի բարձրութենից ցած էր կործանվել և մայրական սիրտը, բայց ամուր էր դա և չը կոտրվեցաւ — Ժօզեֆինայի սիրտը կոտրված էր. 30 օր Նապոլէոնի առաջին գահավիժութենից յետոյ մեռաւ նա Մալմէզօնումը. և Պաւլինէ Բորգեզէ քոյրը Նապոլէոնի եկաւ այս տեղ, նա, այն նոր Հելենան աշխարհի, այն գեղեցիկ քաջալնուհին, որի ոտքումը թագապսակ իշխաններ թափած էին, այժմ անյայտ ու անծանօթ ընկած էր Եւրոպայի ամարանոցի մէջ:

Խորհրդաւոր անձինք շատ գալիս ու գնումէին. կղզու եօթն փոքրիկ նաւահանգիստները երբէք տեսած չէին այսքան անց ու դարձ առնող մարդիկ։ 9 ամսի մէջ 1,200 նաւ ներս էին վազել և 800 Իտալացիք և 600 Անգլիացիք եկած էին Էլբայի աքսորականը տեսանելու համար. եկաւորների մէջ շատերը էին զինուորական պաշտօնակալք իտալական, անգլիական, ֆրանսիական ձևաւոր հագուստով, երբեմն Մարսէյլից, Կորսիկայից, երբեմն Գենուայից և Լիվօռնօյից կամ Նէապօլսից, Չիվիտա Վէքքիայից և Պիօմբինօյից։ Ամենեցուն հետ խօսակից եղաւ Նապոլէոնը հոգելից և հանճարեղ կերպով և առիթ տուեց ամեն մինին տեղեկութիւն տալ նորան իւր հայրենի աշխարհի կամ ցամաքահողի դրութեան մասին։

Մի օր եկաւ Պօրտօ-Ֆէրրայիօ մի օտարական կին, բերելով իւր հետ մի փոքրիկ երեխայ։ Կայսրը ընդունեց նորան հաճութեամբ, բայց խորհրդաւոր կերպով։ Շինական ամարանոցի մէջ բնակութիւն ստացաւ նա, և մի քանի օրից յետոյ, երեխայի հետ միասին, չքացաւ դէպ ի Իտալիա, այնպէս գաղտնածածուկ կերպով, ինչպէս եկած էր։ Այս բանը տեղիք տուեց ամենայն տեսակ զրոյցների. սակաւք միայն գիտէին, թէ ով էր այդ կինը, բայց դա չէր կարողացել անտեսանելի մնալ աչքերին. պատճառ, հեշտ կարելի պատկերացնել մտքով, որ Նապոլէոնը Էլբայի մէջ մի արժանի ուշադրութեան մարդ էր, որ մի փոքրիկ գաւառական քաղաքում կենումէ և ամենների աչքը դարձուցած է նորա վերայ և ամենայն լեզու խօսումէ նորա վերայ։ Այն օտարական կինը էր մի պօլօնական կոմսուհի, երեխան Նապոլէոնի զաւակն էր, մի քնքուշ սիրողական ժամի պտուղ, խոշոր Պօլօնիայի մէջ։ Ես չը գիտեմ թէ այդ երեխայի գլխի անցքերը ինչպէս են եղած այնուհետև, բայց կարծեմ որ այդ մանուկը 1852 թուականին, դեկտ. ամսումը որպէս Ֆրանսիայի պաշտօնական պատգամաւոր, երևեցաւ Անգլիայի թագուհու Վիկտորիայի առաջև և յայտնեց նորան թէ աշխարհի կշիռը, միտ չը դնելով ոչ Էլբային և ոչ Սանտ-Հելենային, կրկին անգամ դարձել է դէպ ի Բօնապարտեան կողմը և հասել է ահա մի երկրորդ երկաթի դար, ըստ որում 8 միլիօն Ֆրանսիացիք, Հօլլանդիայի աթոռից վայր ձգած թագաւորի որդին, Լուդովիկոս Բօնապարտէն, քարոզել էին կայսր։

Սա մի երազ է։ Աշխարհը երազ է տեսանում, ինչպէս առանձնական մարդը, երբեմն հին սիրու անցքեր և վաղաժամանակեայ դիպուածներ պատկերանումեն նորա հոգու մէջ։ 1852 թուականին տեսաւ նա երազի մէջ Նապոլէոնին։

Մինչև այս բաները լինումէին, Նապոլէոնը Էլբայի մէջ հանգիստ ու դադար չունէր այս և այն երբեմն ծանօթ ու սիրելի եղած կանան-

ցից։ Բոլոր Իտալիայի մէջ խօսումէին այն մասին, թէ մի մանկամարդ կին Վանդօնէ անունով գրաւել է նորա սիրտը, թէ Նապոլէոնը քաղցր ժամերի մէջ ընդունումէր նորան թէ ամարանոցի և թէ իւր ապարանքի մէջ. այո թէ այս կինը յղացած է արդէն Նապոլէոնից, և պարծենումէ նորանով, որ իւր արգանդումը կրումէր մի Նապոլէոնեան մանուկ։ Այս մանկամարդ կինը էր Էլբայի կալուածատիրոջ աղջիկ, որի հայրը մի ժամանակ եղած է քաղաքապետ Պորտօ-Ֆերրայիօյի մէջ. սա էր դարձեալ քեռի մի լիվօռնացի Կոռնելիօ Ֆիլլիպպի պարոնի. բայց սորա քոյրը էր մի ճշմարիտ Մեսալինա, հրապարակական հոմանի անգլիացի Գրանտի, որ վաճառական էր Լիվօռնօյի մէջ. և այս Գրանտը էր դարձեալ մի կատաղի թշնամի Նապոլէոնի և կամակից ու օգնական լրտես Ջիուստինիան և այլն։ Ահա մի խայտառակութեան պատմութիւն Էլբայից։

Սակայն սկսեց արծաթը պակասել Էլբայի մէջ. Նապոլէոնի եկամուտքը հասանումէին հազիւ թէ 400,000 ֆրանկի (100,000 մանէթ արծ.)։ Պատճառ, ինչ որ Ֆօնտենէբլօյեան պայմանագրի զօրութեամբ ունէր նա ստանալի, այսինքն մի տարեկան թոշակ 2,500,000 ֆրանկ, չվճարեց Ֆրանսիան, անտես առնելով միջեալ պայմանադրութիւնը։ Կայսրը բողոքեց, և Լորդ Քաստլերէգը յորդորեց նորա համար, բայց ֆրանսիական կառավարութիւնը դանդաղկոտ գտանվեցաւ և ոչինչ չը վճարեց։ Նա, որպէս հաւանական է, գուշակեց, թէ աքսորականը կարող էր նորա արծաթը գործ դնել մի քաղաքական համարձակ ձեռնարկութեան վերայ. գոնեայ երկիւղ ունէին, մի՛ գուցէ արշաւէ նա Իտալիայի վերայ, բայց ոչ ոք կարող չէր և մտքից անցուցանել, թէ կայսրը փորձելու է դէպ ի ցամաք դուրս գալ ֆրանսիական հողի վերայ։

Այս տեղ Էլբայի մէջ, Ֆրանսիայի և Իտալիայի անմիջական մօտակայքումը, պիտոյ է գահավէժ արած կայսրի հոգումն որպէս թէ ինքն ըստ ինքեան պատկերանային այդ երկու աշխարհքը իբրև մի կարելի վերանորոգութեան ասպարէզք։ Ի՛նչպէս պիտոյ է նա սոյն այս այգու, այս առանձնարանի և այն ամարանոցի մէջ վեր ի վայր շրջած լինի, ձեռքերը քամակի վերայ և կշռի թաթի մէջ կշռած լինի այս տեղ Ֆրանսիան, այն տեղ Իտալիան, այս տեղ մի հին, ունեցած ասպարէզի կամ թագաւորութեան նորոգութիւն, այն տեղ մի ամենևին նոր ասպարէզ, մի ամենևին նոր, դեռ ևս հիմնարկելի միապետութիւն։

Այս տեղ մի փոքր դադար առնունք. պատճառ, այս տեղ է մի խորհրդաւոր ժամանակակէտ Նապոլէոնի պատմութեան մէջ, որ ունի մի անսովոր գրաւիչ բան մարդկային երևակայութեան համար, ինչպէս ամենայն կարելի բան որ ունէր հօյակապ հետևանքներ։ Մի վայրկեան

միջոց, կարելի է ասել, շրջում էր Իտալիայի վերայ մի անկշռելի ապագայքի հոգի, երբ որ Նապոլէոնը նստած էր Էլբայի մէջ։

Պատճառ, ի՛նչ բաներ պիտոյ է ծնանէին, եթէ այս տղամարդը յանկարծակի հրաժարվելով իւր ուղղութենից դէպ ի Ֆրանսիա, կամեցած լինէր, ինքն գոլով Իտալացի, դուրս երեւել Իտալիայի մէջ մի նոր կերպարանքով, որպէս կարգադրող և միաւորող այս գեղեցիկ աշխարհներին, որպէս հռոմէական իտալական կայսր աշխարհաքաղաք Հռոմի մէջ, Կապիտոլիոնի վերայ։

Տարակուսելի չէ, որ մի այսպիսի խորհուրդ յղացած էր Նապոլէոնի սրտումը․ բայց թէ ինքն Նապոլէոնը որպիսի հաղորդակցութիւնք ունէր իտալական տէրութիւնների միաւորութեան գործակատարների հետ, որ ունէին իւրեանց կենտրոնը Տուրինի մէջ, դժուար է ստուգել, թէև շատ բան յայտնի էին կացուցած։ Այն առաջարկութիւնը որով պիտոյ է հաստատվէր Հռոմի մէջ մի փոխանորդական կայսերութիւն, որի գլխաւորը լինելու էր Նապոլէոն, ինչպէս որ այդ բանը Իտալիայի միութեանը ցանկացողների գլխումը ծնած էր, ունի այսօր մի աւելի օտարոտի հնչիւն, քան թէ երբեմն, 1814 թուականին պիտոյ է ունենար, երբ որ աշխարհասահմանք ու թագաւորութիւնք ասես թէ մկրատով ձեւվում էին։ Ուրեմն Նապոլէոնը պիտոյ է հռոմէական կայսր լինէր, Սարդինիայի և Նէապօլիտանիայի թագաւորքը պիտոյ է արծաթով փոխարէն ստանային, Իտալիայի մայրաքաղաքները Մայլանդ, Վենետիկ, Ֆլօրենտ, Նէապօլիս, իւրեանց տեղական հայրենասիրութիւնը լցուցանելու համար, պիտոյ է շինվէին փոխարքայութիւնք, ազգային ժողովը պիտոյ է փոխէր իւր տեղը։ Պապը քարոզվում էր որպէս մի ցնորք, որ մէջից վերացնելի էր։ Այս էր Իտալական առաջարկութիւնը, որի իրագործութեան համար պիտոյ է սպասաւորէր մի պատերազմ։ Պատճառ, Յովակիմ Մուրատը, այն ժամանակին լինելով դեռ եւս Նէապօլիտանիայի արքայ, պիտոյ է պատերազմ բանար Ֆրանսիայի հետ և այն րոպէին, երբ երկու կողմի զօրքերը ճակատ էին տալու միմեանց, պիտոյ է Նապոլէոնը երեւէր, որ և անպատճառ տիրապետած կը լինէր երկու զօրքերին, միաւորած կը լինէր Իտալիան և ստիպած կը լինէր Ֆրանսիայի Բուրբօնքը խոստովանել նորան կայսր։

Բայց հերիք են այս ճռացածին առասպելքը․ Նապոլէոնը տեղիք տալով գոցա, պահում էր Իտալիան ակնկալութենների մէջ․ և արդարև, եթէ նա ցամաք դուրս եկած լինէր դէպ ի այդ կիսակղզին, ամէն բան ձգելու էր պտոյտքի ու զինաշարժութեան մէջ։ Անտարակոյս ներս ընկած կը լինէր նա Իտալիայի մէջ, երբ որ Ֆրանսիան չէր ցուցանում նորան ոչինչ յուսալի բան։ Բայց ինչ որ նորա գործակալքը այն տե-

ղից յայտնում էին նորան, ցոյց տուեց նորան պայծառապէս, որ հարկաւոր էր միայն Նապոլէոնին ցամաք դուրս գալ ֆրանսիական հողի վերայ, և Բուրբոնեանց վերստին նորոգված իշխանութիւնը իսկոյն ցիր ու ցան կը լինի մառախուղի պէս։

Այս միջոցին ապրում էին Էլբայի ապարանքի մէջ անմեղ ուրախութիւններով. Պաւլինէն, հասարակութեան շարժիչ հոգին, երբեմն կատարում էր տօնախմբութիւնք։ Բայց արծաթը խնայելու համար, սահմանի տակ դրվեցաւ տնտեսութեան ծախքը, և ինչ ինչ շինութեան դիտաւորութիւնք կարճվեցան, այժ և մի թնդանօթական պատրաստութիւն վաճառվեցաւ։ Կայսրը թաղված էր թղթերի, լրագրերի, օրագրերի և յայտարարութենների մէջ։ Նորա փոքրիկ առանձնարանի մէջ Էլբայում երևում էր նոյն տեսարանը, որպիսի եղած էր նորա առանձնարանի մէջ Տուիլըրեան ապարանքում. այնու ամենայնիւ այս տղամարդը մի և նոյն Նապոլէոնն էր, որ հսկայաձև խորհուրդներ, կռիւների առաջարկութիւններ, աշխարհասասան մտածութիւններ թաւալեցնում էր իւր հոգու մէջ։

Այսպէս ահա նստած էր նա Պորտո-Ֆերրայիօյի կառավարութեան բնակարանում, որի վերայից փողփողում էր միայն Էլբայի համեստ դրօշակը սպիտակ ու ծիրանի և կայսերական մեղուներով, երբ որ նոյն միջոցին վեհապատիւ քաղաքագէտքը նստած էին Վիեննայում ժողոված, Եւրոպայի բոլոր կարողութիւնքը կանաչ սեղանների քամակում հազար գրիչներ ու լեզուներ շարժեցնելով, բոլոր աշխարհը դառնալով մի լոկ դիւանական արձանագրութիւն և մի լոկ պատգամաւորական բանախօսութիւն, և այս բոլորը այն փոքրիկ մարդու պատճառով Էլբայի մէջ։ Սա հանդարտ, եղած թէ չեղած աշխարհում, միայնակ, որպէս մի կախարդ քարաժայռեայ վիրապի մէջ, որ անտեսանելի հոգիներ երդմնեցնում է, դուրս է ուղարկում և ընդունում է. նոքա յաղթական տօնախմբութենների և վիճաբանութենների, խռովութեան ու աղմուկի մէջ — մի զարմանալի ներհակութիւն։ Էլբայի փոքրիկ երկաթի մարդը յանկարծ վեր է կենում իւր սեղանից — Վիեննեան ժողովը չկայ՝ միւս ևս, իշխանները և դիպլօմատները ցան ու ցիր են լինում և աշխարհը կրկին անգամ դառնում է մի փոթորկալից բանակ պատերազմի։

Նապոլէոնը լաւ տեղեակ էր այն բոլորին, ինչ որ Ֆրանսիայի և ինչ որ Վիեննայի մէջ լինում էին — 1815 թուականի սկզբում փոքր էր մնացել, որ Դաշնաւորքը անմիաբանութեամբ տեղիք ստանային պատերազմ բանալու միմեանց հետ։ Աւստրիա, Ֆրանսիա և Անգլիա մի ծածուկ պայմանադրութիւն արեցին ընդդէմ Ռուսաստանի և Պրուսիայի։ Այլև Ֆրանսիան պահանջում էր Աւստրիայից վերստին հաստա-

տել Բուրբօնքը Նէապօլիտանիայի աթոռի վերայ։ Մուրատի աթոռը դղրդվեցաւ. ուրեմն նա, որպէս բնական դաշնաւոր Նապոլէոնի, յանձն առաւ հրաւիրել Իտալիան դէպ ի այն միաւորութիւնը, որի առաջնորդը պիտոյ է լինէր Նապոլէոնը, և գործ տալ Աւստրիացոց։

Այն ահաւոր խօսքը Սանտ-Հէլէնա հասել էր արդէն Նապոլէոնի ականջին։ Նորա դիտաւորութիւնը ամրացաւ նորա սրտի մէջ. կայսրը օրէ օր աւելի առանձնացաւ. նա փախչումէր ամենայն յարակցութենից Քամբելլի հետ. սակաւ էր պատահում, որ Նապոլէոնը թողէր նորան յանդիման լինել իւրեան բաց ի այն միջոցներից, երբ որ այդ Անգլիացին վերադարձած էր Լիվօռնօյից, ուր երբեմն սովորութիւն ունէր գնալու։ Այլև մի ֆրանսիական պատերազմնաւ այս և այն ուղղութեամբ շրջումէր կղզու չորս կողմով, Նապոլէոնին նկատելու համար, ըստ որում դորա մասին սկսվել էր համբաւ տարածվել, թէ պատրաստվումէ ցամաք դուրս գալ դէպ ի Իտալիա. բայց անգլիական կօրվէտը (արագավազ նաւը) գտանվելով Քամբելլի իշխանութեան ներքոյ, անդադար շարժվումէր Էլբայի, Գենուայի, Չիվիտա-Բեքքիայի և Լիվօռնօյի մէջ։

Ինքը Նապոլէոնը որպէս գերագոյն իշխան Էլբայի, ունէր պատերազմական և չորս հասարակ նաւեր. սոքա վարժութիւն գործելով, յաճախ ծովագնաց էին լինում Էլբայի նոր դրօշակի տակ, որ պատկառելի էր նոյն իսկ Բարբարիացոց աչքումը. պատճառ, սոքա շատ անգամ Էլբայի նաւերի կապիտէնների համար ընծաներ էին բերում ասելով, թէ նոքա հատուցանումեն Մոսկվայի պարտքը։ Կայսրը այս նաւերը շատ յաճախ ուղարկումէր դէպ ի ծով, իւր դիտաւորութիւնքը ծածկելու համար. և նա այնպէս խոր ծածկել էր դորանց, որ այդ գաղտնիքին տեղեակ էին միայն Բերտրանը և Դրուօն, և սոքա ևս իմացան դորան 24 ժամ ճանապարհ դուրս գալուց յառաջ։ Կանանց բան չասացին. մօտակայ Կորսիկայի վերայ տեղեակ էր այդ խորհրդին Կոլոննա անուն բարեկամը Պաօլիու և մտերիմ ծածկագէտը Նապոլէոնի.

Այն վճռական րոպէն, երբ որ Նապոլէոնը պիտոյ է նաւ մտանէր, որ վերջապէս դուրս գալով այս անապատ միայնութենից Էլբայի, հանդէպ գնայ աշխարհին և նորանոր տիտանեան կռիւների որոնց վերջը անկշռելի խորհրդաւոր էր, պիտոյ է մի ահացուցիչ արագաշարժութիւն լինէր Նապոլէոնի հոգու մէջ որպէս այն արագ յառաջխաղացութիւնը Կեսարի, երբ որ նա ոտք կոխեց անց կացաւ Ռուբիկօնից։ Այս բանը էր մինը այն քաջայանդուգն ձեռնարկութեններից պատմութեան մէջ, որ նայելով նոցա յաջողութեանը կամ ձախորդութեանը, ասվումեն կամ քաջաղնապէս Հզօր ու մեծ, կամ թէ Խելագար և վտան-

ֆախնդէր։ Այդպիսի րոպէք, երբ մի վճռամիտ մարդ, անվեհեր դիմագրաւ է լինում օրհասին, արժանի են մեր բոլորամասն ուշադրութեան, և եթէ ձեռնարկութիւնը պսակվում յաջողութեամբ, թվում որպէս թէ նոյն իսկ խելագար յանդգնութիւնը կրկնապատկումէր քաջ տղամարդի քաջութիւնը։ Որպէս մի Ֆերնանդօ Կորտեց, երբ որ սա հրամայում իւր քամակումը այրել նաւերը, երևում այժմ Նապոլէոնը, և արդարև յանձն առաւ նա տիրապետել Ֆրանսիային և կռիւ տալ եւրոպական տէրութենների զօրքերի հետ, բայց հազիւ թէ աւելի պատերազմող մարդիկ ունէր քան թէ այն վտանգախնդիր մեծ Սպանիացին, երբ որ հարկաւոր էր հնազանդեցնել իւր լծի տակ վայրենի Ինդիանացիք։ Այս կազմ ու պատրաստ կանգնած էին արդէն Ֆրանսիայի մէջ նորա երկու ամենամեծ զօրագունդերը և յառաջապահ պատերազմողքը, այսինքն նորա անուան կախարդիչ զօրութիւնը և ատելութիւնը դէպ ի Բուրբոնեանց վերականգնած աթոռը։

Օրը շաբաթ էր, փետրվարի 26 ը — Պաւլինէ Բօրգեզէն տալիս էր մի ուրախութեան հանդէս կայսերական պալատումը — պահապան զօրքը և միւս զօրագունդը 800 հոգի, պատրաստ են տեղից շարժվելու. եօթն նաւ կանգնած են նաւահանգստումը պատրաստ — կայսրի սիրտը լցուած է խռովութեամբ — այն փոքրիկ մարդը շրջում վեր ի վայր, մօտենում պատուհանին, նայում դէպ ի երեկոյեան երկնակամարը, ծովախորշի վերայ որ խռովալից ալէկոծութեան մէջ է։ Պահապան զօրքը թող նաւ նստի, հրամայում նա. Alea jacta est. այսինքն խաղարկութեան քուէն ձգվել է։

Ութ ժամն էր երեկոյին, երբ որ Նապոլէոնը ծովախորշի պարսպից ցած իջաւ նաւակի մէջ։

Այս տեղ ահա, երբ որ այն հոյակապ մարդը ծովագնաց է լինում, որ միւսանգամ փորձէ աստուածքը, այնպէս է ինձ — ասում ճանապարհորդը, որպէս թէ մի ձայն նորա քամակից գանչումէր այսպէս. «Ճակատագրի չարեացակամ և յաւիտենական օրէնքը բոլոր բաների մէջ այնպէս է, որ երբ դոքա հասել էին լրութեան ծայրակէտին, աւելի արագ դէպ ի ցած են կործանվում քան թէ դէպ ի վեր էին բարձրացել։» Այս է Սենեքայի ձայնը, այն չարագուշակ թռչունի ձայնը, որ մի առանձին իրաւունք ունի, այսպիսի առածով գանչել Նապոլէոնի քամակից, որովհետև նա տեսած էր աշխարհի իշխանքը զարհուրելի կերպով վերջացած, կայսր Տիբերիոսը, կայսր Կալիգուլան, կայսր Կլաւդիոսը, Կեսար Գերմանիկոսը, և որովհետև ինքը ութ տարի որպէս աքսորական Կորսիկայի մէջ նստած էր և իմաստութիւն էր ու-

սանում, ուրեմն և հիմնաւոր փորձով գիտէր նա որպիսութիւնը և վերջը այնպիսի ասպարէզի, որ ունեցել է Նապոլէոն։

Բայց Նապոլէոնը անց է կենում նաւով, առանց տեսանելի լինելու անգլիական կորվետին, որ կանգնած էր Լիվօռնօյի նաւահանգստումը։ Ծովը ցուցանումէր տեղատուութիւն. յոյս ունէին օրաբացից յառաջ անց կենալ Կապրայիա կղզու այն կողմը, բայց հողմը դադարեց և ցերեկի մէջ դեռ ևս գտանվումէին կղզու հանդէպ։ Երեկոյի չորս ժամուն միայն հասան Լիվօռնօյի բարձրութեանը և շուտով երեւեցան երկու ֆրեգատք, ապա մի ֆրանսիական պատերազմանաւ, Զեֆիր անունով, որ մօտենումէր նոցա։ Նապոլէոնի նաւաստիքը կամեցան մօտ քարշել այդ նաւը և ներս մտանել. բայց Նապոլէոնը հրամայեց ներս մտանել նաւի տախտակամածի տակ։ Այնու ամենայնիւ Զեփիւրը ձայն տուեց նաւին հարցանելով,— ինչպէս էր Էլբայի դրութիւնը,— և ինքը Նապոլէոնը պատասխան ուղարկեց հեռախօսական փողովակով. «Կայսրի առողջութիւնը շատ լաւ է։» Յաջողութեամբ ազատվեցաւ նա վտանգից։

Կայսրը, արդէն նաւ նստելուց յառաջ, գրել էր երկու հրատարակութիւնք ֆրանսիական զօրքի և ֆրանսիական ազգի անունով. բայց որովհետև դոքա անընթերցանելի էին, ձգեց նորանց ծովը, և բերանացի ասելով, գրել տուեց նոր հրատարակութիւնք։ Ով որ ձեռք ունէր գրելու, գրեցին և օրինակեցին, նաւի եղերքումը նստած շուրջանակի, մինը թմբուկի, միւսը գրենադիրների գդակի և այլ միւսը նստարանների վերայ— մի օտարոտի տեսարան այն յողդողդ տարրի վերայ և Էնկօնստան (Անհաստատ) անունով նաւի մէջ. այսպէս էր ասվում այն նաւը, որ կրումէր Նապօլէոնի անձը և բաղդը։

Այո,— ասումէ հին օրերի Սենեքան, Կորսիկեան աքսորականը, կործանվումէն կործանվող բաները։ Շուտափոյթ եղաւ Նապոլէոնի թռիչքը Խուան նաւահանգստից Վատերլօյի վերայով դէպ ի Սանտ-Հելենա։ 2-ին մարտի, էր նա Սերենոնումը, 3-ին— Բարեմումը, 4-ին— Դինյումը, 5-ին— Գապումը. 7-ին մարտի Լիոնումը, 14-ին— Շալօնումը. 20-ին մարտի, երեկոյի 9 ժամուն, ներս մտաւ նա Փարիզի մէջ։ Յունիսի 1-ին, պատերազմական դաշտումը էր նա արդէն քաղաքականապէս զարկված ու յաղթված մարդ։ Յունիսի 18-ին կործանվեցաւ նա Վատերլօօ գեղի մօտ։ Յունիսի 21-ին, որպէս փախստական վերադարձաւ դէպ ի Փարիզ։ Յունիսի 22-ին հրամայեց իւր նօտարիոսին գրել. «Ma vie politique est terminée, et je proclame mon fils, sous le titre de Napoleon II, Empereur des Français.» — Այսինքն, «իմ քաղաքա-

կան կեանքը վերջացած է, և ես քարոզումեմ իմ որդին Ֆրանսիացոց կայսր, Նապոլէոն երկրորդի անունով:»

Յուլիսի 15-ին, կանգնած էր նա Բելլերոֆոն նաւի վերայ. օգոստոսի 7 ին, —Նորթհումբերլանդի վերայ. հոկտեմբերի 16-ին, այս անբաղդ քաջ տղամարդը դէպ ի ցամաք դուրս եկաւ Սանտ-Հելենա կղզումը:

Ահա—այս է վերջին պատկերը այս զարմանալի մարդու կեանքի պատմութենից—ահա դրած է նա այն հեռաւոր աֆրիկեան կղզու մէջ, իւր մահու անկողնումը, գունաթափ և անբարբառ, իւր հսկայական հոգին դուրս փչած, Մարենգօյի կապոյտ վերարկուով ծածկած, նորա ոտքի մօտ իւր որդու, Հռոմի արքայի գունաթափ մարմարինեայ արձանը. նորա մահճի առաջև ծունր չոքած, հառաչելով Բերտրանը, Անտոմմարքին, իւր հարազատ բարեկամները և սպասաւորքը: Արևը ահա խորասոյզ է լինում ծովի մէջ: Քահանան, որ արդէն տուել էր կայսրին վերջին օծումը, տարածումէ ձեռքերը դէպ ի վեր և աղաղակումէ. «Sic transit gloria mundi!» — (Այսպէս է անցանում աշխարհի փառքը:)

Ս. Նազարեանց:

ԳԵՂԵՑԻԿԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ:

(Շարունակութիւն.)

Բարոյական մարդը իւր բնաւորութեամբ և բոլոր հոգեղէն յատկութեններով այնքան ևս ծնունդ է իւր ֆիզիկական և բարոյական շրջապատի, ինչքան հետևանք իւր մարմնեղէն կազմուածքի:

Բնութիւնը տալիս է մարդուն մի կազմուածք որոշեալ պիտոյքներով և շատ կամ փոքր սահմանված յատկութեններով, տրամադրութեններով կամ թէ ընդունակութեններով: Շրջակայ հանգամանքները և անընդհատ ներգործող տպաւորութիւնք սաստկացնումեն կամ թէ թուլացնումեն այդ պիտոյքները, կերպարանագործումեն կամ թէ ճնշումեն մի ընդունակութիւնք, ասպարէզ տալով միւսերին, կամ թէ բոլորը միասին, ուրեմն և կարող են ամենևին փոփոխել սկզբնական տրամադրութիւնքը և յատկութիւնները: Եթէ մարդ բնութեան ձեռքից ստացել է որ և իցէ գեղեցիկ ընդունակութիւն կամ թէ մի

ականաւոր ձիրք, բայց սա շրջակայ հանգամանքների մէջ չէր գտնում ոչինչ վարժութիւն, այնուհետեւ այդ ընդունակութիւնը կամ ձիրքը պիտոյ է առ փոքր փոքր թուլանայ և վերջումը ամենեւին կորչի, որովհետեւ ամենայն ընդունակութեան և զօրութեան կերպարանագործութիւն կախ է վարժութենից միայն և առանձնապէս ։ Մի նուրբ երաժշտական լսողութիւն ստանալու համար, հարկաւոր են անդադար երաժշտական տպաւորութիւնք․ մի ճիշդ չափողութիւն աչքով, այսինքն մի այնպիսի յաջողակութիւն աչքի ստանալու համար, որ կարող էինք տեսութեամբ սահմանել մի առարկայի մեծութիւն կամ փոքրութիւն, հարկաւոր է յաճախ և անընդհատ գործ դնել այդ ընդունակութիւնը։ Զօրութիւնը ձեռքերի մէջ յառաջադէմ կացուցանելու համար, պիտոյ է յաճախ գործ դնել այդ զօրութիւնը․ ուղեղի մտածողական և հայեցողական կարողութիւնը զօրացնելու համար, այնպէս, որ նա հեշտութեամբ վերլուծանէր, զոր օրինակ մաթեմատիկական, կամ թէ պարզապէս, թուաբանական խնդիրներ, հարկաւոր է ստէպ ստէպ պարապեցնել նորան այդպիսի խնդիրներով։ Այդպէս ահա ամենայն գործարան և ամենայն ընդունակութիւն պահանջում է վարժութիւն։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ գործարանը պիտոյ է լինի առողջ և բարեկարգ և մի քանի դիպուածներում, զոր օրինակ, դէպ ի ամեն մի մեծ կամ փոքր քանքար, ի բնէ առանձնապէս տրամադրված լինի։ Բայց առէ՛ք դուք ամենահոգելից ընդունակութիւնը ինչ սեռի մէջ կամիք, և շրջապատեցէք նորան այնպիսի հանգամանքներով, որ չէին տալու նորան ոչինչ սնունդ, ոչինչ դրդողութիւն դէպ ի գործականութիւն, և այդ գերազանց ընդունակութիւնը անյուսալի կը կորչի կամ թէ գոնեայ կ'աւերվի։

Մարդը և նորա ընդունակութիւնքը շրջապատել յաջողեցուցիչ հանգամանքներով, բոլորափակել նորան անդադար ներգործող տպաւորութենների մէջ և կառավարել դորանց, այդ է ահա նորա դաստիարակութիւնը։ Եթէ մարդուս կազմուածքը ի բնէ ամենեւին կատարեալ է և նորան դաստիարակող տպաւորութիւնքը բարեյաջող են, ապա մարդըս կերպարանագործվում է բարւոքապէս և կարող է դառնալ կատարելութեան օրինակ։ Ամենեւին յարմարաւոր հանգամանքներ տնօրինելու համար, պիտոյ են նախ և յառաջ ինչ ինչ հնարներ, որ երբեմն կախ չեն մեր ցանկութենից․ երկրորդ, ճշդապէս տեղեկութիւնը մարդու կազմուածքի իսկական յատկութեններին և պիտոյքներին է մի գիտութիւն որ ցաւելի է ասել թէ շատ տարածուած չէ, յաճախ խառնափնդորած ու խաւարեցրած է անհամար սուտ ըմբռնողութեններով և կանխակալ կարծիքներով։

Բաց ի սորանից նոյն իսկ բնութիւնը արձակում է իւր ձեռքից այնքան անչափելի բազմօրինակ յատկութիւններով և տրամադրութիւններով կազմուածներ, որ համարեա թէ ամենայն անձն, ամենայն մանուկ պահանջում է մի առանձին պիտառութիւն դաստիարակիչ հնարների։ Այս բոլորը անչափ դժուարացնում է դաստիարակութեան արուեստը և հմտութիւնը։ Դաստիարակութիւնը որպէս գիտութիւն շատ լայնարձակ առարկայ է, որովհետև չկայ ոչ մի ճիւղ մարդկային ճարտարութեան որ դորա հետ չլինէր յարակից։ Բայց նորա գլխաւոր հիմքը պիտոյ է լինի ֆիզիօլօգիկական գիտութիւնը մարդկային կազմուածքի և միանգամայն հոգեբանական գիտութիւն մարդկային սրտի։ Որպէս ճարտարութիւն կամ որպէս գործական պիտառութիւն այս հմտութեան, պահանջում է նա մեծ համբերութիւն, նուրբ նկատողութիւն, հարազատ զգացողութիւն, որ այս գործի մէջ երբեմն կարող է փոխարինել այժ և դրական գիտութիւնը, այլև մի ուղիղ դատողութիւն հնարները և եղանակները ընտրելու մէջ։ Մի բառով դաստիարակութիւնը կարօտ է իսկութեամբ այնպիսի յատկութիւնների, որ ունին իւրեանց մէջ կանայք մանաւանդ։ Այս ճարտարութիւնը տալ ուսմամբ միւսին չէ կարելի. և պիտոյ է լինի կամ բնատուր և կերպարանագործված, կամ փորձով ու առարկայի սիրովը ստացած։

Դաստիարակութեան բոլոր ուսումը աւանդել այս տեղ կարող չենք. մեք յառաջ բերենք այս տեղ նորա առաւել մեծակշիռ արդիւնքը և ընդհանուր օրէնքը, որ եզրակացուցած են փորձից ու ֆիզիօլօգիկան իրողութիւններից։

Այս օրէնքներից հիմնականը և առաւել ընդհանուրը մատնացոյց արեցինք արդէն. այսինքն, բարոյական մարդը իւր բնաւորութեամբ և բոլոր առանձին յատկութիւններով է նոյնքան ևս իւր ֆիզիկական և բարոյական շրջապատի ծնունդը, ինչքան իւր բնատուր կազմուածքի հետևանքը։ Սորանից յառաջանում է և դաստիարակութեան հնարաւորութիւնը. և այս տեղից ծնանում է այն մեծ պատասխանատուութիւնը որ կայ դաստիարակողների վերայ, եթէ դոքա աւերել էին ուղիղ մարդկեղէն կազմուածքը և չէին ուղղել անկանոնները, որ յանձնած էին նոցա հոգաբարձութեան։

Մարդս ծնանում է ֆիզիկական և հոգեղէն պիտոյքներով, որ հետևանք են նորա կազմուածքի և բազմօրինակ յարակցութիւնների դէպ ի բոլոր շրջակայքը։ Շրջակայքը անդադար ներգործելով, տպաւորութիւնք յառաջացնելով, զարթեցնում է կազմուածքի մէջ ներհակ ներգործութիւն, որ դառնում է անհրաժարելի կարիք, որովհետև այս ներգործութեան և հակառականներգործութեան մէջ է յատկապէս կեանքի

բոլոր ընթացքը։ Երբ որ օրգանական հակառականներգործութիւնը որ և իցէ մասնի կամ թէ բոլոր կազմուածքի մէջ դադարում է, այնուհետև հանդիպում է կաշկանդումն, մահ։

Այս պիտոյքներից մի քանիքը հասարակաց են մարդուն և անասուններին. միւսերը պատկանում են մարդուն շատ կամ փոքր առանձնապէս։ Միները լինելով կատարելապէս շնչական կամ թէ մանաւանդ աճեցական, չեն ստորադրված կամքին. միւսերը լինելով իմացական, բարոյական և զգալի,—պարտ են ստորադրվիլ կամքին, որ լինէին ամենևին բանաւոր։

Շնչական պիտոյքը սովորաբար բաժանվում են անստորադիրք կամքին կամ թէ աճեցական,—զոր օրինակ շնչողութիւն, մարսողութիւն, արտաշնչութիւն, արտաթորութիւն և այլն,—և բնազդեցական կամ յատկապէս զգայական—զաւակագործութիւն, անձնապահպանութիւն, հեշտասիրութիւն և վայելչասիրութիւն, որ արդէն պիտոյ է ստորադրվին կամքին։ Միւս կողմից, հոգեղէնքը կարելի է որոշել—մտաւորական, որոնց խորհուրդը է գիտութիւն, ուսումն, ճարտարութիւն և վաստակասիրութիւն որպէս հնարք բարուոքելու կեանքը, և բարոյական, որ գոյանում են բնազդեցականներից։ Համառօտելով այս բաժանումը, մեք գտանումենք երեք տեսակ կարիք, որ ունին մի ընդհանուր և անընդհատելի կապակցութիւն.—շնչական ու աճեցական որոնց ներգործութիւնքը և բացերևութիւնքը անուանումենք մեք օրգանական (գործարանաւոր) պաշտօնք. բնազդեցական ու բարոյական, որ բացայայտվում են զգացողութենների և ախտերի մէջ, և մտաւորական որ յայտնվում են բոլոր իմացական ասած գործականութեան մէջ։

Մարդը ինչքան առաւել աճեցնում է իւր մտաւորական և բարոյական պիտոյքը, այնքան առաւել բարձրանում է նա և լինում է մարդ. ինչքան առաւել ստորադրում է իւր անձը շնչական պիտոյքներին, այնքան առաւել ցածանում է նա և դառնում է անասուն։ Վերջինը շատ հեշտ է, առաջինը անչափ դժուար։ Ամենևին յաղթահարել շնչական ու բնազդեցական կարիքը անկարելի է։ Մարդս, թէև լինէր բոլորովին զարգացած հոգեպէս, այնու ամենայնիւ, մի քանի մասնով հարկաւորապէս մնում է շնչական, որովհետև նորա բոլոր պիտոյքը, թէ շնչականքը և բնազդեցականքը, թէ բանաւորքը և բարոյականքը սկզբնաբար ունին մի ընդհանուր հիմք, այսինքն մի որոշեալ տնօրէնութիւն կազմուածքի։

Կազմուածքի որ և իցէ յաջողակութիւնը կախ է նորա տնօրէնութենից և անպատճառ պիտոյ է երևի գործով, պահանջում է գործականութիւն։ Ուրեմն յաջողակութիւնը է միանգամայն և կարիք, այլև անհրաժարելի կարիք։ Աչքը տեսանում է, որովհետև նա տնօրինված է

այնպէս, որ պիտոյ է առարկայքը ցոլման նորա մէջ և տպաւորութիւն գործեն ջիղի վերայ։ Մարդը (գործարարը) հիւսում է ոստայն, որովհետև նորա կազմուածքին տուած է նորա հարկաւոր նիւթ ու գործիքը։ Արեգակնային համակարգութիւնը մոլորակների, մի մասնիկը տիեզերքի անեզրական կազմածի, շարժվում է զուգապատշաճ կարգով, և այս փոքրիկ շարժողութենից այն փոքրիկ գնդակը, որ ասվում է Երկրագունդ, ստանում է երբեմն այս և երբեմն այն կողմում իւր ամառն ու ձմեռը, որովհետև Արարչի անքննելի կամքը այդպէս է կարգադրել փոխադարձ յարակցութիւնքը մոլորակների և համակարգութենների մէջ, այդպէս է տնօրինել տիեզերքի կազմուածքը։ Այսպէս և ամենայն գործականութիւն, — տեսութիւնը աչքի համար, ոստայնանկութիւնը սարդի համար, որոշեալ շարժողութիւնը մոլորակների համակարգութեան համար — ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ լցուցանել մի կարիք, որ համեմատ էր կազմուածի յատկութեանը և ընդունակութեանը։

Սորանից հետևում է, որ ամենայն կարիք ունի իրաւունք լցուցանվելու, այն պատճառով միայն, որ այդ կարիքը կար։ Լցուցանելը աճեցնում է կարիքը և ընդունակութիւնքը. վարժութիւնը և գործականութիւնը մեծացնումեն ամենայն զօրութիւն։ Ուրեմն, վերևում ասածը հիմք բռնելով, կարելի է ասել նոյնպէս, թէ ամենայն յաջողակութիւն կամ կարիք ունին իրաւունք կերպարանագործվելու, զօրանալու. բայց այս տեղ պիտոյ է յաւելացնել — մինչև մի սահմանեալ աստիճան։ Բնութիւնը պարգևում է մարդուն շատ և բազմօրինակ կարիքներ և ամենեքեան ունին միապէս իրաւունք կերպարանագործվելու, բայց ոչ մինը չունի իրաւունք առանձնապէս թագաւորելու և յաղթահարելու միւսերը։ Ամեն մինը պիտոյ է կերպարանագործվի իւր խորհրդին համեմատ սահմանեալ չափով, որ բոլորի միասին կերպարանագործութեան մէջ պահպանվէր հաւասարակշռութիւն, համաձայնութիւն, ներդաշնակութիւն, գեղեցկութիւն և կատարելութիւն։

Ոչ մի մարդկային կազմուած, եթէ առնունք նորան առանձնապէս, այն պատճառներով, որ արդէն աշխատեցինք մեք բացատրել, չէ կարող լինել ամենայն մասնով կատարեալ և մանաւանդ թէ բարոյական ու բանական կողմից, ճշդապէս զուգապատշաճ։ Միլիոնաւոր հանգամանքներ փոփոխումեն կազմուածների բաղադրութիւնը, խառնուածը, առողջութիւնը, բոլոր յատկութիւնքը, յաջողակութիւնքը և պիտոյքը և տալիս են ամեն մինին նորա առանձին բնաւորութիւնը։ Եթէ ամեն մարդկային կազմուած լինէր կատարելապէս կանոնաւոր, բոլոր պիտոյքը լինելու էին ճիշդ համեմատ մինը միւսի հետ, այնուհետև հեշտ էր կառավարել նոցա գործականութիւնը. որպէս ֆիզիօլօգիական, նոյնպէս

և բարոյական օրէնքները պարունակվելու էին նոյն իսկ կազմուածքի մէջ։ Գեղեցիկ լինելու համար, պիտոյ էր մարդուն հնազանդել միայն իւր բնական ազդեցութեանը, այսինքն առնել այն բանը միայն, որ պահանջումէր նորա կազմուածքը։ Բայց կազմուածքը կատարեալ ու հաւասար չէին, այլ սորա հակառակ ունէին անվերջ բազմօրինակ պիտոյք, տրամադրութիւնք, հակամիտութիւնք, պատուականութիւնք և պակասութիւնք. այնպէս, որ կատարելութեան տիպը կայ միայն որպէս մի վերացական ըմբռնողութիւն, որպէս մի շատ բարձր գաղափար, որին կարելի է միայն մօտենալ, բայց նորան իրագործել բոլորովին անկարելի է։ Սակայն այս գաղափարական տիպը կատարեալ մարդու չէ կամահաճոյական հնարաստեղծութիւն կամ արարած մի առանձին մարդու ֆանտազիայի (երեւակայութեան). Նորա ըմբռնումն, շատ կամ փոքր պայծառ, շատ կամ փոքր որոշական, է խոստովանութիւն, թէ ինչ էր մարդու խորհուրդը, և պատկանումէ բոլոր մարդկութեանը։ Ինչքան և բազմօրինակաբար բացայայտվէր այս ըմբռնողութիւնը, ընդհանուր հիմքերը և իսկութիւնը գաղափարատպի մնումեն միշտ մի և նոյն։ Կից այս խոստովանութեան, թէ ի՞նչ էր մարդու խորհուրդը, կից այն ըմբռնողութեանը գաղափարական կատարելութեան մասին, այլև նոյնպէս այն խոստովանութեան մէջ թէ ինչ էր հասարակաց մարդկութիւնը, կան շատ կամ փոքր, մասնաւորապէս կերպարանափոխվող, բայց իսկութեամբ մի և նոյն ընդհանուր բարոյական օրէնքները։ Այս օրէնքներին գործով ու վարքով պիտոյ է հետևիլ, կատարելութեանը մօտենալու համար։ Բայց ոչ ոք կարող չէ ըստ բաւականին լցուցանել նորանց, եթէ կը հետևի միայն իւր յատուկ բնազդեցիկ դրդողութեններին, որովհետև զանազան տեսակ հակամիտութիւնք և ախտեր գոյանալով կազմուածքի մէջ տուած պիտոյքներից, անդադար կուրացնումեն մարդը և ձգումեն մոլորութեան մէջ։ Այս տեղից յառաջանումէ անհրաժարելի կարևորութիւնը դաստիարակութեան — որի նպատակը այն է, կառավարել պիտոյքների և յաջողակութենների կերպարանագործութիւնը այնպէս, որ մարդը ինչքան կարելի է ճշդիւ լցուցանելով հասարակաց — մարդկային օրէնքը բարոյականութեան, ինչքան կարելի է առաւել մօտենար կատարելութեան գաղափարատպին։

Դաստիարակութիւնը ընդարձակ մտքով երկարաձգվումէ բոլոր կեանքի միջոցը, նորա սկիզբը միայն թողած է միւսերին. բայց երբ որ մարդը դարձել է աղատ պատասխանատու իւր գործերի համար, երբ որ նա ըստ իւր հասակի պարտական է լինում սրտի վկայութեամբ ընտրել իւր գնացքը, այնուհետև պարտականութիւն կայ նորա վերայ ինքնին յառաջ տանելու իւր բարոյական կրթութիւնը։

Բնութեան ընդհանուր կանոններից հեշտ եզրափակվումէ այսպիսի հետևութիւն, թէ դաստիարակութիւնը իւր վերջին առաւել հեռաւոր նպատակին հասնելու համար, որ է մարդու կատարելութիւնը, պարտական է հետամուտ լինել այն բանին, որ հաւասարակշիռ կերպով կերպարանագործումէ ամէն մի կազմուածքի տուած պիտոյքները և աջողակութիւնքը:

Խօսելով իսկութեամբ, բոլոր անթուելի տարբերութիւնքը կազմուածների վերջաւորվումեն այնպէս, որ ամէն մարդու մէջ այս կամ այն պիտոյքը գերակշիռ են, քան թէ միւսերը, այսինքն միները առաւել շատ են, միւսերը առաւել պակաս, և դորանց հաւասարակշիռ կացուցանելու համար, պիտոյ էր միները չափաւորել, այլև երբեմն ճնշել, իսկ միւսերը աճեցուցանել:

Եթէ մտաւորական ու բարոյական պիտոյքը մի մարդու մէջ շատ փոքր է, և այս փոքրը ևս չէ ստանում աճեցութիւն և պահպանութիւն, այնուհետև բոլոր բնազդեցիկ ախտերը չսանձահարվելով բարոյական ու բանական դատողութենից հեշտ յեղափոխվումեն ամենևին շնչական, ամենավատթար, խայտառակիչ, կոյր ախտեր, որ քարշումեն տանումեն դէպ ի անձնապաշտական և կոպիտ վայելչութիւնք, որ և դառնումեն տիրապէս արատք և վերջումը, ըստ որում անկարգ և վնասակար բաներ էին, այս կամ այն ճանապարհով միշտ տանումեն դէպ ի կործանութիւն նոյն իսկ կազմուածքի:

Սորա հակառակ, եթէ մտաւորական յաջողութիւնքը միայնակ գերակշիռ են լինում և մարդը նոյնպէս առանձին կերպով անձնատուր է լինում նոցա, արհամարհելով բոլոր մնացած բաները, այնուհետև կարող է նա մի կողմից, նոյնպէս հեշտ աւերել իւր կազմուածքը և այնպէս տկարանալ որ հնար չունէր յառաջ տանելու իւր գործականութիւնը. միւս կողմից, ամենևին անփոյթ առնելով բարոյական զգացողութիւնը, կարող է դառնալ մի շատ զգալի մեքենայ ուսումնականութեան կամ ճարտարութեան, կարող է լինել մեծաշնորհ ուսումնական և ճարտարապետ, բայց իբրև մարդ կորուսանել իւր բոլոր արժանաւորութիւնը: Չափազանց կրթութիւն քանի մի յաջողակութենների կամ թէ այս որ և իցէ մի հատի, երբեմն բաւական է լինում երևելի կացուցանելու մարդս, որպէս մի հոգելից անձն, կամ թէ գոնեայ որպէս մի գերօրինակ քանքարաւոր: Այդպիսի դիպուածում հասարակութիւնը սովորաբար լինումէ ներողամիտ դէպ ի նորա մի քանի այժ և նշանաւոր պակասութիւնքը այլ մասին: Այս ներողամտութիւնը արդար ու գեղեցիկ է, բայց դա քանքարաւոր մարդուն չէ տալիս իրաւունք մոռա-

նալու, թէ նա լինելով բանաստեղծ, ճարտարապետ, ուսումնական, պարտական է նոյնպէս և ամենից յառաջ լինել մարդ։ Սորա հակառակ, ինչքան առաւել նշանաւոր էր մարդս իւր քանքարով, ինչքան մի հատ որ և իցէ յաջողակութիւն դուրս է գալիս սովորականների շարքից, այնքան ևս պարտական է նա անդադար բանական ջանադրութեամբ և ինքնադաստիարակութեամբ իւր ընդհանուր մարդկեղէն յաջողակութիւնքը և յատկութիւնքը զուգապատշաճել իւր քանքարի հետ։ Ինչ որ այս մասին կարող է վերաբերվիլ դէպ ի մարդս առ հասարակ, այդ բանը վերաբերվում է և դէպ ի կին մարդը առանձնապէս։ Ինչքան առաւել դա քանքարաւոր ու գեղեցիկ էր, այնքան ևս պարտական էր լինել կնամարդ։

Մարդս ունի միայն մարդկային արժանաւորութիւն, որպէս բանական ու բարոյական էակ։ Այսինքն մեք ամենից յառաջ գնահատումենք նորան, միտ դնելով նորա խելքին և սրտին, հոգուն։ Բայց մարմինը, կազմուածքը է նոյնպէս և մի ձև, որի մէջ բանական էակը երևում է, այլև մի անհրաժարելի գործիք, որի միջնորդութեամբ ներգործում է նա։

Թուլացած և խանգարված կազմուածքը հոգու համար — մի անպիտան գործիք է, որով ոչինչ չէ կարելի կատարել։ Ուղեղը, աւերված սաստիկ ցնցողութեամբ, արտաքին կամ ներքին վնասահարութեամբ, կամ թէ պարզապէս ասելով, մաշված գինու շոգիներով, չէ կարող առողջ ու պայծառ դատել. խելագարի և արբեցածի գործողութիւնքը չէին կարող լինել բանաւոր։ Ի ծնէ կոյրը չէ կարող ոչինչ ըմբռնողութիւն կազմել իւր մէջ գոյների մասին. խուլ ու համր ծնուածը կարող չէ լինել նուագածու. և մինը և միւսը զուրկ են այն գործարաններից, որ հարկաւոր են այս տպաւորութենների և գործողութենների համար, կամ թէ ունէին այդ գործարանքը, բայց դոքա անկիրթ ու խանգարված էին։

Կազմուածքի առողջութիւնը է մինը առաջին պայմաններից կանոնաւոր զարգացման մտաւոր և բարոյական զօրութենների։

Ամենայն ֆիզիկական և բարոյական զօրութիւն պահպանվում է և զարգանում վարժութեամբ։ Ամենայն ընդունակութեան սնունդը է գործականութիւն։

Ամենայն զօրութիւն, ամենայն ընդունակութիւն կարող է ոչնչանալ, որպէս զրկվելով սնունդից, նոյնպէս և աւելորդ սննդառութեամբ և աշխատութեամբ։

Ամենայն միակողմանի վարժութիւն և ամենայն միակողմանի տիրապետութիւն որ և իցէ զօրութեան, զոր օրինակ, ստամոքի, որ մարսումէ կերակուրը — խախտումէ հաւասարակշռութիւնը, տանումէ նախ և յառաջ դէպ ի թուլութիւն բոլոր միւս զօրութեանները, որ չունէին կարողութիւն կերպարանագործվելու, այլև վերջումը դէպ ի անխափչելի կործանումը բոլոր կազմուածքի։

(*Շարունակութիւնը յետագայ տետրակներում։*)

Ցարուբին Համաֆեյու։

ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆՔ։

Ֆ Ե Ր Ն Ա Ն Դ Օ   Կ Ո Ր Տ Ե Ց․

—

Սա պատկանումէ այն հայուագիտ տղամարդերի կարգին, որ նախախնամութենից կոչված են, գրեթէ այն հնարների ձեռնտուութեամբ միայն, ինչ որ իւրեանց յատուկ հանճարը տալիս է նոցա, գործեր յառաջ տանելու, որ հիացք են բերում ժամանակակից և յետոյ գալոց ազգերի վերայ։ Այդպիսի մարդիկը պիտոյ է նմանեցնել այն վերհամբարձ Ալպեան սարերին, որ արևաբացի ճառագայթներից լուսաւորվումեն արդէն, երբ մարդկային ազգը հովիտների մէջ տակաւին պատած է խորին մթութեամբ, որ և դեռ ևս երկար փայլումեն, երբ ցերեկի լուսաւորը ցած էր իջել հորիզոնի տակ, և միւս աշխարհը թաղված էր խաւարի մէջ։ Այդպիսի մարդիկը երևումեն նոյնքան ևս մեծ և անհասանելի, ինչքան աւելի հեռացած են մեր ժամանակից․ այժ շատ անգամ կարող չենք մեք հասկանալ այն ժամանակը, որ հրաւէր է մատուցել տղամարդերին դէպ ի այդպիսի գործեր։ Բայց և այդ մարդիկն են արդարև, որ վկայումեն մարդկեղէն հոգու գերազանցութիւնը ամենայն երկրաւոր և անցաւոր բանից, այլև ապացուցանումեն թէ մարդը ոչ թէ պատահական դիպուածներով և արտաքին հանգամանքներով, այլ միայն նորանով, ինչ որ ինքը իւր ձեռքով վաստակել և ինչքան նա յաւիտենականութեան համար աշխատել կարող էր, մեծ է, երբ որ

նա կարող էր այն աստուածեղէն կայծը, որ դրած է նորա մէջ, արծարծելով շինել մի լուսաւոր բոց։ Այնուհետև բացուած էր նորա համար այն գործերի ճանապարհը, որ օր ըստ օրէ աւելի լայնարձակ չափով յայտնումէն իւրեանց ազդողականութիւնը և ոչինչ պակաս պատկանումէն յաւիտենականութեանը քան թէ նոյն իսկ մարդկային հոգին։

Ամերիկայի յայտնագործող և տիրապետող մարդերի մէջ, անտարակոյս, Կորտեցը ամենից առաւել մօտենում է Կոլոմբոսին, ըստ որում նա ըստ մեծի մասին նմանում է սորան, միայն թէ չհասաւ սորա բարոյական և կրօնասիրական մեծութեանը։ Բայց ինչ որ նա կատար հասուց, բոլորը պատկանումէր նորան միայն։ Երբ որ դիպուկ ժամանակը երևել էր, յղացաւ նա իւր սրտումը Մեքսիկօյի տիրապետութիւնը, թէև նորա յատուկ զօրապետը ընդդէմ դուրս եկաւ նորան և ամենայն տեսակ արգելք դրեց նորա ճանապարհի վերայ, թէև այո նորա նախանձորդքը աշխատումէին նորա գործերի պարծանքը յափշտակել նորանից։ Եւ նա յղացաւ իւր մէջ այս խորհուրդը և պսակեց նորան գործով առանց օտարի հրամանի, իւր յատուկ հոգեղէն առաւելութեամբ գրաւելով դէպ ի ինքը իւր բարեկամքը, փոխելով դէպ ի իւր կողմը իւր հակառակորդքը և, ինչպէս սովոր են անել ամենայն հոյակապ մարդիկ, բաղդը կապելով իւր գործերի վերայ։ Վտանգները, որոնց նա ենթարկեց իւր անձը և յաղթեց, այն պատահարները որ ընկերակից էին դորա, այնքան ևս արժանի են մեր ուշադրութեանը, ինչքան որ Կորտեցի զօրութիւնը, նորա քաջութիւնը, նորա աչքաբացութիւնը և շրջանկատութիւնը ամենադժուարին դրութենների մէջ, լցուցանումէն մեզ մի այնպիսի զարմացքով որպիսի շատ սակաւ մարդիկ կարող էին պահանջել։ Ցաւելի է միայն, որ նա ոչ ամենայն մասամբ կարողացաւ ազատ ու անփորձ պահել իւր անձը իւր համաժամանակեայ մարդերի մոլար դատողութեններից, որ նա լինելով վառված իւր ժամանակի կրօնական նախանձաւորութեամբ, Քրիստոնէական հաւատը տարածելու մասին, կարծումէր թէ մաքուր մարդկեղէն զգացողութիւնը պիտոյ է լուռ մնայ, ուր խնդիրը կրօնի վերայ է, և այս հայեցուածը դարձուց նոյն իսկ քաղաքական դրութենների վերայ, ուր պահանջումէր խոհեմութիւնը արդէն, որ նա խնայէ միւսերի կրօնական խոստովանութիւնը։

Կորտեցը, Մեդելլին փոքրիկ քաղաքումը Էստրեմադուրայի, ազնուական բայց աղքատ հօր ու մօրից ծնած լինելով 1485 թուականին, իւր Մարտին Կորտեց անունով հօրից սահմանված էր ուսումնասիրելու իրաւաբանութիւն, որպէս մի ասպարէզ ուր կարող էր որդին աւելի յներկեայ պատիւ ու հարստութիւն ճարել։ Ֆերնանդօ Կորտեցը, դեռ ևս շատ մանուկ, այս խորհրդով տեղափոխվեցաւ դէպ ի Սալամանկա,

ուր ստացաւ նա ինչ ինչ տեղեկութիւնք Լատինական լեզուի և իրաւաբանութեան․ բայց նա չգտաւ այս ուսմունքի մէջ այնքան քաղցրութիւն և գրաւիչ բան․ պատճառ, այն մեծագործութիւնքը որ պատկանումէին նորա ժամանակին, այսինքն յայտնագործութիւնը Ամերիկայի, գիւտը ծովային ճանապարհի դէպ ի արևելեան Հնդկաստան, և տիրապետութիւնը Նէապօլիտանիայի Սպանիացոց ձեռքով, կարող չէին անցանել նորա մօտից առանց տպաւորութիւն գործելու նորա վերայ։ Այս պատճառով նորա հայրը, շուտով ստիպվեցաւ յետ գանչել նորան Սալամանկայից։ Հայրենիքումը պարապումէր նա պատերազմական վարժութեններով, սպասելով այն ժամանակին, երբ գործը կոչելու էր նորան։ Այս միջոցիս երևումէր նա այնպէս ամբարհաւաճ և անսանձելի, որ և նորա հայրը չկամեցաւ նորա ձգտողութեանը ոչինչ արգելք դէմ դնել, այլ մանաւանդ մտածումէր թէ զինուորական պաշտօնը միայն յարմարաւոր էր, այն երիտասարդի գլխադարձ հոգին պատշաճաւոր սահմանի տակ խոնարհեցնել։ Այն միջոցին Սպանիան ցուցանումէր մի կրկնապատիկ հանդէս պատերազմական գործականութեան, այսինքն Ամերիկա և Իտալիա։ Բայց Կորտեզը շատ փոքր հաւան էր մի փառքի, որ գտանելու էր Ամերիկայի անծանօթ անտառներումը և մի ազգի մէջ, որի յաղթութիւնը ամենևին երևում չէր դժուար։ Նորա հակառակ, Նէապօլիտանիան ցուցանումէր նորան իւր ցանկալի բանը, մի քաղաքացեալ ժողովուրդ, վտանգներ, որ արժանի էին մի պատերազմի և վարձատրութիւնք որք կարող էին գրաւել մի մեծ հոգի, մանաւանդ որ ամենամեծ զօրապետներ պատերազմումէին այս աշխարհի մէջ յատկապէս։ Բայց այն րոպէին, երբ որ կամէր նա մի զօրագնդով դուրս գնալ դէպ ի Իտալիա, հիւանդացաւ նա մի ցաւով որի երկարատևութիւնը յետ պահեց նորան Սպանիայի մէջ։ Այլև Նէապօլիտանիայի տիրապետութիւնը աւելի շուտով գլուխ եկաւ, քան թէ կարծել էր նա․ այնպէս, որ այժմ չէր կարող այն տեղ գտանել, ինչ որ խնդրած էր։ Նոյնչափ ևս աւելի ջերմութեամբ սկսեց նա յառաջ տանել իւր խորհուրդը գնալու Ամերիկա, ուր հրաւիրումէր նորան մեծ յոյսեր տալով իւր ազգական Նիկօլօ դէ Օվանդօն, որ էր կուսակալ Հայիտի կղզու։ Բայց այն րոպէին, երբ որ նա կամէր նաւով դուրս գնալ, մի սիրու պատահարի մէջ, մի պատի փլատակով այնպէս վնասվեցաւ նա, որ նորա ճանապարհորդութիւնը միւսանգամ երկու տարի յետ մնաց։ 1504 թուականին միայն դուրս գնաց նաւով դէպ ի արևմտեան Հնդկաստան, և ընդունվեցաւ Օվանդօյի կողմից այնպէս, ինչպէս ակնկալութիւն էր ունեցած։ Նա, թէև ստորադրեալ մարդու պէս, ստացաւ կուսակալից ինչ ինչ մեծակշիռ յանձնարարութիւնք, որ շատ

անգամ նոյնպէս եւ պատուաւոր, ինչքան և շահաւէտ էին նորա համար։ Բայց մի փոքր յետոյ և այս դրութիւնը հաւանելի չէր նորան, և նա 1511 թուականին ուրախութեամբ գործ դրեց այն յարմարաւոր միջոցը, որ բացվել էր նորա առաջև, այսինքն Դոն Դիեգօ Բելասկվեցին ճանապարհորդակից լինել դէպ ի Կուբա կղզին, որի մասին թղթակցութիւն էր արել Օվանդօն։ Բելասկվեցը շուտով խելամուտ եղաւ իւր ընկերակցի նշանաւոր յատկութեններին և ընտրեց նորան իւր ատենադպիր։ Բայց Կորտեցը ծնած չէր, մի մեծաւորի կամքի տակ անպայմանաբար ստորադրելու իւր անձը, և այդպէս չպակասեցին առիթներ զանազան անախորժ հանդիպմունքի նորա և իւր մեծաւորի մէջ։ Կորտեցը մինչև այն աստիճան վստահ գտանվեցաւ, որ մի տհաճ հակառակորդ կողմի հետ միանալով, հրապարակաբար բողոքաւոր եղաւ Բելասկվեցի վերայ։ Սորա հետևանքը այն էր, որ Կորտեցը դատապարտվեցաւ մեռանել սրով․ բայց Բելասկվեցը մեղմացրեց այս պատիժը աքսորանքով և վերջումը վերացրեց սորան եւս, ըստ որում ցանկանումէր այս շնորհալի մարդու կեանքը պահպանել հայրենիքի համար։ Այս բոլոր անցքերը խառն էին զանազան անակնկալ դիպուածների հետ, որոնց պատկանումէ և մի սիրողական կապակցութիւն Կաթարինէ Սուարեցի հետ, որ մի հաղարապետի դուստր էր, որի հետ եւս ամուսնացաւ յետոյ Կորտեցը։ Բելասկվեցի հետ հաշտվեցաւ նա այնքան կատարելապէս, որ ստացաւ նորանից ինչ ինչ մեծարական նշաններ, և յետոյ ոչ աննշան հողասահմանք նոցա բնակիչ ինդիանացի ժողովրդով, որպէս սեփականութիւն։

Կորտեցը արդէն 12 տարի գտանվումէր արևմտեան Հնդկաստանումը և այս ժամանակի մէջ վարժվելով դարձել էր մի կատարեալ պատերազմագէտ մարդ։ Նորա առաջին խոշորաբարոյութիւնը փոխվել էր մի ճիշդ գործականութիւն և նորա պատերազմական յանդգնութիւնը դարձել էր մի բանաւոր քաջութիւն շրջանկատութեամբ ու խոհեմութեամբ, այնպէս, որ թէև նա մինչև այժմ օտարի իշխանութեան ներքոյ միայն գործ էր կատարած, այնու ամենայնիւ երևումէր այնպէս ընդունակ ինքնիշխան առաջնորդ լինելու, ինչպէս ոչ ոք։ Մի այսպիսի մարդ որոնումէր և խնդրումէր Բելասկվեցը, երբ որ նա, կամենալով միւս տիրապետողների շարքը մտանել և իւր անձը ազատել այն ծանր լծի տակից, որ կրումէր նա կղզիների վերայ գերագոյն իշխանի, Դոն Դիեգօ Կոլոմբոսի հրամանի ներքոյ, հաստատեց մտքումը ճանապարհորդներ ուղարկել դէպ ի ցամաքահողը Ամերիկայի։ Սորա զանազան բաժինները Կոլոմբոսի ընկերակիցների ծովագնացութեամբ ծանօթ էին դարձած և այն աշխարհների հարստութիւնը և պտղաբերութիւնը

հերիքապէս ապացուցած էին, թէ նոցա տիրապետութիւնը կարող էր ձոխ շահաւէտութիւնք բերել։ Արդէն երկու անգամ փորձել էր Բելասկվէցը ոտք հաստատել Մեքսիկօյի մէջ, նախ մի ձեռնարկութեամբ որ եղած էր Ֆերդինանդ դը Կորդովայի առաջնորդելովը 1517-ին, և սորա մահից յետոյ, Ջուան Գրիխալվայի ձեռքով, որ 8-ին ապրիլի 1518 թ. Կուբա կղզու Սանտ-Եագօ քաղաքից պարզել էր առագաստը։ Երբ որ սա հասաւ Մեքսիկօյի ծովեզերեայքին, իւր զօրքը դուրս հանեց դէպ ի ցամաք գրեթէ այն տեղ, ուր Կորդովայի ժողովուրդը կոտորված էր. բայց, Ինդիանացիք կրկին և դարձեալ յարձակվելով նորա վերայ, ստիպվեցաւ նա հետ դառնալ դէպ ի նաւերը. սորանից յետոյ նաւարկեց նա ծովեզերեայքի մօտից, շատ տեսակ յարմարաւոր միջոցներ գտանելով աշխարհի պտղաւէտութեանը և ժողովրդի քաղաքագործութեանը ծանօթանալու և զարմանալու դոցա վերայ։ Երբեմն դէպ ի ցամաք դուրս գալով, ունեցաւ հաղորդակցութիւն Ինդիանացոց հետ, և այս միջոցին փոխանակութեամբ ստացաւ նոցանից մի քանի ոսկեղէն զարդարանք։ Վեցամսեայ ուղևորութենից յետոյ, վերադարձաւ դէպ ի Կուբա, որովհետև չէր գտած ոչինչ ապահով նաւահանգիստ, այլև ծովածոցի հոսանքի բռնութենից շատ նեղութիւնք էր կրել։

Այն տեղեկութիւնքը որ Գրիխալվան բերել էր իւր հետ, ևս առաւել հաստատեցին Բելասկվեցի խորհուրդը և պատճառ տուեցին նորան ճանապարհորդներ ուղարկել դէպ ի այն ծովեզերեայքը, որոնց Գրիխալվան անուն էր տուել Նոր Սպանիա։ Նա գրաւեց ամենայն տեսակ մարդիկ, պատերազմողք և տնկարկուք և այժ բաւական շատ արծաթ գործ դրեց այս պատրաստութեան համար։ Գեռ ևս պակաս էր նորան մի առաջնորդ, որովհետև ինքը չկամէր յանձն առնուլ առաջնորդութիւնը, բայց բոլոր փառք ու օգուտը որ յուսալի էր այդ ձեռնարկութենից, կամէր պահել իւր համար։ Նորա խորհրդականներից երկուքը դարձուցին նորա ուշադրութիւնը Կորտեցի վերայ, և Բելասկվեցը յօժարութեամբ ընդունեց նոցա առաջարկութիւնը, որովհետև Կորտեցի մէջ բաց ի պատերազմողական առաքինութենից նկատեց և այնպիսի յատկութիւնք, որ ցանկալի էին նորան մի պատերազմական գործի հրամանատարի մէջ։ Այլև Կորտեցը երախտապարտ էր նորան և ոչ այնքան հարուստ մարդ, որ երևէր նորա աչքին վտանգաւոր։ Մնացած բանեբուռը նա շատ աջողակ էր այս գրութեան մասին։ Նա հմուտ էր այն արուեստին որով պիտոյ է միւսերը գրաւել իւր նպատակների համար, ստորադրեալ մարդերի մէջ յարգութիւն ստանալ և պահպանել. այլև ունէր նա մի պատկառելի կերպարանք, մի գրաւիչ դէմք և մի անսովոր յաջողակութիւն այն ամենայն հնարագործութենների մէջ, որ պատե-

բաղմը հանդէս է բերում: Կորտեցը յանձն առաւ նորան առաջարկած պաշտօնը, մեծ պատրաստականութեամբ և մի եռանդնոտութեամբ, որ պահանջումէր նոյն իսկ գործը: Իւր բարձրանալը դէպ ի զօրապետութեան աստիճան գիտաւորեալ ձեռնարկութեան խորհրդով հրապարակաւ ծանուցանելու, պարզեց իւր ապարանքի վերայ իւր դրօշակը, աշխատեց իւր բարեկամների և միւսերի մասնակցութիւնը գրաւել, հոգաց պատերազմի պիտոյք, արծաթ փոխ առաւ իւր բարեկամներից և աւելի քան թէ 100,000 ոսկի, գործ դրեց իւր քսակից նաւերի շինութեան և զօրքի պատրաստութեան համար: Բայց նորա եռանդնոտութիւնը շուտով անհաւանելի եղաւ այնպիսի մարդերի, որ իւրեանց մէջ չունելով մի ճշմարիտ արժանաւորութիւն, կարող չէին և մի նշանաւոր մարդ տեսանել իւրեանց կողքին, այլ աշխատումէին իսկոյն խոնարհեցնել իւրեանց ձեռքի տակ ամենայն մարդ որ երևելի էր կացուցանում իւր անձը: Ոչ այլ սրտով նայումէին նորա վերայ այնուհետև և Բելասկվեցի խորհրդականքը: Որովհետև Կորտեցը աւելի մեծ արդիւնք ցոյց տուեց քան թէ նոքա ակնկալել էին, երևեցաւ նոցա որպէս թէ ձգտումէր դէպ ի ինքնիշխանութիւն, և նոքա գործ դրեցին այն բոլոր կարողութիւնը, որ տալիս էր նոցա կուսակալի շնորհը, սորա մէջ ատելութիւն սերմանելու դէպ ի նա: Կորտեցը շուտով նկատեց իւր մեծաւորի այլամտութիւնը և մտածումէր թէ պիտոյ է երագել յառաջ քան թէ մի նոր վճիռ կը հաստատվէր կուսակալի կողմից: Նա շուտացրեց իւր պատրաստութիւնքը այնպէս, որ ահա 18-ին նոյեմբերի Սանտ-Եագօ քաղաքից դուրս գնաց նաւով: Բելասկվեցը երկիւղալի էր համարել խափանել այս ուղևորութիւնը, կէս մի որ չկամէր մի վճռական սահմանադրութիւն առնել, և կէս մի միտ դնելով այն բանին, որ այս գործի մասնակիցքը բաւական շատ արծաթ էին դրել դորա վերայ, և պիտոյ է զրկվէին դորանից, եթէ գործը յետ մնար, մտածումէր թէ պիտոյ է խնայել դորանց: Բայց ինչ որ նա յայտնապէս չհամարձակվեցաւ առնել, փորձեց ծածկապէս. նա պատուէր տուեց շատ պաշտօնակալների հսկել զօրապետի վերայ. Սանտ-Եագօյից գնաց Կորտեցը դէպ ի Սանտ Տրինիդադ, որովհետև պիտոյ էր նորան լրացուցանել իւր ճանապարհի պաշարը և պատերազմական հարկաւորութիւնքը, բայց մանաւանդ մասնակիցներ ճարել գործի համար: Հազիւ թէ նաւերի առագաստը պարզել էր, և ահա Բելասկվեցը զղջանալով, որ այդ մեծակշիռ պաշտօնը հաւատացել էր նորան, լրատարք ուղարկեց դէպ ի Վերդուգօ անուն կուսակալը Տրինիդադի, իշխանութիւն տալով սորան, Կորտեցը ձգել աստիճանից և յետ ուղարկել նորան դէպ ի Սանտ-Եագօ: Բայց Կորտեցը իւր իշխանութիւնը այնպէս հաստատել էր, և այնպէս գրաւել

էր իւր բոլոր ընկերակիցների սիրտը, որ Վերդուգօն կարող չէր կամ թէ չհամարձակվեցաւ ստացած հրամանները գործ դնել, այլ միայն հերիքացաւ այն բանով, որ Կորտեզը խոստանայ նորան գրաւոր կերպով, թէ իւրեան հաւատացած իշխանութիւնը չէ գործ դնելու դէպ ի չարը։ Կորտեզը թողեց Սանտ-Տրինիդադը և շրջանաւեց կղզու արևմտեան ծայրը, որ Հաւաննայումը աւելի շատ պատերազմողք ներս առնու։ Սորա վերայ անց կացաւ մի քանի ժամանակ, և այս հանգամանքից օգուտ քաղելով Բելասկվեցը, որ այժմ շատ սաստիկ զայրացած ու խռոված էր, միւսանգամ սկսեց աշխատել վայր ձգելու Կորտեզը։ Դօն Պեդրօ Բարբան հրաման ստացաւ բանտարկելու Կորտեզը, սորան հաւատարիմ պահապաններով ուղարկելու դէպ ի Սանտ-Եագօ և պատուիրելու նաւերին, որ ճանապարհ դուրս չգան, մինչև մի նոր հրաման չստանան։ Բաղդի բերելովը, Կորտեզը Բարթոլոմէոս Օլմէյդայի ձեռքով բաւական վաղ տեղեկութիւն ստացաւ այս հրամանի մասին, և կարող էր պատշաճաւոր հնարներ գործ դնել։ Նա հեռացրեց իւրեանից բոլոր յայտնի բարեկամքը Բելասկվեցի, և որովհետև միւսերը ինքեանք մեծ ակնկալութիւն ունէին այդ ձեռնարկութեան գլուխ գալուց, այս պատճառով հեշտ եղաւ նորան, գրաւել նոցա սիրտը, և զայրացնել նորանց կուսակալի վերայ, որ իբրև թէ դիտաւորութիւն ունէր զրկել նորանց իւրեանց զրկանքի փոխարէնից։ Նորա ընկերքը ոչ թէ ընդդէմ դուրս եկան նորան, այլ մանաւանդ թէ աշխատեցին ամենայն կերպով իւրեանց անձը սիրելի կացուցանել նորան և առիթ տալ նորան ասելու, թէ չկամէր բաժանվել նոցանից։ Փոքր ինչ յետոյ (10 փետր. 1519 թուականի) Հաւաննայից դուրս գնաց նա 11 նաւերով, որոնց առաւել մեծը կարող էր ոչ աւելի քան թէ 5,000 պուդ ծանրութիւն տանել։ Մի այդպիսի չնչին նաւահանգէս զարմացնումէ, մանաւանդ եթէ մտածէինք, թէ ինչ աշխատութիւն գործ էր դրած նորա պատրաստութեան վերայ և նոյն իսկ կառավարութիւնը Կուբայի մէջ մասնակից էր եղած ծախքին։ Նաւաստիքը, բաղկանումէին 670 մարդուց. 508 հոգի սահմանված էին ցամաք հողի վերայ պատերազմելու, միւսերը էին նաւորդք. 13 մարդ, հրացանակիր էին, 32 բալիստրաձիգք, միւսերը սրով ու նիզակով զինաւորված։ Փոխանակ պատերազմական զէնքի կրումէին նոքա բամբակեայ կարճ զգեստիկք, որ բաւական պաշտպանող էին Ինդիանացոց անկատար յարձակողական զէնքի երեսից։ Բաց ի սորանից դրեցին նաւերի մէջ 16 ձի, 10 հասարակ թնդանօթներ և 4 Ֆալկօնետք։ Այս բոլոր փոքրիկ զօրագունդը բաժանած էր նաւերի թուով 11 ընկերութիւնք. Նաւերի դրօշակքը ցուցանումէին մի խաչ այսպիսի մակագրով. In hoc signo vinces։ (Այսնշանովս կը յաղթես).

Սուրբ Պետրոսին ընտրած էին իւրեանց պաշտպան, և երկու հոգևորք պիտոյ է նաւերի կրօնական պիտոյքը հոգային և ինդիանացիք դարձուցանէին դէպ ի քրիստոնէական հաւատ: Որպէս ուղեցոյց սպասաւորումէր Անտոնիոս Ալամինոսը, մի շատ յաջողակ նաւավար, որ շատ լաւ ծանօթ էր այն ծովերի հետ, որովհետև ճանապարհորդակից էր եղած Կոլոմբոսին, յետոյ Կորդովային և Գրիեալվային: Բայց թէ առաջնորդ և թէ բազմութիւն, ամենեքեան հոգիացած էին մի վերին հոգով, որով ամեն մինը նոցանից համարումէր իւր անձը նոյնքան ևս պատերազմող հաւատի համար, ինչքան որ նա իւր երկրաւոր բաժինի համար կարծումէր թէ հոգս է առնում պատուաւոր ու շահաւէտ կերպով: Մի և նոյն հոգին, որ քաջալերեց Կոլոմբոսը դէպ ի իւր ձեռնարկութիւնը, կենդանի էր և Կորտեզի մէջ, միայն թէ սա չէր այնքան խոհեմ և զգոյշ, այլ և թոյլ տուեց իւր կրօնասիրական եռանդնոտութեանը մոլորեցնել նորան դէպ ի ինչ ինչ անխորհուրդ գործեր: Այս հնարներով մտածումէր նա մի թագաւորութեան տիրապետել, որ գրեթէ այնքան մեծ էր ինչպէս Սպանիա և, ինչպէս երևումէ, աւելի բազմաժողովուրդ քան թէ նա. բայց Կորտեզը չունէր յուսալու մի այլ կողմից օգնութիւն, քան թէ այն որ դուցէ թէ բաղդը անակնկալ հասուցանելու էր նորան: Նա ընտրեց այն ճանապարհը, որով ուղևորվել էր Գրիեալվան և հակառակ հողմերից ստիպվեցաւ Կուցումել կղզու մօտ ցամաք դուրս գալ. բնակիչքը փախած էին, բայց վերադարձան, և ինչ որ շատ մեծակշիռ բան էր, Կորտեզը գտաւ նոցա մէջ մի Սպանիացի Հիերոնիմօ դը Ագվիլար, որ 8 տարի յառաջ որպէս գերի ինդիանացոց յետ էր մնացած այն տեղ և այնուհետև կատարելապէս հմտացել էր նոցա լեզուին: Այս մարդը շատ օգտակար էր Կորտեզին, որ կարող էր գործ դնել նորան որպէս թարգման օտար եկաւորների և կղզեցոց մէջ: Այս տեղ արդէն ցոյց տուեցին Սպանիացիք իւրեանց մոլեկրօն եռանդնոտութիւնը, կործանելով հեթանոսական տաճարներ, նոցա փոխանակ դնելով շատ տեղ Մարիամ կուսի պատկերը: Կորտեզը շրջանաւեց արևելեան ծայրը Յիուքատանի, ապա հիւսիսային եզրի մօտից նաւելով յառաջ գնաց և ներս վազեց Թաբասքօ գետի մէջ, յուսալով թէ այն տեղի բնակիչքը նոյնպէս բարեկամաբար կ'ընդունեն նորան, ինչպէս ընդունած էին Գրիեալվան: Բայց նորա յոյսը չարդարացաւ. Նա հանդիպեցաւ այն տեղ մանաւանդ թէ մի շատ թշնամական տրամադրութեան և ստիպուած էր բռնութիւն գործ դնել վերջապէս: Նա ցամաք դուրս եկաւ, թնդանօթներից ռումբեր արձակելով, հարկադրվեցաւ արշաւանքով առնուլ Թաբասկօ քաղաքը և շատ դժուարութեամբ միայն յաջողեց նորան իւր թնդանօթներով և ձիաւորների դաշնա-

գործական յարձակմամբ ցրուել ու հալածել Ինդիանացոց մեծ բազմու-
թեամբ մօտեցած ժողովուրդը։ Այս յաղթութիւնը Սպանիացոց կող-
մից անարիւն չեղաւ. սոքա ունէին 2 մեռածք և 70 վիրաւորք. բաց
ի դորանից, մի գերի ընկած Ինդիանացի, Մելքիօր անուն, որ երկար
ժամանակ կացած էր Սպանիացոց մէջ և ուսել էր նոցա լեզուն, փա-
խաւ դէպ ի իւր հայրենակիցքը։ Կորուստը Ինդիանացոց կողմից և նոցա
երկիւղը այնքան մեծ էր, որ նոքա հաշտութիւն խնդրեցին, իւրեանց
պատրաստականութիւնը հնազանդվելու Սպանիացոց թագաւորին յայտ-
նեցին, հարկատու եղան և 20 կին ծառայք բերեցին։ Սոցա մէջ գտան-
վումէր և մի մեքսիկանացի կին, որ Մեքսիկոյից որպէս ծառայ վաճառ-
ված էր դէպ ի Թաբասկօ։ Նա կատարելապէս հասկանումէր Թաբասկե-
ցոց լեզուն և յետոյ որպէս թարգման շատ պիտանի եղաւ Կորտեցին,
որովհետև, ինչպէս ստուգեցին, Մեքսիկացիք և Թաբասկեցիք խօսումէին
ղանազան լեզուներ, և Ագվիլարը տեղեակ չէր Մեքսիկացոցը։ Մեքսի-
կացի կինը, երբ որ մկրտված էր, յայտնի է դարձել անունովս Դօննա
Մարիա։

Կորտեցը յառաջ տարաւ իւր ծովագնացութիւնը հիւսիսահայեաց
արևմտեան ուղղութեամբ և ցամաք դուրս եկաւ Սան-Ջուան դը Ու-
լօայի մօտ, 21 ապրիլի 1519 թուականին խարիսխ ձգեց այն հաստա-
տուն դիտաւորութեամբ, որ այս աշխարհից դուրս չգնայ, մինչև չըն-
վանդակէ նորա տիրապետութիւնը։ Տակաւին ցամաք դուրս գալուց
յառաջ, Սան-Ջուան դը Ուլօա սահմանի կուսակալների դեսպանքը ե-
րևեցան եկաւորների նաւի վերայ և հարց ու փորձ արեցին թէ ինչ էր
նոցա եկաւորութեան խորհուրդը, այլև առաջարկեցին Կորտեցին օգ-
նութիւն, եթէ նա կարօտ էր սորան։ Յայտնվեցաւ արդէն, որ Կորտե-
ցի ընթացքը Թաբասկեցոց հետ իմացած էին Մեքսիկացիք, որ և ցան-
կանումէին ամենաքաղցր ճանապարհով հեռացնել Սպանիացի եկաւոր-
քը։ Կորտեցը աշխատեց հանգստացնել Մեքսիկացոց սիրտը, և երբ որ
հեռացած էին նոքա, միւս օրին դէպ ի ցամաք դուրս հանեց իւր զօրքը
և իջևանեցաւ այն բանակի մէջ, որի պատրաստութեանը ջերմեռանդու-
թեամբ օգնական գտանվեցան տեղացի բնակիչքը և այդպէս ինքեանք
իւրեանց ձեռքով նախապատրաստեցին իւրեանց ծառայութիւնը։ Գա-
լոյ օրին երևեցան այն կողմերի կուսակալքը Տեվտիլէ և Պիլպատօէ ա-
նուն, բերելով իւրեանց հետ բազմաթիւ ընկերակիցք, և մեծ յարգու-
թեամբ ընդունվեցան Կորտեցի կողմից։ Սա յայտնեց նոցա, թէ եկած
էր որպէս դեսպան իւր թագաւորից և ունէր այնպիսի խորհրդաւոր
յանձնարարութիւնք, որ կարող էր միայն նոցա թագաւորին յատկա-
պէս բանալ։ Այս պատճառով պահանջեց նա, որ անյապաղ տանեն նո-

րան Թագաւորի մօտ։ Այս պահանջողութիւնը մի նկատելի դժուարութիւն բերեց Մեքսիկացոց վերայ․ և նոքա չհամարձակվեցան ոչ ընդդիմանալ դորան և ոչ էլ տեղի տալ։ Նոքա աշխատեցին ընծաներով հեռացնել Սպանիայի զօրապետի միտքը իւր պահանջողութենից, բայց այդ ընծաներով էլ առաւել գրգռեցին նորա սիրտը, որովհետև նոցա մէջ գտանվում էին մի քանի արուեստայարմար ոսկեղէն գործեր։ Նոյնքան էլ անյօժար էր կուսակալների խնդրին ունկն մատուցանել (ականջ դնել)․ բայց կամենալով ցուցանել նոցա եւրոպական զէնքի ահարկու ներգործութիւնը, գործ դրեց դիպուկ միջոցը ականատես կացուցանելու նորանց մի զինաշարժութեան, որի միջոցին թոյլ տուեց իւր թընդանօթին ռմբակոծել մի մօտակայ անտառ։ Նա հասաւ իւր նպատակին․ բնակիչքը ահով ու զարմացքով պաշարվեցան։ Այս բոլոր միջնորդախօսութեան ժամանակին նկատեցին մեքսիկացի կուսակալների հետ եկած ընկերների մէջ նկարիչներ, որ ամենայն եռանդնոտութեամբ աշխատում էին ձեւակերպել բոլոր առարկայքը որ տեսանում էին նոքա, որ այդպէս զգալի կացուցանեն պաշտօնակալների յայտարարութիւնը Մեքսիկօյի կայսրին։ Կորտեզը օգուտ քաղելով այս պատեհ միջոցից, ուղարկեց նոյնպէս իւր կողմից մի քանի եւրոպական ընծայք Մօնտեցումայի համար։ Արդէն սակաւ օրերի մէջ պատասխան եկաւ Մեքսիկօյից։ Կուսակալքը կրկին երևեցան Կորտեզի մօտ․ բայց որովհետև նոցա վերայ դրած յանձնարարութիւնը անհամաձայն էր սորա պահանջողութեանը, այս պատճառով միւսանգամ աշխատեցին ամենայն տեսակ ընծաներով հաշտեցնել նորան և գրաւել նորա սիրտը։ Հարիւր Ինդիանացիք դոցանով բեռնաւորված, երկար շարքով մօտենում էին։ Բոլոր ընծաների մէջ առաւելապէս գրաւեցին Սպանիացոց ուշադրութիւնը երկու բոլորակ տախտակներ, մինը զուտ ոսկուց, միւսը արծաթից․ առաջինը նշանակում էր արեգակը, վերջինը լուսինը։ Երբ որ եկաւորքը Սպանիացոց զարմացքից նկատեցին, որ հասել է պատեհ ժամանակը յառաջ տանելու իւրեանց պատգամախօսութիւնը, առաջարկեցին սպանիական առաջնորդին իւրեանց Թագաւորի հրամանը, որ այսպէս էր, թէ Կորտեզը շուտով պիտոյ է հեռանայ Մեքսիկացոց սահմանից․ բայց ոչ սակաւ զարմացան նոքա, երբ որ Կորտեզը յայտնեց նոցա, թէ այժմ իսկապէս պարտական է նա հաստատ մնալ իւր պահանջողութեան վերայ, այսինքն իւրեան տանել տալ Մօնտեցումայի մօտ, որովհետև իւր և նորա Թագաւորին մեծ անպատվութիւն էր հրաժարվիլ այս աշխարհից առանց կատարելու իւր վերայ դրած յանձնարարութիւնը։ Զարմացած Մեքսիկացիք ահ ու դողի մէջ աշխատում էին համոզել Կորտեզը, որ ոչինչ բանի չձեռնարկէ, մինչև լուր կը

գար իւրեանց նոր յայտարարութենից, որ ուղարկած էին կայսրին։ — Երբ որ Մօնտեցուման լսեց, որ Կորտեցը չկամի հնազանդել նորա հրամաններին և հաստատապէս մտադիր է մայրաքաղաքին այցելութիւն անել, ապա ցոյց տուեց նա գոնեայ մի բոպէ իւր հին վճռականութիւնը և սպառնացաւ, եթէ նա կամակորվելու էր իւր անհնազանդութեան մէջ, կոհել Սպանիացի եկւորքը աստուածներին։ Բայց շուտով վերադարձան նորա տարակուսանքը և տարտամութիւնքը և փոխանակ կատարելու իւր սպառնալիքը, հրաւիրեց իւր շրջակայ մարդիկը դէպ ի խորհրդակցութիւն, գործ դրեց թոյլ հնարներ և կրկին անգամ հրաման ուղարկեց Կորտեցին, որ հեռանայ մեքսիկեան թագաւորութենից. բայց այս հրամանի վերայ յաւելացրեց այնպիսի նշանաւոր և թանգագին ընծաներ, որ սպանիացի զօրապետը ևս առաւել հաստատվեցաւ իւր դիտաւորութեան վերայ մնալու։ Երբ որ Դօն Կորտեցը կրկնեց Տեւտիլէին իւր ցանկութիւնը կարողանալու տեսանել Մեքսիկօ, Տեւտիլէն բարկութեամբ և տհաճութեամբ դարձուց դէմքը նորանից, և բնակիչքը ևս բաժանվեցան նորանից. միւս օրին ոչ ով չվերադարձաւ նորա մօտ աւելի։ Այս պատճառով յառաջացաւ մեծ ահ Սպանիացոց բանակի մէջ։ Բելասկվեցի համախոհքը գլուխ բարձրացուցին և սկսեցին ակնարկութիւնք անել թէ հարկաւոր էր այսուհետև վերադառնալ դէպ ի Կուբա։ Դիեգօ դը Օրդացը, որ մինն էր նախակարգ պաշտօնակալներից և իւր զինուորական արդիւնքի հիման վերայ մտածումէր մի փոքր համարձակապէս բերան բանալ, վստահացաւ այս տրամադրութիւնը զօրքի զինուորական բացախօսութեամբ և կոշտութեամբ յանդիման անել զօրապետին, հաւատացնելով նորան, թէ ինքը յայտնումէր միայն բոլոր զօրքի կամքը և կարծիքը։ Կորտեցը երևեցաւ խռոված, բայց ցոյց տուեց թէ պատրաստ էր ունկն մատուցանել այն առաջարկութեններին և կամելով ապացուցանել թէ համաձայն է դոցա, տուեց հարկաւոր հրամանները, որ զօրքը պատրաստ լինի նաւ նստելու։ Այս կարգադրութիւնը մի զօրաւոր տպաւորութիւն գործեց զօրքի մնացած մասի վերայ, որ բաղկանումէր այնպիսի մարդերից, որոնք երևելի արծաթ գործ էին դրած և այժմ արծաթ ու յոյս կորած էին տեսանում։ Սոքա համարձակապէս յայտնումէին իւրեանց անհաւանութիւնը, խօսումէին ընդդէմ, տալիս էին սպառնալիք։ Կորտեցը օգուտ քաղեց այս տրամադրութենից, այլև ոյժ տուեց նորան լրտեսների ձեռքով։ Խռովութիւնը դարձաւ ընդհանուր. Կորտեցին յայտնեցին իւրեանց զարմանքը և տրտունջը. ասումէին թէ նորա ձեռնարկութիւնը անարժան է սպանիական հոգու քաջութեանը. ինքեանք յանձն կ'առնուին Մեքսիկոյի տիրապետութիւնը, եթէ նա թողու նորանց, և ընտրելու էին մի այլ ա-

ռաջնորդ որ նոցա աւելի արժանի էր։ Այս խօսքերը լսեց Կորտեցը ոչ առանց ուրախութեան, թէև դոքա անհամաձայն էին զինուորական ստորադրութեան կարգին. նա յայտնեց թէ նոցա դիտաւորութենների մասին սխալված է ինքը. բայց որովհետև այժմ տեղեակ է դոցա, ապա յօժար էր նա առաջնորդել նոցա որպէս ճշմարիտ Սպանիացի, և ամեն մինին հասանելու է փառք ու հարստութիւն, որին արժանի էր նա։ Այժմ հարկաւոր էր նորան մանաւանդ, իւր անձը անկախ կացուցանելու Կուբայի կուսակալից։ Այս խորհրդով հիմնարկեց նա մի գաղթաքաղաք սպանիական ընկերութենների օրինակով։ Մեծաւորքը ընտրվեցան զօրքի ձեռքով և ստացան անուն և իշխանութիւն, ինչպ ս սովորական էր Սպանիայումը։ Բայց ամենայն բան կատարվեցաւ թագաւորի անունով և արքայական հրամանի ներքոյ. բայց Կորտեցը հոգաբարձութիւն էր գործել որ այնպիսի մարդիկ միայն ընտրվէին գերագոյն պաշտօնակալք, որ բոլորովին անձնանուէր էին նորան։ Նոյն իսկ գաղթաքաղաքը ստացաւ անունս Վիլլա Րիկա դը Վերա-Կրուզ և քարոզվեցաւ անկախ Կուբա կղզուց։

Կորտեցը հիմնարկելով այս գաղթաքաղաքը, ունէր և մի այլ խորհուրդ։ Նորա սեփական իշխանութիւնը չէր գերագոյն հրամանով, ըստ որում Բելասկվեցը որ կացուցել էր նորան նաւերի առաջնորդ, կրկին յետ էր առել նորանից նորան յանձնած իշխանութիւնը։ Այժմ օգուտ քաղեց նա այն արքայական դատարանի հաստատութենից գաղթաքաղաքի մէջ, որ ստանայ դորանից մի իրաւացի վկայութիւն իւր պաշտօնի վիճակի մասին։ Եւ այսպէս, երբ որ այն պաշտօնակալքը մեծաւորական իշխանութեամբ զարդարվել էին, Կորտեցը երևեցաւ նոցա առաջև և յայտնեց թէ ինքը տեսանումէր նոցա մէջ ամփոփած արքայական իշխանութիւնը և թէ չէր կարող այլապէս համարել նորանց քան թէ իւր տեարքը արքայի անունով։ Այս պատճառով աՀա կամէր նա իւր ստացած իշխանութիւնը ցած դնել նոցա ձեռքումը և սպասումէր որ նոցանից մինը ընտրվի, ապագայումը հրամանատար լինելու զօրքին։ Նա ինքն պատրաստ էր որպէս հասարակ զինուոր ծառայել ամենայն պաշտօնի մէջ և ցոյց կը տար, թէ նա որպէս զօրավար մոռացած չէր, թէ ի՛նչ պարտականութիւնք ունի լցուցանելու որպէս ստորադրեալ անձն։ Սորանից յետոյ յանձնեց նոցա այն հաստատագիրը որով Բելասկվեցը կարգել էր նորան առաջնորդ, և հեռացաւ ժողովի միջից։ Նորա հրաժարումը իւր պաշտօնից ընդունեցին. բայց դատարանը իսկոյն յայտնեց նորան, թէ մինչև այժմ բաւական էին նորա առաջնորդական իշխանութենից և այժմ հաւատացած էին, որ նա շատ յաջողակ էր վարելու մի այդպիսի պաշտօն։ Այս պատճառով կամէր

դատարանը Թագաւորի անունով կրկին ընտրել նորան գերագոյն դատաւոր գաղթաքաղաքի մէջ և զօրքի առաջնորդ, և յանձնումէ նորան իւր առաջին պաշտօնը աւելի ընդարձակ իշխանութեամբ։ Այնուհետև ժողովեցին զօրքը, յայտնեցին նոցա ինչ որ պատահել էր, և նոքա միաբան հաւանութեամբ և մեծ ուրախութեամբ հաստատեցին դատարանի սահմանադրութիւնը։ Կորտեզը յանձն առաւ իւրեան յանձնած գերագոյն քաղաքական և զինուորական իշխանութիւնը խորին մեծարանքով դէպ ի գաղթաքաղաքի խորհրդականքը և շնորհակալութեամբ դէպ ի զօրքը։ Այսուհետև Կորտեզը համարեց իւր անձը Կուբայի կուսակալից անկախ, և կարծումէր թէ ամենայն մասամբ կարող է գործ կատարել Թագաւորի անունով։ Այս կարգադրութիւնքը լինելու միջոցին, գիտութեամբ թոյլ էին տուած գործակից լինելու Կորտեզի համախոհներին միայն։ Այս պատճառով մի բնական բան էր, որ Բելասկվեցի բարեկամքը տհաճ էին արած կարգադրութենների վերայ․ և դոքա, արդարև դուրս եկան այժմ և յայտնեցին իւրեանց անհաւանութիւնը այն բանի վերայ որ եղած էր, և այդ բոլոր ընթացքը քարոզեցին անիրաւ և ապստամբական։ Բայց Կորտեզը էր մի մարդ, որ գիտէր վճռաբար գործ կատարել, երբ որ հարկաւոր էր։ Նա հրամայեց տհաճների գլխաւորքը Դիեգօ դը Օրդազ, Ջուան Էսկուդերօ, Բելասկվեց դը Լէօն կապանքի մէջ դնել և նաւերի մէջ պահպանել։ Սորանով միւսերը ահ ստացան և լռեցին։ Բայց Կորտեզին հարկաւոր էր ոչ այնքան պատժել մի անհնազանդութիւն, քան թէ քաջ մարդեր օգնական գտանել իւր համար։ Այս պատճառով աշխատեց նա քաղցրութեամբ գրաւել կալանաւորների սիրտը, որ և յաջողվեցաւ նորան առանց մեծ դժուարութեան, և սկսեալ այս ժամանակից, անփոփոխ հաւատարմութեամբ անձնանուէր եղաւ նորան Բելասկվեց դը Լէօնը մինչև իւր անբաղդ կատարածը Մեքսիկօյի մէջ։ Միւսերի վերայ մեծ ներգործութիւն ունեցաւ մեքսիկեան ոսկին, այնպէս, որ նոքա ևս խոնարհեցան Կորտեզին։

Այսուհետև մտածումէր Կորտեզը, թէ կարող է սկսանել իւր միւս ձեռնարկութիւնքը և թողուլ իւր բանակը։ Բայց ամենից յառաջ համոզեց նա գաղթական ժողովուրդը մի թուղթ արձակել դէպ ի Սպանիացոց Թագաւորը, իւրեանց ընթացքը արդարացնելու և արքայական հաստատութիւնը ստանալու Կորտեզի ընտրութեան և նորան յանձնած իշխանութեան մասին։ Նա ինքը մի թուղթ գրեց նոյն խորհրդով և գործ դրեց մի հնար, որով յոյս ունէր անտարակոյս հասանել իւր նպատակին։ Գրեթէ բոլոր յայտարարութիւնքը, որ նոր բացած աշխարհիցը գալիս էին Եւրոպա, լի էին ամենայն չափազանցութեամբ, մինչ

որ մինը այն գեղեցիկ յոյսերից շատ անգամ կատարված չէր։ Այս բանից զգուշանալու համար, Կորտեզը համոզեց իւր զօրքը հրաժարվել իւրեանց բաժնից, որ ունէին նոքա Մօնտեզումայի ուղարկած գանձերի մէջ, և ուղարկել դորանց նորա նամակի հետ միասին դէպ ի Սպանիա։ Այնքան մեծ էր Կորտեզի պատիւը, որ նոքա յօժարութեամբ կամակից գտանվեցան, և այդպէս պատճառ տուեցին այն համբաւին Եւրոպայի մէջ, թէ Մեքսիկօն մի շատ ճոխ աշխարհ է։ Պուերտօկարերօ և Մօնտէյօ անուն նախակարգ պաշտօնակալքը գաղթաքաղաքի արձակվեցան դէպ ի Եւրոպա, այդ բոլոր բաները հասուցանելու թագաւորին․ բայց Կորտեզը հոգաբարձութիւն գործեց զգուշացնել նորանց, որ իւրեանց ճանապարհի վերայ չմօտենան Կուբա կղզուն։

Յառաջ քան թէ Կորտեզը դուրս գնաց իւր բանակից, պատահեցաւ նորան մի առանձին բաղդաւոր դիպուած, որ ապագայումը ոչ սակաւ ձեռնտու եղաւ նորան։ Մի քանի հնդիկանացիք աշխատումէին մի փոքր ծածուկ կերպով մօտենալ Սպանիացոց, և երբ որ նկատեցին նորանց, բերեցին Կորտեզի առաջև։ Նոքա ասացին, թէ ուղարկած էին Ցեմպօալլա անուն մօտակայ քաղաքի Կացիկի (իշխանի) կողմից, որ խնդրեն միայն Սպանիացոց բարեկամութիւնը։ Աւելի հարցափորձ առնելով, տեղեկացան, որ թէպէտ Կացիկը ստորադրած էր Մեքսիկացոց իշխանութեան, բայց կամենումէր իւր անձը ազատ կացուցանել նոցա լծի տակից։ Այս լուրը Կորտեզի մէջ ազդեց մեծ քաջալերութիւն, որովհետև տեսանումէր նա, թէ Մեքսիկացոց թագաւորութիւնը անմիաբան է իւր մէջ և նորա տիրողը չէր ամենևին ընդհանրապէս սիրելի։ Այս ծանօթութիւնը պատճառ տուեց նորան փութացուցանել իւր ընթացքը և դիմել դէպ ի Ցեմպօալլա։ Երբ որ նա գրաւած էր արդէն Կացիկի սիրտը, դարձաւ իսկոյն դէպ ի Խիահուիցլա կամ թէ Գվիաբիսլան, ուր կամեցաւ նա մի ամուր բնակութիւն շինել, որովհետև տեղը շատ յարմարութիւն ունէր այդ մասին։ Նա ինքը ձեռք մխեց այն ամրոցների շինութեան մէջ և շուտով պատրաստ էր գործը։ Ապա դաշն կապեց այս սահմանի Կացիկի հետ, որ նոյնպէս տհաճ էր, ինչպէս Ցեմպօալլայի տիրողը, և նոյնպէս հաւատացած էր Սպանիացոց զէնքի գերազանց զօրութեանը։ Երբ որ սորանից յետոյ եկան Մեքսիկացոց դեսպանքը, սովորական հարկը պահանջելու, ըմբռնեցին նորանց և կամէին զոհել, եթէ Կորտեզը վերայ հասած չլինէր։ Կացիկները այսպիսի ընթացքով ապստամբվել էին իւրեանց տէրանցից և այսուհետև պիտոյ է ամենայն զօրութեամբ օգնէին Սպանիացոց։ Նոքա որոշակի յայտնեցին իւրեանց անձը, որպէս հպատակք սպանիական մեծութեան, և նոցա օրինակին հետևեցան այլևս Տօտօնակքը, մի ցեղ, վայրենի ժողովուրդ,

որ՝ բնակւումէր սարերի մէջ՝ և յօժարակամ միաւորվեցաւ նոցա, Կորտեցին առաջնորդելու դէպ ի Մեքսիկօ։

Թէպէտև այսպէս բաղդաւոր սկսած էր գործը, այնու ամենայնիւ կային տհաճ մարդիկ, սոքա միաբանվեցան դաւաճան խորհրդով, որ ձեռք բերեն մի թեթևընթաց նաւ և նորանով փախստական լինին դէպ ի Կուբա, Բելասկվեցին տեղեկութիւն տալու այն մասին, ինչ որ պատահել էր։ Բայց սոքա էին ստորակարգ մարդիկ որ մասնակից էին այս դաւաճանութեանը, այնու ամենայնիւ կարողացան նոքա ծածուկ պահել այս գաղտնիքը, մինչև նոյն րոպէին, երբ որ պիտոյ է իրագործվէր դա, մատնեց դորան դաւաճաններից մինը։ Այս անցքը ստիպեց Կորտեցին ամենայն կապակցութիւն Կուբայի հետ անկարելի գործել, և հաստատեց մտքումը աւերել բոլոր նաւերը։ Միաբան հաւանութեամբ ջարդուփշուր արեցին նաւերը, պահելով միայն նոցա չուանները, երկաթը և անօթները գաղթագիւղի մէջ։

Սորանից յետոյ, Կորտեսը 16-ին օգոստոսի 1519 թ. 500 հետևակ մարդով, 16 ձիաւորով և 6 թնդանօթով ճանապարհ ընկաւ դէպ ի Մեքսիկօ, նորա զօրքի միւս մասը մնաց Վիլլա Րիքայի մէջ, որոնց վերակացու էր Էսկալանտէ, մի շատ հաւատարիմ պաշտօնակալ։ Ցեմպօալլայի Կացիկը օգնեց Սպանիացոց կենսական պաշարով և տուեց նոցա բեռնակիր մարդիկ պատերազմի պիտոյքի և այլ ծանրութենների համար, որ ասվումէին Տլամամա։ Այլև Սպանիացիք ստացան նորանից 400 ինդիանացի զինուորք, որ նոյն միջոցին կարող էին լինել և պատանդք։ Այսպիսի պատրաստութեամբ ճանապարհ ընկաւ Կորտեսը դէպ ի Տլասկալ կամ Տլաքսկալլան և հասաւ այս տեղ, առանց հանդիպելու դժուարութենների։ Նա ուղարկեց չորս Ցեմպօալլացիք բնակիչների մօտ, բայց իսկոյն ըմբռնվեցան նոքա և սահմանվեցան զոհ լինելու։ Նոյն իսկ Տլասկալացիք զէնք բարձրացուցին ընդդիմանալու Սպանիացոց, ըստ որում կարծումէին, թէ Կորտեսը կամի Մօնտեցումայի հետ միանալ ընդդէմ իւրեանց։ Գործը հասաւ մի սաստիկ պատերազմի։ Բազմաթիւ գունդեր յարձակվեցան Սպանիացոց վերայ, բայց սպանվեցան իսկոյն, մինչ ոչ մի հատ սպանիացի մահ չգտաւ, այնպէս որ նոքա շուտով նկատեցին իւրեանց յարձակմունքի անօգտութիւնը և հաշտութիւն խնդրեցին։ Նոքա խոստովանեցին իւրեանց անձը Սպանիայի հպատակ և միաւորվեցան Կորտեցի հետ ընդդէմ Մեքսիկօյի։ Սպանիացոց առաջնորդը, կռուի աւարտվելուց յետոյ, հանգիստ տուեց իւր զօրքին, որ հիւանդները առողջանան, և գործ դրեց այս միջոցը Տլասկալացոց պաշտօնատեղիքը, մանաւանդ թէ այն կռքատունքը, որ ասվումէին Տէօքալլի, կործանելու։ Այս ձեռնարկութիւնը անպատճառ

պիտոյ է Տլասկալացոց տեղիք տար զէնք բարձրացնելու, եթէ նորա մատրանապետ Բարթողոմէոս դը Օլմէդօն իւր խրատուութեամբ չհրաժարեցնէր նորան այդ անժամանակ կործանասիրութենից։ Միայն թէ պահանջեց սա, որ Տլասկալացիք դադարեն մարդազոհութենից։

6,000 հոգի դաշնակից օգնականներով ամրացած, դուրս գնաց Կորտեզը ընդդէմ Մեքսիկօյին և իւր ճանապարհի վերայ հասաւ նախ Խուլուլա, որ լինելով մի նշանաւոր քաղաք, յառաջուց եղած էր ազատ, բայց շատ նորուց ստորադրած էր Մեքսիկօյի իշխանութեան տակ. նա վայելումէր մեծ յարգութիւն և համարվումէր որպէս մի սրբազան սեփականութիւն աստուածների։ Այս պատճառով և պատմութիւն է լինում, թէ Մօնտեզուման հրաւիրել է այն տեղ Սպանիացիքը, որ այս տեղ աստուածքը լցուցանեն նոցա կործանութիւնը։ Այսու ամենայնիւ Մօնտեզուման հրապարակապէս յայտնել էր թէ պատրաստ է ընդունել օտարականքը, և այս պատճառով նոքա անարգել ներս մտան քաղաքի մէջ և ըստ երևութին մեծ բարեկամութեամբ ընդունվեցան։ Միայն թէ քաղաքի բնակիչքը պահանջեցին, որ Տլասկալացիք, իւրեանց հին թշնամիքը, մնային քաղաքից դուրս։ Շուտով երևեցան շատ թշնամական դիտաւորութենների հետքեր։ Բայց Կորտեզը չէր այնպիսի առաջնորդ, որ թողուր խաբէութեամբ որսալ նորան։ Նա որոշեց գործ կատարել յառաջ քան թէ թշնամաբար կը յարձակվէին նոքա. հրամայեց ըմբռնել քուրմերը և մեծաւորները, և կատարվեցաւ մի արիւնոտ բաղանիքի հանդէս. աւելի քան թէ 6,000 մարդ ծածկեցին փողոցները. սորանից յետոյ արձակեց կապած մեծաւորքը, քարոզելով թէ նա ներումէ նոցա դարանագործութիւնը, միայն թէ հոգաբարձու լինէին փախստականների վերադարձի մասին։ Այսպէս պիտոյ է սպանիական անունը ահ ու սարսափ տարածէր։ Արժանի է ուշադրութեան, որ Լասկաղասը յիշումէ, թէ այսպիսի կոտորածի պատճառ եղած չէ երբէք։

Մայրաքաղաքը դեռ ևս 12 մղոն հեռի էր. Կորտեզը Խուլուլայից 29-ին հոկտեմբերի 1519 թուակ., դուրս գնաց և ամենայն տեղ ամենամեծ յարգութեամբ ընդունվեցաւ, և համարեա թէ ամենայն ուրեք նկատեց նա մեծ անսիրելութիւն դէպ ի մեքսիկեան իշխանութիւնը։ Այս նկատողութիւնը լցուց նորա սիրտը հոյակապ յոյսերով. բայց և նորա պատերազմողքը շատ ուրախացան, Խալքօյի սարերից դէպ ի ցած տեսանելով այն պտղաւէտ դաշտը, որի վերայ տարածվումէր Մեքսիկօն նոցա առաջև. այս քաղաքը երևեցաւ նոցա այնպիսի փառաւոր կերպարանքով, որ շատերը այդ բոլոր տեսարանը կարծումէին մի երազ։

Մօնտեցուման երկար ժամանակ երկմտութեան մէջ էր, արդեօք պիտո՞յ էր Սպանիացիքը քաղցրութեամբ թէ թշնամաբար ընդունել: Այս պատճառով ուղարկեց նա կէս մի պատգամաւորք, որ հրաւիրեն նորանց, և կէս մի այնպիսի պատգամաւորք, որ պիտոյ է հրամայէին նոցա յետ դառնալ: Կորտեզը անփոյթ առնելով նորան հասած հրամանները, կազմ և ամուր պատերազմական կարգով հասաւ մայրաքաղաքի հանդէպ: Քաղաք ներս մտանելուց յառաջ, ընդառաջ եկան մեծ բազմութեամբ տէրութեան առաջին մարդիկը և ծանուցին Մօնտեցումայի գալուստը: Շուտով երևեցաւ սա բազմաթիւ ընկերներով մի պատգարակի վերայ: Երբ որ Կորտեզը նկատեց նորան, վայր իջաւ ձիուց և ողջունեց Ինդիանացոց իշխանը շատ մեծ պատկառանքով: Մօնտեցուման թողեց իւր պատգարակը և ընդունեց նորան նոյնպէս մեծարական կերպով, և այս բանը այնպիսի հիացք բերեց նորա ընկերների վերայ, որ Սպանիացոց վերայ նայեցին որպէս թէ, սոքա արդարև մի գերօրինակ կարգի մարդիկ էին: Սպանիացիք ստացան առանձին օթևաններ քաղաքի մէջ, որ այնչափ արձակ էին, որ թէ ինքեանք և թէ նոցա դաշնակիցքը կարող էին տեղաւորվիլ այն տեղ. բայց Կորտեզը հոգաբարձութիւն արեց, պատշաճապէս ապահովելու իւր անձը և իւր թընդանօթքը այնպիսի կերպով դասակարգելու, որ ել ու մուտքի վերայ տէր լինէին:

Սպանիացիք մօտ 450 մարդով և Տլասկալացի օգնական զօրքովը ներս էին մտած Մեքսիկոյի մէջ. բայց շուտով զգացին իւրեանց դրութեան անյարմարութիւնը, մանաւանդ եթէ Մեքսիկացիք քանդէին կամուրջները: Այլև շուտով նկատելի եղան թշնամական դիտաւորութեան նշաններ, զոր օրինակ Տլասկալացիք տեղեկութիւն տուեցին թէ Մեքսիկացոց քուրմերը խորհուրդ են տուած Սպանիացիք ընդունել քաղաքի մէջ, նոցա աւելի հեշտ կորուստ պատրաստելու համար: Սորա վերայ յաւելացան թշնամական գործեր թագաւորութեան սահմանի մօտ: Քուալպօպօկօ, մի մեքսիկացի հրամանատար զօրք էր ժողովել, Սպանիացոց դաշնակիցների վերայ յարձակվելու: Էսկալանտէն հանդէպ էր գնացել նորան և կռիւ էր տուել նորա հետ, թէպէտ յաղթող հանդիսանալով, բայց եօթն միւս Սպանիացոց հետ միասին ծանր վէրք էր ստացել: Մինը ընկած էր Մեքսիկացոց ձեռք, որ շատ անգթութեամբ վարված էին նորա հետ և նորա կտրած գլուխը ուղարկել էին զանազան քաղաքներ: Այս անցքը լսած լինելով Կորտեզը յառաջուց արդէն, քան թէ ներս էր մտած Մեքսիկոյի մէջ, կարծումէր թէ այսուհետև ապահով չէր ինքը, մինչև Մօնտեցուման չէր խոնարհեցուցել իւր իշխանութեան տակ: Սկզբումը զարհուրեցան Սպանիացիք այս համարձակ

խորհրդի վերայ, բայց շուտով լիակատար վկայութեամբ սրտի համաձայնեցան դորան: Երբ որ նա իւր մարդիկը այնպէս դասակարգել էր, որ նշանը տուած, իսկոյն պատրաստ էին զէնք բարձրացնել, դիմեց նա Մեքսիկացոց Թագաւորի մօտ սովորական ժամուն, և երբ որ նորա սպասաւորքը հեռացած էին, յանդիմանեց նորան այն մասին, որ թշնամաբար յարձակվել էին յետ մնացած Սպանիացոց վերայ, վիրաւորված էին ութ մարդ և սպանել էին մինին: Մօնտեզուման հաստատեց իւր անմեղութիւնը և իսկոյն հրաման արձակեց, որ Քուալպօպօկօն իւր մեղսակիցների հետ միասին բերվի Մեքսիկօ և կրէ իւր պատիժը: Կորտեզը ցոյց տուեց, թէ բաւական էր դորանով. բայց նա պահանջեց մի անխարդախութեան ապացոյց և իւր Սպանիացոց համար, և այս պատճառով խնդրեց Մօնտեզումայից գալ իւր բանակը: Սկզբումը ծանրացաւ Մօտեզուման այս պահանջողութեան վերայ, բայց շուտով տեղի տուեց հարկաւորութեանը, և իւրայինների մէջ յառաջացած խռովութիւնը խաղաղացրեց ասելով, թէ նա յօժարակամ գնացած էր դէպ ի Սպանիացոց բանակը:

Գերի տարած իշխանը ամենամեծ պատուով ընդունվեցաւ Կորտեզից, որ և նոյնպիսի մեծարանքով վարվումէր նորա հետ, կալանաւորը պահեց իւր մօտ իւր յատուկ ծառայքը, պաշտօնակալքը ունէին ազատ ել ու մուտք նորա մօտ և արտաքուստ երևում չէր ոչինչ փոփոխութիւն: Բայց սկսեալ այս րոպէից հրամայողը էր Կորտեզ. նա ուղարկեց մի քանի Սպանիացիք դէպ ի գաւառները, սորանց քննելու համար, պաշտօնից հանեց անհաճոյ մեծաւորներ և կարգեց նոցա տեղ միւս մարդիկ, և ամենայն բան կարգադրեց ինչպէս կամէր ինքը: Սորանից յետոյ Կորտեզը օգուտ քաղելով իւր գերակալ իշխանութենից պահանջեց, որ Մօնտեզուման խոստովանէ իւր անձը Սպանիայի հպատակ և յանձն առնու տարեկան հարկ վճարել: Այնուհետև այս անբաղդ իշխանը Կորտեզի դրդողութեամբ ժողովեց իւր թագաւորութեան մեծամեծքը և յայտնեց նոցա, թէ նոցա վիպասանական զրոյցների մէջ խոստացած օտարականքը երևել են ահա, և այս պատճառով ստորադրումէ նա իւր անձը նոցա թագաւորին: Կորտեզի հաւատացուցիչ խօսքերը, թէ Մօնտեզումայի դրութեան և օրէնքի մէջ չէ լինելու ոչինչ փոփոխութիւն, այլև Մեքսիկացոց երկիւղը պսակ տուեցին գործին: Բայց Մօնտեզուման քարոզելով իւր անազատութիւնը, յաւելացրեց դորա վերայ և մի մեծագանձ պարգև, որ ևս առաւել մեծացուցին նորա հպատակքը:

Այնուհետև կարծումէին Սպանիացիք թէ աւարտած էին նոցա տառապանքը և խնդրումէին, որ բաժանվէին ժողոված գանձերը: Զօկե-

ցին Թանգագին բաները և զարդարանքը և այնուհետև մնաց այնքան ոսկի, որ իւր արժողութեամբը հաւասար էր 1,400,000 գուլդենի։ Երևումէ որպէս թէ սա այն կողոպուտի հետ միասին որ արած էին Սպանիացիք, բաղկացնումէր բոլոր հարստութիւնը աշխարհի ազնիւ մետաղներով, որ և Մեքսիկացիք չէին համարում շատ մեծարժէք, որովհետև սովորութիւն չունէին գործ դնել դորան որպէս փոխանակութեան հնար առուտուրքի մէջ։ Այդ ոսկին ստանումէին գետերի միջից. հանքերի մշակութիւնը անծանօթ էր նոցա։ Այս հարստութիւնը բաժանելու միջոցին, որոշեցին մի հինգերորդ մասը Սպանիական գանձարանի համար, մի այլ հինգերորդ մասն Կորտեցի համար, ապա դուրս հանեցին զօրքի և նաւերի վերայ արած ծախքերը, այնպէս, որ յետոյ ամեն մի սօլդատ ստացաւ 280 գուլդեն։ Այս արծաթի փոքրութիւնը պատճառեց մի ընդհանուր տհաճութիւն. բայց Կորտեցը իմացաւ հանգըստացնել դժգոհները։

(Շարունակութիւնը յետագայ տետրակներում։)

Ս. Նազարեանց։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

Ճշմարիտը պիտոյ է ասել, սիրումեմ հին բաներ. ինչ պիտոյ է անել, ամենայն մարդ ունի իւր համար մի սիրական բան. իմ սիրականը է հնութեան խուզարկութիւնքը, մանաւանդ թէ այդ բանը ունենայ պատմական արժանաւորութիւն։ Այսօր ձեռքս ընկաւ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԵՐԿՐՈՐԴ Ռուսաց ԿԱՅՍԵՐՈՒՀՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Հրովարտակի պատճէնը, այն հրովարտակի, որ տրված է 1779 թուականի նոյեմբերի 14-ին Արժանապատիւ Պետրոս Մարկոսեան արքիմանդրիտի (*) անունով, որ առաջնորդումէր Ղրիմեցի Հայերին, երբ սոքա գաղթեցին Ղրիմից դէպ ի Դօն գետի ափը, Աղովից ոչ շատ հեռի, և նոր քաղաք շինելով անուանեցին նորան Նախիջևան։ Այդ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Հրովարտակով ՄԵԾ ԿԱՅՍՐՈՒՀԻՆ բարեհաճել է ցուցանել նոր Նախիջևանու Հայոց ազգին զանազան առանձնաշնորհութիւնք։ Շատերը Նախիջևանցի Հայերից անունով միայն գիտեն այդ Հրովարտակը, ուստի կարծումեմ, որ կը ցանկանային կարդալ որպէս բնագրի հաւատարիմ պատճէնը, նոյնպէս և նորա ճիշդ թարգմանութիւնը մայրենի լեզուով։ Այս խորհրդով ամենահարկաւոր բաներից մինը համարեցի արձանագրել այդ Հրովարտակի բուն պատճէնը թարգմանութեամբ հանդերձ, և հաւատացած եմ, որ մեր ազգը Նախիջևանու մէջ, որին այս բոպէիս յիշեցնումեմ այն ամենայն մայրական գթասրտութիւնը ի Տէր հանգուցեալ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒՀՒՈՅՆ, և Ռուսաց կայսրների ողորմութիւնքը ժամանակ առ ժամանակ առատացած Նախիջևանու վերայ, վերստին օրհնելու է իւր հովանաւորների յիշատակը, և, ամենայն երջանկութեամբ լցեալ, երկայն օրեր բարեմաղթելու է մեր ամենագթած ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ կայսեր, որովհետև ՆՈՅԱ շնորհքով ապրումէ այսօր Մեծ Մօր — Ռուսիայի հողի վերայ, որպէս իւր սեպհական տան մէջ, ազատ ամենայն նեղութենից։ Ահա այդ Հրովարտակի հաւատարիմ պատճէնը և նորա հարազատ թարգմանութիւնը։

(*) Մի բերանացի աւանդութիւն, որ հասել է ինձ, և որի ստուգութեանը չեմ կարող երաշխաւոր լինել, ասումէ, թէ մի հայկական աբեղայ, նախանձելով Պետրոս վարդապետի շնորհին, որ գտել էր ԵԿԱՏԵՐԻՆԱ ԿԱՅՍԵՐՈՒՀՈՒ առաջև Բարձրագոյն Հրովարտակ ստանալով նորանից, այլև առաջնորդ կարգվելով գաղթական Հայերի վերայ, դեղ է տուել և սպանել է նորան։ Շնորհակալ կը լինէինք, եթէ մեր Նախիջևանցի բարեկամքը, ծերունի մարդերից հարց ու խնդիր անելով, մի ստոյգ տեղեկութիւն հասուցանէին մեզ այս լրողութեան մասին։ Կ. Է.

Божіею поспѣшествующею милостію Мы ЕКАТЕРИНА ВТОРАЯ, Императрица и Самодержца Всероссійская:

Московская, Кіевская, Владимирская, Новогородская, Царица Казанская, Царица Астраханская, Царица Сибирская, Государыня Псковская и Великая Княгиня Смоленская, Княгиня Эстляндская, Лифляндская, Корельская, Тверская, Югорская, Пермская, Вятская, Болгарская и иныхъ; Государыня и Великая Княгиня Ново-Города, Низовскія земли, Черниговская, Рязанская, Ростовская, Ярославская, Бѣлозерская, Удорская, Обдорская, Кондійская и всея Сѣверныя страны Повелительница и Государыня Иверскія земли, Карталинскихъ и Грузинскихъ Царей и Кабардинскія земли, Черкасскихъ и Горскихъ Князей и иныхъ Наслѣдная Государыня и Обладательница.

Вѣрнѣйшему Нашему Архимандриту Петру Маркосову и всему обществу Крымскихъ Христіанъ Армянскаго закона всякаго званія всѣмъ вообще и каждому особо Наше Императорское милостивое слово.

Благонамѣренное всеобщее предпріятіе ваше да благословитъ десница Вышняго. Мы разсмотрѣвъ посланное къ Намъ отъ васъ изъ Бахчисарая отъ 16 Іюля прошедшаго года, общее и на доброй волѣ основанное прошеніе о избавленіи всѣхъ васъ отъ угрожаемаго ига и бѣдствія, принятіемъ въ вѣчное подданство Всероссійской Имперіи, соизволяемъ Мы не токмо принять всѣхъ васъ подъ Всемилостивѣйшій Нашъ покровъ и яко любезнѣйшихъ чадъ успокоивъ подъ онымъ доставить жизнь толико благоденственную, колико желаніе смертныхъ и безпрестанное Наше о томъ попеченіе простираться могутъ; слѣдуя сему соизволяемъ пользоваться вамъ въ Государствѣ Нашемъ не токмо всѣми тѣми правами и преимуществами, каковыми всѣ подданные Наши отъ Насъ и Предковъ Нашихъ издревлѣ наслаждаются, но сверьхъ того указали Мы:

Первое. При настоящемъ переселеніи вашемъ въ Азовскую Губернію перевесть изъ Крыма на иждивеніи Нашемъ все то имущество ваше, которое только перевезено быть можетъ; что изъ опредѣленной отъ Насъ суммы уже и исполнено.

Աստուծոյ յաջողեցուցիչ ողորմութեամբ Մեք ԵԿԱՏԵՐԻՆԱ ԵՐԿՐՈՐԴ, ԿԱՅՍԵՐՈՒՀԻ և Ինքնակալուհի ամենայն Ռուսաց,

Մոսկվայի, Կիեվի, Վլադիմիրու, Նովգորոդի, Արքայուհի Ղազանու, Արքայուհի Հաշտարխանու, Արքայուհի Սիբիրիայի, Թագուհի Պսկովեան և Մեծ Իշխանուհի Սմոլենսկեան, Իշխանուհի Էստլանդիու, Լիֆլեանդիու, Կարելիայի, Տվերի, Իւգորի, Պերմի, Վեատսկի, Բոլգարիայի և այլոց· Թագուհի և Մեծ Իշխանուհի Նիզովեան Նովա-Գորոդի, Չերնիգովի, Րեազանու, Րոստովի, Եարոսլաւի, Բելօզերսկի, Ուդօրսկի, Օբդօրսկի, Կօնդիսկի և բոլոր Հիւսիսային աշխարհի Հրամայող և Թագուհի Իւերական, Կարթալինեան և Վրացի Թագաւորների և Կաբարդինեան աշխարհի վերայ, այլև Չերքասեան և Լեռնայնակ Իշխանների և այլոց ժառանգութեամբ Թագուհի և Տիրակալ։

Մեր ամենահարազատ Արքիմանդրիտ Պետրոս Մարկոսեանին և բոլոր Հայադաւան հասարակութեանը Ղրիմի Քրիստոնեաների որ և իցէ կոչմամբ, ամենեցուն միասին և ամեն մինին առանձին թող հասանի Մեր ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ողորմած ողջոյնը։

Ձեր բարեխորհուրդ ընդհանուր ձեռնարկութիւնը թող օրհնէ Բարձրեալը աջը։ Մեք քննելով ձեզանից Մեզ ուղարկած ընդհանուր և յօժարակամ խնդիրը անցեալ տարու Յուլիսի 16 թուականից Բաղչիսարայ քաղաքից, ձեզ վերահաս տառապանքի լծից և թշուառութենից ազատելու մասին, ընդունելով ձեզ համայն Ռուսաց Տէրութեան մշտնջենաւոր հպատակութեան մէջ, բարեհաճումենք Մեք ոչ թէ միայն ընդունել ձեզ ամենեքեանքդ Մեր ամենագթած հովանաւորութեան տակ, և որպէս ամենասիրելի զաւակներ հանգստացնելով ձեզ Նորա ներքոյ այնպիսի չափով երջանկացնել ձեր կեանքը ինչքան հասանելու էին մահկանացուների ցանկութիւնը և Մեր անընդհատ հոգաբարձութիւնը այդ մասին, այլև թոյլ ենք տալիս ձեզ Մեր Թագաւորութեան մէջ վայելել ոչ թէ միայն բոլոր իրաւունքը և առանձնաշնորհութիւնքը, որ Մեր համօրէն հպատակքը ՄԵԶԱՆԻՑ և Մեր նախնիքից հնուց վայելումեն, այլև բաց ի դորանից հրամայեցինք Մեք.

Առաջին. Ձեր ներկայ տեղափոխութեան միջոցին դէպ ի Ազովեան գաւառը, փոխադրել Ղրիմից Մեր ծախքով այն ձեր բոլոր գոյքը, որ միայն փոխադրելի էր, որ և ՄԵԶԱՆԻՑ սահմանեալ արծաթագլխովը արդէն հնարաւոր է կացուցած։

Второе. Для удобнѣйшаго поселенія вашего отвесть въ Азовской Губерніи особенную отъ прочихъ селеній округу крѣпости Святаго Димитрія Ростовскаго, какъ границы оной съ Донскимъ войскомъ утверждены, оставляя изъ нея на крѣпостней выгонъ земли три тысячи десятинъ, да для рыбныхъ ловель тамошнымъ обывателямъ четвертую часть рѣки Дона, изъ того, сколько оной рѣки въ дачѣ той округи состоитъ, въ верьхъ отъ устья рѣки Темерника, а въ случаѣ недостатка для селеній вашихъ тамъ земли, и въ Округѣ крѣпости Азовской, гдѣ противъ тѣхъ дачь вашихъ рыбныя ловли, Всемилостивѣйше жалуемъ вѣчно въ пользу и выгоды всего общества безъ всякихъ въ казну Нашу податей.

Третіе. По раздѣленіи на классы Государственныхъ жителей Всемилостивѣйше увольняемъ всѣхъ отъ Государственныхъ податей и службъ, какого бы званія оные ни были, на десять лѣтъ, а по прошествіи онаго времяни имѣютъ платить въ казну Нашу ежегодно купечечество, съ капиталовъ съ рубля по одному проценту, цеховые, также и мѣщанство, съ двора по два рубли, а уѣздные поселяне, и имянно земледѣльцы, коимъ полагается для каждаго до тридцати десятинъ, будутъ взносить съ каждой десятины въ годъ по пяти копѣекъ; неимущіе же снабдѣны будутъ изъ казны Нашей не только продовольствіемъ на первой годъ, но и на посѣвъ земли всякаго званія хлѣбными сѣменами, скотомъ и всѣмъ къ заведенію домоводственному принадлежащимъ, съ возвратомъ за все оное въ казну чрезъ десять лѣтъ, на построеніе имъ домовъ, лѣсъ и прочіе припасы отпустятся изъ казны безденежно; имущественные же на отведенныхъ имъ земляхъ имѣютъ строитъ домы, лавки, анбары, фабрики и все, что сами пожелаютъ, изъ собственнаго своего иждивенія, пользуясь всѣ обще навсегда отъ всякихъ постоевъ свободою, кромѣ тѣхъ случаевъ, когда воинскія команды мимо селеній вашихъ проходить должны; отъ отдачи же на войска рекрутъ увольняетесь вы вѣчно, развѣ кто самъ въ службу Нашу пожелаетъ.

Երկրորդ· Ձեր առաւել յարմարաւոր բնակութեան համար տալ ձեզ Ազովեան գաւառի մէջ այն, միւս բնակութեններից առանձնացած հողաբաժինը Սուրբ Դիմիտրիյ Ռօստովսկիու ամրոցին, ինչպէս դորա սահմանքը դէպ ի Դօնու զօրքի բնակատեղին որոշված են· Թողնելով դորանից ամրոցի համար, որպէս արօտի դաշտ, երեք հազար դեսեատին հող· այլև ձկնորսութեան համար տեղացի բնակիչներին, քառորդ մասը Դօն գետի, այն բաժնից, ինչքան որ այն գետի սահմանից ընկնումէր այդ հողաբաժնի մէջ, դէպ ի վեր Թեմերնիկ գետի բերանից: Բայց եթէ ձեր բնակութենների համար այն տեղ պակաս էր հողը, և Ազովեան ամրոցի սահմանումը, ուր ձեր շէնքերի հանդէպ կային ձկնորսութեան տեղեր, ամենողորմ գթութեամբ պարգևումենք մշտնջենաւոր ժամանակով բոլոր հասարակութեան օգտի և շահի համար առանց որ և իցէ հարկատուութեան դէպ ի Մեր գանձատունը:

Երրորդ· Խագաւորութեան բնակիչները կարգերի վերայ բաժանելուց յետոյ ամենողորմ գթութեամբ ազատումենք ամենեքեանքդ բոլոր Տէրութենական հարկերից և պաշտօններից, որպիսի և լինէր ձեր կոչումը, տասն տարի ժամանակով· բայց այդ ժամանակի անցանելուց յետոյ, դուք պարտական էք վճարել Մեր գանձարանին տարուց տարի վաճառականքը իւրեանց արծաթագլխից, բուբլուց մի պրոցենտ, պատկանաւորքը արուեստաւորների ընկերութեանը, որպէս և քաղաքացիքը, ամենայն տնից երկու բուբլի· բայց նահանգական բնակիչքը, յատկապէս շինականքը, որոնց մարդագլուխ սահմանվումէ երեսուն դեսեատին հող, վճարելու են ամենայն տարի իւրաքանչիւր դեսեատինի համար հինգ հինգ կոպէկ· բայց չունևորքը կ՚ստանան Մեր գանձատնից ոչ թէ միայն ապրուստ առաջին տարու համար, այլև սերմանացանութեան համար, ամենայն տեսակ հացեղէն սերմեր, անասուն և ամենայն բան, որ հարկաւոր էր տնտեսութեան համար և որ պարտական էին դարձուցանել գանձատանը տասն տարուց յետոյ· բայց տների շինութեան համար, փայտ և այլ հարկաւորութիւնք կը տրվին գանձարանից առանց վճարի· իսկ ունևորքը կարող են նոցա տրված հողերի վերայ շինել տներ, խանութներ, շտեմարաններ, գործարաններ և ամենայն բան, որ ցանկալի էր նոցա, իւրեանց ծախքով, ամենեքեան առհասարակ ազատ մնալով ամենայն իշխանատուութենից ստրճանաւորների համար, բաց ի այն դիպուածներից երբ որ զօրքերի գունդեր անցանելու էին ձեր բնակութենների մօտից· իսկ զօրք տալուց Տէրութեանը ազատումենք ձեզ մշտնջենաւոր ժամանակով, բաց ի ով որ ինքը կամք ունէր մտանել Մեր ծառայութեան մէջ:

Четвертое. Архимандриту Петру Маркосову по смерть его Всемилостивѣйше препоручаемъ паству всѣхъ сихъ вышедшихъ съ нимъ изъ Крыма Армянъ, и позволяемъ имъ строить церкви и колокольни съ вольнымъ отправленіемъ во оныхъ по законамъ ихъ всѣхъ церковныхъ чиноположеній, и состоять Архимандриту и Армянскимъ Священникамъ въ единственной власти Армянскаго Патріарха, находящагося въ Араратскомъ Патріаршемъ монастырѣ.

Пятое. По заселеніи вами особаго города при урочищѣ Полуденки съ названіемъ Нахичевана и съ дачею на выгонъ онаго двѣнадцати тысячь десятинъ, повелѣваемъ учредить Магистратъ и въ немъ производить судъ и расправу по вашимъ правамъ и обыкновеніямъ выбираемыми изъ васъ же по жребію начальниками, коимъ и пользоваться чинами и жалованьемъ по штату Азовской Губерніи и быть подъ апелляціею Намѣстническаго Правленія, въ городѣ же и въ деревняхъ для защиты во всѣхъ нужныхъ случаяхъ опредѣляется особые начальники изъ Россійскихъ, коимъ въ судопроизводство сихъ поселянъ не мѣшаясь, быть токмо охранителями и ихъ заступать.

Впрочемъ по вступленіи каждаго въ избираемый имъ родъ Государственныхъ жителей позволяемъ пользоваться вѣчно и потомственно всѣмъ тѣмъ, чѣмъ по общимъ Нашимъ узаконеніямъ каждой родъ Государстяенныхъ жителей пользуется, какъ-то: свободною торговлею внѣ и внутрь Государства, и для вящшей выгоды оныя позволяется строитъ изъ собственнаго вашего иждивенія купеческія мореходныя суда, разводить нужныя и полезныя фабрики, заводы и фруктовые сады, по разведеніи которыхъ всякія виноградныя вина въ селеніяхъ вашихъ малыми мѣрами, вывозимыя жъ во внутренніе Россіи города бочками продавать можете, Французскую же водку дѣлать каждому, но не

Չորրորդ. Արքիմանդրիտ Պետրոս Մարկոսեանին մինչև նորա մահը Գերագոյն ողորմութեամբ յանձնումենք Մեզ այս բոլոր, Ղրիմից նորա հետ դուրս եկած Հայերի հոգևոր հօտը, և թոյլ ենք տալիս նոցա եկեղեցիք ու զանգակատունք շինել, ազատութեամբ կատարելով նոցա մէջ իւրեանց օրէնքի պէս բոլոր եկեղեցական կարգերը, և Արքիմանդրիտը և Հայոց քահանայքը պիտոյ է ստորադրվին միայնակ իշխանութեան Հայոց Պատրիարգին, որ գտանվումէ Արարատեան Պատրիարգական վանքումը:

Հինգերորդ. Երբ որ դուք արդէն բնակութիւններ էիք հաստատել մի առանձին քաղաքում Պօլուդենկա ասացեալ սահմանի մօտ, Նախիջևան անունով և ստացել էիք դորա հետ 12,000 դեսեատին հող, որպէս արօտի դաշտ, Հրամայումենք ձեզ հաստատել Մագիստրատ և այն տեղ դատ ու վճիռ կատարել ձեր կանոնների (*) և սովորութեան պէս վիճակով ընտրված ձեզանից մեծաւորներով, որ պիտոյ է վայելէին արժանաւորութիւն և թոշակ ազովեան գաւառի սահմանադրութեան վերայ, և գտանել Տեղակալական կառավարութեան բողոքաքննութեան (իշխանութեան) տակ: Իսկ քաղաքումը և գիւղերումը պաշտպանութեան համար կարգվելու են առանձին մեծաւորներ Ռուսաց ազգից, որ չխառնվելով այս գաղթականների դատաստանական գործողութենների մէջ, ունէին միայն լինել նոցա պաշտպանքը և հովանաւորքը: Բայց երբ որ այս կամ այն անձը մտած էր իւրեանց ընտրած կարգը թագաւորութեան մէջ բնակողների, թոյլ ենք տալիս նորան վայելել մշտնջենաւոր ժամանակով և ժառանգաբար այն ամենայն իրաւունքը, որ Մեր ընդհանուր կարգադրութենների հիման վերայ վայելումէ ամենայն կարգ թագաւորութեան մէջ բնակողների, որպէս. ազատ վաճառականութիւն թագաւորութենից դուրս և նորա մէջ, և նորա առաւել օգտի համար թոյլ է տրվում կառուցանել ձեր յատուկ ծախքով վաճառական ծովագնաց նաւեր, հիմնարկել հարկաւոր և օգտակար փաբրիկայք, գործատներ և պտղաբեր այգիներ, որոնց յառաջանալուց յետոյ կարող էք ամենայն տեսակ խաղողի գինիք վաճառել

(*) Նախիջևանի Մագիստրատը, պարզ քաղաքական գործերում, որպիսիք էին առևտրականք, ժառանգականք, վարվումէ այդ օրինագրքով, որի քրէական և պատժապարտական մասները անհամաձայն լինելով Տէրութենական օրէնքներին մնացած են առանց ներգործութեան:

Խնդրումենք մեր գիտնական բարեկամ Թէոդորոս Եսայեան Խատամեանից յարգել մեզ ուսումնական ծանօթաբանութեամբ այդ օրինագրքի մասին, որպէս վայել էր նորա նման ուսումնական Հայ Պարոնի, որովհետև մեք քսան տարի յառաջ տեսած ենք այդ օրինագիրքը, և այն վայր ի վերայ:

Կոմս Էմմ.

вывозить внутрь Россіи, словомъ: всякаго званія промыслы распространять по собственной волѣ и достатку каждаго и всѣмъ тѣмъ подъ Самодержавнымъ Нашимъ Скипетромъ и защитою законовъ наслаждаться.

Всѣ сіи преимущества жалуя Мы торжественно и потомственно сему обществу на вѣчныя времена, для вящшей силы своеручно подписали и Государственною Нашею печатью укрѣпить повелѣли. Дана въ Престольномъ Нашемъ градѣ Санктпетербургѣ лѣта отъ Рождества Христова 1779 Ноября 14 дня, Государствованія Нашего осьмагонадесять года.

На подлинной подписано собственною Ея Императорскаго Величества рукою тако:

ЕКАТЕРИНА.

Контросигнировалъ Вице-Канцлеръ Графъ Иванъ *Остерманъ*.

Указъ НАШЕМУ Сенату.

Права и примущества Нахичеванскому Армянскому обществу, Нашею Любезнѣйшею Родительницею, блаженной памяти, Императрицею ЕКАТЕРИНОЮ II, въ 1779 году дарованныя и въ грамотѣ изображенныя Всемилостивѣйше всему Нахичеванскому Армянскому обществу на вѣчныя времена утверждаемъ. Данъ 4 Генваря 1799 года.

На подлинномъ: ПАВЕЛЪ.

փոքրիկ չափերով ձեր բնակութիւն հաստատած տեղերում, բայց դէպ ի Ռուսիայի ներքին քաղաքներ դուրս հանելով, կարող էիք տակառներով վաճառել. Թոյլ տրված է ամենայն մարդու պատրաստել ֆրանսիական արաղ, բայց ոչ դուրս տանել Ռուսիայի ներս, մի խօսքով ամենայն տեսակ վաստակասիրութիւնք տարածել ամեն մինի կամքի և կարողութեան համեմատ, և այս բոլորը ունիք վայելելու ՄԵՐ Ինքնակալ գայիսոնի և օրէնքների հովանաւորութեան տակ:

Այս բոլոր առանձնաշնորհութիւնքը տալով ՄԵՔ հանդիսաբար և ժառանգաբար բոլոր հասարակութեանը մշտնջենաւոր ժամանակով, առաւել հաստատութեան համար մեր յատուկ ձեռքով ստորագրեցինք և ՄԵՐ Տէրութենական կնքովը հրամայեցինք ամրացնել: Տուած է ՄԵՐ Սանկտպետերբուրգ Մայրաքաղաքում, Քրիստոսի Ծննդից 1779 տարումը, Նոյեմբերի 14-ին, բայց ՄԵՐ Թագաւորութեան 18-երորդ տարումը:

Բնագրի վերայ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ *սեպհական ձեռքով ստորագրած է այսպէս,*

«ԵԿԱՏԵՐԻՆԱ:»

Հանդէպը նշանագրեց Վիցէ-կանցլեր Կոմս Իվան Օստերման:

Այս առանձնաշնորհութիւնքը վերստին հաստատված են այլ Բարձրագոյն հրովարտակներով, որ պատշաճ համարելով արձանագրեցի Ցիշատակարանիս մէջ:

Հրովարտակ ՄԵՐ Սենատին.

Իրաւունքները և առանձնաշնորհութիւնքը Նախիջևանի Հայոց հասարակութեան, ՄԵՐ Ամենասիրելի ծնողի, երանելի յիշատակի ԿԱՅՍՐՈՒՀԻ ԵԿԱՏԵՐԻՆԱ *Բ-ի ձեռքով, 1779 թուականի տրվածքը և պարգևաթղթի մէջ նշանակվածքը, Գերագոյն ողորմութեամբ բոլոր Նախիջևանի Հայոց հասարակութեան վերայ մշտնջենաւոր ժամանակով հաստատումենք: Տրված է, Ցունվարի 4-ին 1799 թուականին:*

Բնագրի վերայ «ՊԱՒԵԼ:»

Божіею поспѣшествующею милостію, Мы АЛЕКСАНДРЪ Первый, Императоръ и Самодержецъ Всероссійскій: Московскій, Кіевскій, Владимирскій, Новгородскій, Царь Казанскій, Царь Астраханскій, Царь Сибирскій, Царь Херсониса-Таврическаго, Государь Псковскій, и Великій Князь Смоленскій, Литовскій, Волынскій и Подольскій, Князь Эстляндскій, Лифляндскій, Курляндскій и Семигальскій, Самогицкій. Корельскій, Тверскій, Югорскій, Пермскій, Вятскій, Болгарскій и иныхъ; Государь и Великій Князь Нова-города Низовскія земли, Черниговскій, Рязанскій, Полоцкій, Ростовскій, Ярославскій, Бѣлозерскій, Удорскій, Обдорскій, Кондійскій, Витебскій, Мстиславскій, и всея Сѣверныя страны Повелитель и Государь Иверскія, Карталинскія, Грузинскія и Кабардинскія земли; Черкасскихъ и Горскихъ Князей и иныхъ наслѣдный Государь и Обладатель; Наслѣдникъ Норвежскій, Герцогъ Шлезвигъ-Голстинскій, Сторманскій, Дидмарсенскій и Олденбургскій и Государь Еверскій, и прочая, и прочая, и прочая.

Новороссійской Губерніи города Нахичевана Армянское общество въ лицѣ Депутатовъ своихъ, Карапета Сагакова и Магардича Назырова принесло Намъ Всеподданнѣйшее прошеніе, о подтвержденіи ихъ правъ и преимуществъ, дарованныхъ въ Бозѣ почивающими Великими Государями, Предками Нашими, и Мы Всемилостивѣйше снисходя на сіе прошеніе, и въ ознаменованіе всегдашняго благоволенія Нашего, къ непоколебимой вѣрности и усердію Нахичеванскаго Армянскаго общества, всѣ права и преимущества оному присвоенныя и доселѣ безъ отмѣны существующія, поколику они сходны съ общими Государственными узаконеніями, признали за благо утвердить, и навсегда удостовѣрить; яко же симъ утверждаемъ, и удостовѣряемъ во всей ихъ силѣ и неприкосновенности; во увѣреніе чего и сію Нашу подтвердительную жалованную грамоту, собственною рукою подписали, и укрѣпить ее Государственною печатью повелѣли. Дана въ Санктпетербургѣ тысяча восемь сотъ втораго года Декабря двадесять перваго дня, Государствованія Нашего лѣто второе.

Աստուծոյ յաջողեցուցիչ ողորմութեամբ, ՄԵՔ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ և ինքնակալ ամենայն Ռուսաց, Մոսկվայի, Կիեվի, Վլադիմիրու, Նովգորոդի, Արքայ Ղազանու, Արքայ Հաշտարխանու, Արքայ Սիբիրիայի, Արքայ Խերսոնիսս-Տաւրիկայ, Թագաւոր Պսկովի և Մեծ Իշխան Սմօլենսկեան, Լիտովեան, Վօլինեան և Պօդօլեան, Իշխան Էստլանդիու, Լիֆլեանդիու, Կուրլեանդիու և Սեմիգալիու, Սամօգիցիու, Կորելիայի, Տվերի, Իւգօրի, Պերմի, Վեատսկի, Բօլգարիայի և այլոց· Թագաւոր և Մեծ Իշխան Նիզովեան Նովա-Գօրօդի, Չերնիգովի, Ռեազանու, Պօլօցկի, Ռոստովի, Եարոսլաւի, Բելօզերսկի, Ուդօրսկի, Օբդօրսկի, Կօնդիսկի, Վիտեպսկի, Մստիսլավու և բոլոր Հիւսիսային աշխարհին Հրամայող և Թագաւոր Իբերական, Կարթալինեան, Վրացի և Կաբարդինեան երկիրներին, Չերքասեան և Լեռնաբնակ Իշխանների և այլոց ժառանգութեամբ Թագաւոր և Տէր, Ժառանգ Նորվեգիու, Դուքս Շլեզվիգ-Հօլստինեան, Ստորմանեան, Դիդմարսենեան և Օլդենբուրգեան և Թագաւոր Եվերեան, և այլոց, և այլոց, և այլոց։

Նոր Ռուսսիական գաւառի Նախիջեւան քաղաքի Հայոց հասարակութիւնը իւր Պատգամաւոր Կարապետ Սահակեանի և Մկրտիչ Նազիրեանի ձեռքով տուեց Մեզ ամենահպատակագոյն խնդիր, նոցա իրաւունքները և առանձնաշնորհութիւնքը, պարգեւած ի Տէր հանգուցեալ Մեծ Թագաւորների, Մեր Նախնիների ձեռքով հաստատելու համար, և Մեք Գերագոյն ողորմութեամբ ընդունելով այդ խնդիրը, և ցոյց տալու համար Մեր մշտական բարեհաճութիւնը դէպ ի Նախիջեւանի Հայոց հասարակութեան անյողդողդ հաւատարմութիւնը և ջերմեռանդութիւնը, որ սեպհականված էին այդ հասարակութեան և մինչեւ այժմ պահպանվումէին անփոփոխ, որքան ժամանակ դորա համաձայն են Թագաւորութեան ընդհանուր օրինադրութենների հետ, բարի ճանաչեցինք հաստատել, և մշտնջենաւոր ժամանակով հաւատարմացնել· որպէս և այս Հրովարտակով հաստատումենք, և հաւատարմացնումենք այդ իրաւունքների և առանձնաշնորհութենների զօրութիւնը և անձեռնամերձ լինելը· որի հաւատարմութեան համար Մեր այս վերստին շնորհած պարգեւաթուղթը սեպհական ձեռքով ստորագրեցինք, և ամրացնել Նորան Թագաւորական կնքով հրամայեցինք։ Տրված է Սանկտ-պետերբուրգ քաղաքում հազար ութն հարիւր երկու թուականին Դեկտեմբերի քսան և մի երրորդ օրում, Մեր Թագաւորութեան երկրորդ տարումը։

На подлинной собственною Его Императорскаго Величества рукою подписано тако:

АЛЕКСАНДРЪ.

Государственный Канцлеръ Графъ Александръ *Воронцовъ*.

Նախիջևան քաղաքը մինչև այսօր վայելում է այս իրաւունքները և առանձնաշնորհութիւնքը. մինչև այսօր քաղաքական կառավարութիւնը գտնվում է հայ քաղաքագլխի և հայ դատաւորների ձեռքում, որ վիճակով ընտրվում են հասարակութեան կամեցողութեամբ, երեք տարի ժամանակով։ Ոչինչ աւելի լաւ կառավարութիւն չէր պիտոյ ցանկանալ Հայերի համար, եթէ այդ ընտրութիւնքը միշտ յառաջանային ուշ դնելով քաղաքի և հասարակութեան պիտոյքին, եթէ մասնաւոր և անձնական բաները խափանարկու չլինէին ընդհանուր օգտին։ Նախիջևանը գտնվում է Դօն գետի աջակողմեան ափում, մի բաւական բարձր սարի վերայ. ափսոս որ քաղաքի շինուածքը չեն սկսանվում իսկոյն գետի ափից, դորա հակառակ գետեզրից կէս վերստ ճանապարհ պիտոյ է կատարել մինչև քաղաքի սկիզբը։ Պատմում են, թէ կամեցած էին սկզբումը գետի ափից սկսանել քաղաքաշինութիւնը, և որպէս թէ փորձ արած էին մի քանի մարդիկ բնակութիւն հաստատելու գետի մօտ, բայց աւազակներից երկիւղը ստիպել էր նորանց հեռանալ այդ տեղից։ Պիտոյ է կարծել, որ անհիմն է այդ պատճառը, որովհետև քաղաքի կենտրոնը, ուր գտնվում է Աւագ եկեղեցին, և գլխաւոր հրապարակը, այլև միւս եկեղեցիների համարեա թէ միաչափ հեռաւորութիւնը կենտրոնից, սորա չորս կողմով, ցոյց են տալիս, որ քաղաքի հիմնարկութիւնը եղած է առանց ուշադիր լինելու այն օգուտներին, որ յառաջանալու էին գետի մօտաւորութենից։ Ինչպէս և եղած լինէր այս, միայն քաղաքը բաւական գեղեցկաշէն է, տուները եւրոպական ճարտարապետութեամբ, մանաւանդ որ գտնվում էին քաղաքի կենտրոնում, համարեա թէ բոլորը քարից ու աղիւսից շինած։ Եկեղեցիքը, որ վեց հատ են թուով, հոյակապ և ամենևին նոր ճարտարապետութեան կանոններով, որոնցից Աւագը, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի

Ընագրի վերայ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ սեպհական ձեռքով ստորագրուած է այսպէս,

«ԱԼԵՔՍԱՆԴՐ։»

Թագաւորական կանցլեր կոմս Ալեքսանդր Վօրոնցով։

անունով, գտանվում է քաղաքի մէջ տեղը մի մեծ հրապարակի վերայ։ Մօտ տեղեր Նախիջևանի շրջակայքում չկան այդպիսի հոյակապ տաճարներ։

Մի ցաւելի բան է, որ ոչ մի հոյակապ շինուածք չկայ այդ քաղաքի մէջ, որ պատկանէր հասարակութեան և շինված լինէր մի բարոյական խորհրդով, զոր օրինակ Թէատրոն, Մատենադարան, Ժողովարան և Կլուբ։ Ամենայն շինուածք մեծ թէ փոքր, սեպհականութիւն են մասնաւոր մարդերի։ Քաղաքը ունի մի քանի խանութներ հին ժամանակներից շինած, որ վարձու է տալիս և որոնք բոլորովին ծերացած լինելով, այսօր, վաղը յոյս ունին հանդստանալ բնութեան գոգումը։ Գետի ափը մինչև նոր ժամանակներս չունէր մի յարմարաւոր նաւահանգիստ. մի քանի տարի է, որ քանի մի հարուստ մարդիկ շինելով այն տեղ գեղեցիկ ամբարներ և այլ շինուածք, այլև բաւական մեծ ծախքով սարի յետնակողմը փորելով և նորա քար ու հողը շինութենների առաջևներումը լցնելով բաւական խոր մօտ գետի մէջ, և այս լցուած հող ու քարը ջրի երեսից երկաթակապ հաստ գերաններով և փայտերով պատելով յառաջացուցին զանազան նաւահանգիստք, որ մի գծի վերայ լինելով այլև միմեանց մօտ, կազմումեն այս րոպէիս մի բաւական տարածուն նաւահանգիստ։ Սոցանից ամենափառաւորը, թէ աղիւսակերտ շտեմարաններով և թէ այլ հոյակապ շինութեամբ, պատկանում է ժառանգական պատուամեծար քաղաքացի և Առաջին կարգի վաճառական Հայրապետեան եղբարց։ Ցաւելի է նոյնպէս գետի սակաւաջուր լինելը յուլիս և օգոստոս ամիսների մէջ, կամ երբ երկար ժամանակ փչումէին արևելեան քամիները, որովհետև խափան է լինում մինչև անգամ միջակ նաւերի ընթացքին։

Օդը այդ քաղաքի բաւական լաւ է և բաւական մաքուր և չոր. չկան նորա մէջ այն անմաքրութիւնքը, որ երևումեն մօտակայ քաղաք-

ների մէջ, որպիսի է Ռոստովը։ Ջուրը նոյնպէս քաղցրահամ և մա-քուր, որ հոսում է մի ապառաժից, ոչ շատ հեռի գետի ափից քաղաքի հարաւային արևելեան կողմից։

Քաղաքը մերկ է ծառաստանից. ոչ թէ միայն չկան հրապարակական ճեմելիք կամ պարտէզք, այլև շատ սակաւ կը գտանվի այնպիսի տուն, որ մի երկու ծառ ունենար իւր բակում։ Թէև բոլոր բնակիչքը մեծ նեղութեան մէջ էին ցեխի երեսից, երբ սկսանումէին գարնանային և աշնանային անձրևները կամ ձիւնհալը, այնու ամենայնիւ դեռ ևս ոչ մինը քաղաքի գլուխ ընտրված պարոններից հոգ չէ տարել քաղաքը սալայատակ անելու մասին, թէև շատ հեշտ ճանապարհ ունէր, կանոն դնելով ամենայն քաղաք մտանող շինականների սայլերից պահանջել, մի սալ քար ներս բերել քաղաքը, ինչպէս սովորութիւն էր Տագանրօգի մէջ։ Եւ պիտոյ է ասել, որ այս ճանապարհով շատ շուտով յառաջ կը գնար բանը, որովհետև ամառները և մանաւանդ աշունքին հաշիւ ու համար չունին այդ քաղաքը մտած սայլերը, ցորենով, սեխով, ձմերուկով, այլ ունդեղէններով և այլն և այլն։

Քաղաքը կամ նորա շրջակայքը չունին մի առանձին բերք, որ յատկապէս նորան պատկանէին։ Նոր ժամանակներումս լսվում է, թէ ձկնորսութիւնը Դոնի մէջ բաւական յառաջադէմ է. այլև կարելի է յիշատակել այն, որ ամենայն տարի աշնան ժամանակ, մորթվումեն այդ քաղաքում բիւրաւոր ոչխարներ, որոնց ճարպը (ճրագու, сало) ուղարկվում է սահմանից դուրս։ Շատ ժամանակ չէ, որ մի ֆրանսիական ընկերութիւն ոտք է հաստատել Նախիջևանի մօտ, որի խորհուրդը է զանազան մսեղէն պաշարներ պատրաստել Եւրոպա ուղարկելու համար։

Քաղաքի բնակիչքը բոլորը Հայք են, բուն հայկական ուղղափառ դաւանութեամբ, որոնց մէջ գտանվում է միայն մի հատ պապական Հայ, որ հանդուցեալ ՆԵՐՍԷՍ կաթողիկոսը 1845 թուականի նոյեմբերի մէջ, կարգել էր ստորին եկեղեցական պաշտօնեաների և նորընծայ քահանաների վերայ վարժապետ, որ Բարձր Սրբազան ՄԱՏԹԷՈՍ վիճակաւոր Արքեպիսկոպոսի ձեռքով 1849 թուականին բոլորովին հեռացվեցաւ այդ պաշտօնից, որպէս զզուշալի մարդ։

Նախիջևանի բնակիչների թիւը, բաց ի հինգ հայաբնակ շրջակայ գեղերից, հասանում է մինչև 12,000։ Կեանքը այդ քաղաքի մէջ միօրինակ է և ձանձրալի. կանայք և աղջիկները վարումեն մի մենասակար նըստողական կեանք. դոցանից շատը զոհ է լինում թոքախտ ասացեալ տկարութեանը։ Զարմանք չէ. Նախիջևանում, ինչպէս նաև առ հասարակ Ասիայի մէջ, ըստ մեծի մասին գործածական կերակուրքը են

խմորեղէն, որ մեծապէս զօրացնելով զօլօտուխա ասացեալ տկարութիւնը մանուկ մարդերի մէջ, սոցա պատանեկութեան հասակում, մինչ կերպարանագործվումէին կուրծքի և սեռական գործարանքը, մինչ արիւնը առատութեամբ վազումէր մարմնի դէպ ի այդ սահմանքը, արդէն մեծ յաջողութեամբ ձեռնտու են լինում, որ բարակացաւական բլրակները բաժանվէին արիւնից և նստէին թոքերի կազմուածքի վերայ: Բաւական յաճախ երևումէ այդ տեղ պատանի աղջիկների և կին մարդերի մէջ բլէդնայա ասացեալ տկարութիւնը (chlorosis), և դորա յառաջանալու պատճառը ճանաչվումէ նոցա նստողական կեանքը, որից պատճառվումէ և արիւնի անկարգ շրջանառութիւնը, և սա առիթ է լինում նոյնպէս բարակացաւի երևելուն: Եւ մի օրիորդ, որ հալումաշ էր լինում, որ դեղնումէր և բաւական յաճախ կանաչում, մի՞թէ ընկնումէ բժշկի ձեռք, որ նայելով տկարութեանը մատակարարէր նորան երկաթ և եօդ և այդ կերպով ազատէր ողորմելի աղջիկը ուտող և մաշող ցաւից: Մի այդպիսի աղջկայ բժշկութիւն, ո՜հ ցաւումենք խոստովանել, նախ և յառաջ կայանումէ նորանում, որ խաչաձև ճեղքումեն մի գլուխ սոխ, և եօթը կտոր աղ դրած ճեղքուածքի մէջ դնումեն գիշերը հիւանդի գլխի տակ, իսկ միւս օրը ստիպելով հիւանդին մի կտոր շաքար ծամել և երեք անգամ թքել այդ սոխի վերայ, փաթաթումեն սորան հիւանդի մի զգեստի կտորով և ձգումեն կամ խաչ ճանապարհի, կամ աւեր ջրաղացի, կամ բաղանիքի վերայ, և կամ մի ջրի մօտ կամ մի քանի ծառ գտնված ձորի մէջ: Արդէն մեծ և յառաջադէմ հոգաբարձութիւն է մի այդպիսի աղջկայ մօր կողմից, եթէ սա հրաւիրումէր մի խալֆայ պառաւ և ընթացք էր թափել տալիս արճճով (*) հիւանդի վերայ, կամ գանչումէր մի խալֆայ և շարլատան մարդ ախտալից բանալու կամ ուրբաթագիրք կարդալու համար:

Բժշկականութիւնը, շատ տխուր բաներ ունի պատմելու այդ քաղաքի մասին: Ինչպէս Ասիացի ազգերի մէջ նոյնպէս և Նախիջևանի մէջ, բժշկութիւնը մինչև այժմ չէ ստացել իւր արժանաւոր յարգը և կշիռը ժողովրդի աչքումը: Մի հիւանդ մարդ շուտով կը յօժարի մի խալֆայի, մի պառաւի, կամ մի տգէտ վարսավիրայի (բերբերի) ձեռքից ընդունել այնպիսի ճարեր, որ մահացեղ էին և ամենևին կորստա-

---

(*) Նախիջևան և Ղրիմի քաղաքներումը «թէթև թափել» ասումեն այն բանին, որ Հայաստանումը անուանվումէ «վախ թափել:» Այս բանի մանրամասն նկարագրութիւնը կը գտանէ ընթերցողը Պ. Նալբանդեանցի «ՄԻՆԻՆ ԽՕՍՔ, ՄԻՒՍԻՆ ՀԱՐՍՆ» աշխատութեան մէջ:

Կամս Էմմ.

բեր, քան թէ օրինաւոր բժշկի հիմնաւոր և խելացի առողջարար դեղերը։ Քաղաքի բնակիչների մեծ մասը, իսկ գիւղացիք բոլորովին, հիւանդանալով, յանձնուած են մի՛միայն բնութեան բժշկարար ներգործութեանը. եթէ այսպէս ևս լինէր, ճշմարիտ, մահացութիւնը չէր կարող այնքան շատ զայրանալ, բայց արի տես որ մի տգէտ ռամիկ, կամ յիմարութեամբ, կամ իւր արծաթսիրութեան քաղցը լցուցանելու համար, օգուտ քաղելով առաջեւի մարդու առաւել, քան թէ ինքը յիմար լինելուց, մեռուցանում խղճմտանքը և համարձակվում ցեխոտ կօշիկներով ոտք կոխել բժշկականութեան սրբազան սահմանի վերայ, մի այդպիսի մարդ տալիս է հիւանդին այնպիսի դեղեր և այնպիսի չափերով, որ առողջ մարդը ևս մեծապէս վտանգվելու էր, թող թէ հիւանդը։

Նու այդ քաղաքի մէջ, տեղից վեր կացող մարդը բժիշկ է. դոցանից ոմանք թուղթ նայող են ([illegible], чернокнижникъ), ոմանք կարդալով բժշկող, ոմանք թեթև թափելով բժշկող, ոմանք դեղօրէ խմեցնող, և ոմանք, որ մի բաւական պաշտօնական բան է իւրեանց կարծիքով — վարսավիրայք, տեղի — անտեղի արիւն թողնելով և տըզրուկներ դնելով։ Այդ քաղաքում երկար ժամանակ բժշկագործող Բժշկականութեան վարդապետ Եգոր Իվանովիչ Տէալէվ, մեր գիտնական բարեկամը, պատմած է, թէ ամէնայն մայիս ամսում վարսավիրայ Յովհաննէսի խանութի քամակում գտնված աչագին փոսը լցվում մարդու արիւնով. այդպիսի փոսեր շատ կան, որ նոյնպէս դատարկ չէին մնում մարդկային արիւնից։ Ճշմարիտ. մայիսը որ եկաւ, արդէն մի հարկաւորութիւն է ճանաչվում արիւն թողուլ։ Հիւանդը թողնում առողջանալու յուսով, իսկ առողջը գործ է դնում այդ, որպէս առողջապահական հնար։ Եւ մի մարդ առողջ թէ հիւանդ, որ գնացել էր վարսավիրայի մօտ խորհուրդ հարցանելու, սորա նախկին առաջարկութիւնն է արիւն թողուլ, որովհետև այդ դիպուածում ստանալու էր քսան կամ քսանևհինգ կոպէկ արծաթ։ Վարսավիրայ ասած մարդը, մի տգէտ ռամիկ է, անուս և անկիրթ, նա ոչինչ չգիտէ, բայց հասարակ ժողովրդի աչքում, լինումեն վարսավիրայք, որ տեղ է մնում բժիշկը, շատ մեծ յարգ ու արժանաւորութիւն ունին։ Վարսավիրայի փոյթը չէ, թող հիւանդը բարակցաւ ունենայ, թող միջօրական տենդ, (febris intermittens) ունենայ, նա կը զարկէ նշտրակը և այն ժամանակ միայն իւղոտ բամբակը կը դնէ վիրաբերանի վերայ, երբ պղնձի թասի մէջ հաւաքվել էր մի երկու փունտ արիւն, երբ արիւնի գոյնը սկսել էր սպիտակիլ. նորա հոգը չէ, նա ամենևին տգէտ է, որ արիւնը առանց դուրան ևս ջրացած լինելով, հասարակ տենդը փոխելու էր դէպ ի ջըլային

(feb. nervosa)։ Ո՛վ կարող է երաշխաւոր լինել, որ մի փոքր սուլեմա ևս տալու չէր առաւել շուտով բժշկելու համար . . . . .

Ասիացիք առհասարակ սովորութիւն ունին իւրեանց հոգաբարձութեան վերաբերեալ բաները երկար տարիների մէջ ամենայն դանդաղութեամբ գլուխ բերել, իսկ այլ մարդերից պահանջել, որ ամենայն բան կատարուէր իսկոյն, որպէս մի կախարդական գաւազանի շարժուածով։ Եւ սաստի՛կ սրտնեղումեն եթէ մի այդպիսի մարդ մի փոքր ուշացնումէր իւր կատարելի գործը, այսինքն ո՛չ թէ իրողապէս ուշացնումէր, այլ հանդարտութեամբ կատարելով իւր գործը, ամենայն ապահովութեամբ աշխատումէր հասանել նպատակին։ Նախիջևանցիք սովոր են բժիշկ մարդերից պահանջել այսպիսի շուտափոյթ գործողութիւն. նոքա անհաւան են նոյնպէս, որ բժշկի տուած դեղերը, հիւանդի առողջ մերձաւորների զգալիքի վերայ չունին մի որոշ ազդեցութիւն՝ զոր օրինակ հոտ, համ, և այլն և այլն, կամ երբեմն նկատումեն որ մի սև շիշի միջից լցուած սպիտակ ջուրը ծիրանագոյն ներկումէ արծաթի դրգալը կամ յետոյ սևացնումէ ևս. այդպիսի դիպուածում մանաւանդ թէ հիւանդը վախճանի, ի՛նչքան ծակ մարգարէութիւնքեն լինում, — «բժիշկը դատապարտելի է, անխղճմտանք է, նորա համար թէ մի մարդ մեռած, թէ մի հաւ սատակած, այդ ի՛նչ դեղ է, մի՛թէ կարելի՞ է այդպէս կրակի նման սաստիկ դեղ տալ, եթէ արծաթը չէ դիմանում, սևանումէ, ողորմած-հոգու փորը և աղիքը ի՛նչպէս կարող էին չայրվիլ։ Չկամի ամենևին մտածել, որ այդ ողորմած-հոգու փորը և աղիքը արծաթ չէին, չկամի փորձել, որ փայտեայ դրգալի մէջ տեսանելու չէր այդ գունափոխութիւնը։» Իսկ երբեմն, որովհետև դեղերը շատ անգամ տրվումեն մի, երկու կամ երեք ժամը մի անգամ մի սեղանի դրգալ, — «ի՛նչ պիտոյ է օգնէ — ասումէ — հիւանդին այդ աննշան քանակութիւնը կամ եթէ ամբողջ օրի մէջ նշանակած է մի հատադեղ (pilula)։» Ասիացու յատկական բնաւորութեններից մինն է չափազանց լինել ամենայն բանի մէջ, մինչև անգամ և դեղերի մէջ. նա չը կամի հասկանալ, թէ դեղերի օգտակարութիւնը և վնասակարութիւնը մեծ մասնով կախված է չափերից միայն։ Մի դեղի մի երկու ցորենակշիռը փրկարար է մի հիւանդութեան մէջ, իսկ երեք կամ չորսը մահադեղ։ Այսպիսի ափական և անտեղի պատճառաբանութեամբ բամբասվումէ այդ քաղաքի մէջ մեր գիտնական բարեկամ, խոհեմ և մարդասէր բժիշկ Ֆրանց Իվանովիչ Գեռռեքէնը։ Ի՛նչ օգուտ, որ չէ ճանաչում ժողովուրդը նորա յարգը, ի՛նչ օգուտ, որ չգիտէ ժողովուրդը, թէ խնայելով պիտոյ էր ներս բերել կազմուածքի մէջ օտար մարմիններ. չգիտէ, թէ ամենայն դեղ որքան ևս օգտակար լինէր դա մի տկարութիւն բժշկելու մէջ, այնու ամենայ-

Գ. Սարաջեանի օթևանում, ուր անդադար խօսումէինք դարձեալ հանգուցելու վերայ։

Այս տեղ ըստ պաշտօնի ընկեր հանգուցելուն Գ. Սեւաստինսկին, Գ. Մարկոսեանը, և Գ. Օրանսկին ասացին սրտաշարժ իմաստներով անգիր ճառեր, ապացուցանելով իւրեանց սէրը և ջերմեռանդութիւնը դէպ ի հանգուցեալը։

Այսպէս աւարտւեցաւ մեր սիրելի ընկերի, եղբօր և բարեկամի թաղումը, մի այնպիսի թաղում, որին պատճառ ունէին նախանձել շատ մարդիկ։

Մ. Նալբանդեանց։

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԵՐԸ։

Ա.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՂԲԱՐՔ.

Այն լաց ու արտասուքը որ մի քանի օր յառաջ իբրև քրիստոնէական պարտականութիւն կատարեցինք մեք մի հայրենակից, օտարութեան մէջ վախճանած եղբօր վերայ, այդ լաց ու արտասուքը դեռ ևս չէր լռւած, դեռ ևս չէր ցամաքած, — և ահա Աստուծոյ անքննելի տնտեսութիւնը ուղարկել է մեզ նոր սուգ, նոր արտասուք մի ծաղկափթիթ հասակում չորացած, մահու անգութ հարուածից չիք դարձուցած կեանքի վերայ. ո՜հ, մի այնպիսի կեանքի վերայ, որ տալիս էր մեզ ամենագեղեցիկ յոյսեր, որ խոստանումէր մեզ մի ճոխ պտղաբերութիւն, որ պիտոյ է մի օր առաքինութեան վաստակներ վաստակէր իւր ազգի և եկեղեցու համար։ Այս բոլոր հոգեպայծառ յոյսերը, այս քաղցր ակընկալութիւնքը պիտոյ է մեզ այսօր դէպ ի գերեզման տանել, հողի մէ՛ջ ամփոփել. տրտում մտածութիւն, քրիստոնեայ եղբարք, տխուր պարտականութիւն, սիրելի ընկերակիցք։ Բայց թոյլ տուեցէք ինձ մի փոքր չափի ու սահմանի տակ դնել մեր տրտմութիւնը այս ծանր զրկանքի վերայ. թո՛յլ տուեցէք ինձ մի քանի բառ խաղաղ հոգով խօսել ձեր հետ այս րոպէիս։ Սա, այս վաղամեռիկ պատանին, իւր այրի մօր մի հատիկ որդի, իւր ծնողի ծերութեան միայնակ նեցուկ, ութ ամբողջ տարիք պանդխտանալով այս քաղաքումս, որպէս աշակերտ բժշկականութեան, պատերազմելով մի չքաւոր կարօտութեան հետ, այնու ամենայնիւ յաղթութեամբ աւարտել էր իւր ուսման ասպարէզը, և կամենումէր մի քանի ժամանակ ևս աշխատելով արժանանալ աւելի բարձր պատուի իւր գիտութեան հանդէսի մէջ։ Այդ գեղեցիկ դիտաւորութեան պսակը դարձաւ նորա համար մի տխուր մեռելապսակ. Ինձ, որ մեր հան-

գուցեալ քրիստոնեայ եղբօր հետ երկար տարիներ ունեցած եմ աւելի մերձաւոր բարեկամական յարակցութիւնք, հարկաւոր է ասել ձեզ, սիրելի եղբարք, թէ այս պատանին եղել է մի շնորհազարդ, անչափ աշխատասէր աշակերտ իւր ծանր, բազմամասնեայ գիտութեան մէջ։ Սորա ուսումնասիրութիւնը, սորա ջանքը և ջանադրութիւնը այն է եղած միշտ, որ ամենայն կողմից բովանդակաբար ծանօթանալով իւր արուեստին, քննելով իւր գիտութեան բոլոր գաղտնիքը, կարողանայ մի օր արժանապէս լցուցանել իւր պաշտօնը որպէս բանագէտ բարեկամ մարդկութեան, որպէս ձեռնտու և օգնական, հիւանդի տխուր մահճի մօտ։ Մեծ և խորհրդաւոր է, սիրելի եղբարք, մի բժիշկ մարդու պարտականութիւն մարդկային ընկերութեան մէջ· դորա ճարտարութենից կամ անփորձութենից կախ է շատ անգամ մի գերդաստանի հօր և մօր կեանքը և քաղաքացիների մարմնաւոր բարին։ Երանի՜ այն բժշկականութեան աշակերտին որ ճանաչելով իւր պարտականութեան մեծութիւնը, բարեխիղճ կերպով պատրաստել էր իւր անձը այդ սուրբ սպասաւորութեան համար մարդկութեան օգտին։ Մի այդպիսի շրջանկատ, օր ու գիշեր ուսանող ու մտածող պատանի էր այս մեր հանգուցեալ եղբայրը· դորա համար, երեկոյի արևը մայր է մտել, գրքի մօտ նըստած, քրտնելով, ուսանելով և նկատելով· և առաւօտու լոյսը բացվել է դորա վերայ, նոյնպէս գիրքը ձեռքին, պարապելով իւր ուսմանը, քունը հատանելով։ Ահա մի գովանի օրինակ ուսումնասիրութեան, ահա մի ընտիր գաղափար պատանի մարդերի համար, որ նուիրել էին իւրեանց կեանքը այդպիսի արժանաւոր կոչման։ Ձեր հետ է իմ խօսքը, Հայազնեայ պատանիք, որ այժմ եղբայրօրէն շրջապատելով ձեր ննջեցեալ եղբօր դագաղը, մասնակից էք այս տխուր ուղարկաւորութեան հանդիսին։ Ոչինչ բանով կարող չէք դուք աւելի արժանապէս մեծարել ձեր եղբօր յիշատակը, եթէ ոչ աշխատելով ամեն մինը ձեզանից ձեր ուսումնական ասպարէզի մէջ իմաստութեամբ գործ դնել ձեր կեանքի պատուական օրերը, և պատրաստել ձեր անձը, պիտանի մարդիկ լինելու ձեր ազգի մէջ, որ մեծ ակնկալութիւնք ունի ձեզանից, որ ամենայն օր աղօթում է ձեր վերայ, որ դուք աճելով ու զօրանալով մտաւորապէս և բարոյապէս, պարծանք լինէիք Հայկական անուանը Ռուսաստանի մէջ։ Դուք պարտական էք մի օր լինել ձեր ազգի շինողքը և բարձրացնողքը· ձեր վերայ է ազգի յոյսը, ձեր վերայ բոլոր բարեայակամ Հայերի աչքը։ Պատանի՛ Հայկազունք, չը մոռանաք այս մեծ խօսքը որ ես ասում եմ ձեզ այսօր Աստուծոյ սուրբ տաճարի մէջ և նորա երկրպագելի սեղանի առաջև։ Գրեցէ՛ք այդ բառերը հրեղէն տառերով ձեր սրտի մէջ։

Արղութեանց Իշխանաշէն Արքեպիսկոպոսի ձեռքով։ Նա հաստատած է այդ տեղ երբեմն ուսումնարան և տպարան, որ կառավարվել են բաւական երկար ժամանակ մի Թադէոս վարդապետի ձեռքով, որ անուն էր ստացել [illegible] (գիրք կուլ տուող)։ Մօտ իբր վաթսուն տղայ Յովսէփ Սրբազանը գաղթեցնելով Բեսսարաբիայից, Մօլդավիայից և Վալախիայից բերել է Սուրբ խաչ վանքը և դրել է այն տեղ դպրոցի մէջ։ Թէ որքան ժամանակ յարատևել է այդ դպրոցը, չը կայ այդ մասին մի գրաւոր յիշատակարան. միայն այսքան յայտնի է, որ աշակերտներից ոչ մինը մի բան ուսած չեն այդ տեղ, որոնցից ոմանք քահանայացած են, և Յիշատակարանիս գրողը շատ անգամ խօսած է նոցա հետ։ Այժմ գուցէ մի կամ երկու մարդ ծերունիք, մնացած լինին այդ աշակերտներից։ Տպարանը պիտոյ է մտածել, որ բաւական օրինաւոր բան եղած լինի, որովհետև մինչև այսօր ևս կան մի քանի գրեանք, որ բաւական մաքուր դուրս են եկած այդ տպարանից, որպիսիք են — «Յիսուս Որդի, Ժամագիրք, Սաղմոս, Աղօթամատոյց, Ողբք և հառաչանք Էջմիածնի և ուրիշք. Թէպէտ և Տելեմաքի անդրանիկ թարգմանութիւնը տպված է շատ անպիտան։

Վանքը ունի շատ պատուական աղբիւր և մի քանի ծառատունկ, որոնց ստուերների տակ օդ վայելելու համար նստումեն Նախիջևանից եկւորքը։

Վանքի ամենաբազմամարդ օրը է Վարդավառի կիւրակէն և երկու շաբաթին. հարիւրաւոր գերդաստան գնումեն քաղաքից և գեղերից, ոմանք վանքի պարսպի մէջ, ոմանք պարտէզումը նստումեն իւրեանց շինած կտաւեղէն տաղաւարների տակ։ Վանքը, ինչպէս ասացինք, գտանվումէ սարի վերայ, իսկ պարտէզը այդ սարի ոտքում մի տափարակ տեղի վերայ, որ բաժանվումէ սարից վանքի աղբիւրի առատ վտակով։ Վանքից մինչև ջրի ափը շինած է մի քարեայ սանդուղք, որի վերայ Վարդավառի տօնին երևումեն այր և կին մարդերի, զանազան հասակի բազմութիւն, իւրեանց խայտաբղէտ զգեստներով, ասիական գնացքով և օտարախօս ձայներով։ Բաց ի Վարդավառից, ամառները, ամենայն կիւրակէ, պատահումեն այդ տեղ տասն, քսան գերդաստան, որ գնումեն, ծառերի տակին կանաչ արօտի վերայ Թէյ խմելու կամ խորոված ուտելու համար։ Վանքի սարից որ ցած ես գնում դէպ ի աջ, վանքից կէս վերստ հեռաւորութեամբ, կամ աւելի ևս պակաս հանդիպումես մի փոքրիկ աղբիւրի, որ ժողովրդից անուանվումէ Սաղ-[illegible] (առողջարար ջուր), այդ ջրով լուացվումեն ամենայն ջերմնախտ ունեցող մարդ և իւրեանց հանդերձների կտորից մի բան կապելով մօտակայ ծառերի ճիւղերին հաւատումեն, թէ բժշկվումեն։ Աղբիւրը

ստացել է առողջարար անունը այն պատճառով, որ տեսած էին նորա վերայ լոյս իջանելը․ շատ կարելի բան։

Աղբիւրը գտանվում է վտակի մօտ, ամենևին ճախինի մէջ, ուր բուսանում է եղէգն և ապրում են զանազան զեռունք և սողունք․ այս շընչաւորների մեռած մարմինների քիմիական վերլուծութիւնը այլև ճախինը ինքն ըստ ինքեան կարող է պատճառել այն լոյսը, որ յայտնի է անունով ճախնային հուր, *կամ* Գերեզմանական մոլեհուր, *որ շատ անգամ երևում է և նոր թաղած մեռելների գերեզմանների վերայ, եթէ խաղաղ էր եղանակը, եթէ քամին չէր ցրվում այն գազը, որ բաժանվելով մեռած մարմնից նստում էր գերեզմանի հողաբլուրի վերայ։*

Այն մարդուն կամ այն ժողովրդին, որին անհասկանալի են բնութեան օրէնքները, սոյն բնական և աստուածադիր պաշտօնակատարութիւնքը անտարակոյս պիտոյ է հրաշք թուին։

Նախիջևանի բնակիչքը մեծ մասամբ վաճառականք են․ արհեստաւորութիւնը շատ փոքր հանդէս ունի այդ քաղաքի մէջ․ պատճառ, եթէ կար ևս մի որ և իցէ արհեստ, և այն ասիական և անընդունելի մերձակայ քաղաքների բնակիչներին, որ օտարազգի են և որ գնողք պիտի լինէին այդ արհեստաւորների աշխատութեններին։ Մշակութիւնը չքաւոր մարդերի համար բաւական օգտակար բան դարձաւ վերջին ժամանակներում, երբ գետի ափում ամբարներ ու նաւահանգիստ շինվեցան, որովհետև մշակների ձեռքով լցվում էին ցորեան, ունդեղէնք այն նաւերի մէջ, որ մտնում էին Նախիջևանին։ Այս ևս հարկաւոր է առանց յիշատակութեան չթողուլ, որ օրական մշակութիւնը երևում է միայն այր մարդերի մէջ․ իսկ աղքատ կանայք, առաւել լաւ կը համարեն մուրացկանութեամբ ապրել, քան թէ ծառայել մի մարդու տան մէջ որպէս աղախին, և այս է պատճառը, որ Նախիջևանի մէջ ամենայն տեսակ ծառայութիւնք կատարվում են Ռուս ծառաների և աղախինների ձեռքով։ Ի՛նչպէս կարելի է, որ Հայ կինը, թէև հաց չունէր ուտելու, գնայ և իւր երեսի ջրով ծառայէ մի մարդու մօտ․ Աստուած նորան երեք՚աւուր մահ տայ, այդ բանը չտայ։

Վաճառականութիւնը Նախիջևանի մէջ, որպէս և ամենայն տեղ Հայերի մէջ, չունի եւրոպական բնաւորութիւն։ Ամենայն մարդ իւր համար առանձին, մինչև անգամ մի և նոյն գերդաստանների անդամք աշխատում են առանձին կերպով վարել իւրեանց առուտուրքը, և առանձնապէս վայելել իւրեանց հարստութիւնը։ Չկան այդ տեղ վաճառական ընկերութիւնք, մանաւանդ հացեղէն ապրանքի, որով պարապողքը մեծ մասամբ երևելի արծաթագլխի տէր են։ Այդ վաճառականներից ոչ մինը չունի Եւրոպայում իւր համար մի գործակալ, և

այդ պատճառով ապրանքի գինը Նախիջևանի մէջ բարձրանում է և ցածանում նայելով եւրոպական վաճառական ընկերութեններին և հաշուատներին, որ գտանվում են Նախիջևանից կէս ժամ հեռաւորութեամբ Ռոստով քաղաքի մէջ։ Պիտոյ է ասել, որ Նախիջևանը, իւր աշխարհագրական դրութեամբ, արևմտեան Եւրոպայի և հացաբեր Ռուսիայի մէջ, կենտրոնական տեղերից մինն է. և այդ քաղաքի ամբարներից կշտանումեն շատ եւրոպական նաւեր։ Եթէ այդքան մեծագումար հացեղէնքը անմիջապէս ուղարկվէին Եւրոպա, եթէ մեր սիրելի ազգակիցքը Նախիջևանի մէջ, հաշուատուն կամ գործակալ մարդ պահէին գոնէ մի միայն Ֆրանսիայի Մարսէյլ քաղաքի մէջ, այն ժամանակ նոցա շահաստացութիւնը կրկնապատկվելու էր անշուշտ։ Եւ մի միայն հացը չէր, որ գնումէր Եւրոպա, այլև երկաթ, իւղ և կաշի, որոնց առուտուրքին ծանօթ են Նախիջևանցիք։

Մի մարդ չէ կարող այս բաները անել, բայց եթէ հինգ տասն երևելի հարուստք միանային և միաբան ուժով սկսէին գործ կատարել, այն ժամանակ նոցա հաշուատունքը Նախիջևանի և Մարսէյլի մէջ, առանց ամենայն տարակուսի, ոչ թէ միայն պակաս լինելու չէին եւրոպական հաշուատներից, այլ մի փոքր աւելի ևս, որովհետև եւրոպական ընկերութիւնքը երկրորդ և երրորդ ձեռքից ստանումէին ապրանքը, մինչդեռ Հայը անմիջական միջնորդ էր լինելու Ռուսաց երկրագործի և Եւրոպայի մէջ։ Եթէ Եւրոպացին, երրորդ ձեռքից ստանալով մի ապրանք, որից արդէն քանի մարդիկ շահվել էին, ուրեմն հետևաբար և թանգացած էր ապրանքը, եթէ սորան վաճառումէ նա Եւրոպայի մէջ և դարձեալ միլիոններ է վաստակում կարճ ժամանակի մէջ, ի՞նչ պատճառով դորա անմիջական վաճառատունը չէ շահվելու կրկին անգամ աւելի։

Երկրագործութիւն ասացեալը, ամենևին եւրոպական կերպով, որ աւելի ճիշդ խօսելով, պիտոյ էր ոսկու հանք անուանել, անտես է արած բոլորովին այդ քաղաքի մէջ։ Երկրագործութեան զանազան ճիւղերը, որպիսի են մեղուաբուծութիւն (пчеловодство) և շերամաբուծութիւն (шелководство) նոյնպէս բարձի թողի են արած։ Ի՜նչ գեղեցիկ և պտղաբեր դաշտեր կան Նախիջևանի շրջակայքում, ուր կարելի էր միլիոնաւոր փեթակներ պահել, որքան պարապ և ամայի թողած դաշտեր, որոնց վերայ շատ փոքր արծաթով կարելի էր թութի անտառներ դոյացնել շերամադարմանութեան համար, բայց ոչ ով սիրտ չունի մօտենալ բնութեան և փորելով նորա արգանդը հանել և ստանալ նորա անսպառելի գանձատնից ոսկին և արծաթը։ Երանի՜ էր, եթէ գոնէ արուեստներ ծաղկեցուցած լինէին բնութենից հեռանալով, բայց

և այդ չկայ մէջ տեղում։ Նախիջևանի մէջ չկայ ոչ մի բանի գործարան, բաց ի աղիւս և կղմինտր շինելու ախոռներից և փոսերից, բաց ի կիր շինելու հնոցներից, որոնք անհրաժեշտ բաներ լինելով շինուածքի համար երևումեն հարկաւորաբար յառաջացուցած։

Զարմանալի բան. Մոսկվայի և Պետերբուրգի կամ այլ քաղաքների մէջ, Ռուսիայում, տաւարի կամ ոչխարի ճարպը, մշակները, ապրուստը, բնակութեան վարձը, մի խօսքով ամենայն բան թանգ է քան թէ Նախիջևանի մէջ. բայց այդ քաղաքներում պատրաստումեն ստէարինեան ճրագներ և ուղարկելով, չասեմ ուրիշ տեղեր, այլ միայն հարաւային և Փոքր Ռուսիա, շինումեն միլիոններ. ինքը Նախիջևանցին գնումէ այդ ճրագը Նախիջևանի մէջ վճարելով իւրաքանչիւր փունտի համար 28, 29 կամ 30 կոպ. արծաթ։ Բայց չկան մարդիկ, որ ընկերութիւն կազմելով բանային մի օրինաւոր գործարան այդ բանի համար։ Ամենայն ինչ ձեռնտու էր դիւրագին պատրաստութեանը, և եթէ ընկերութիւնը ամեն մի փունտը քսանևհինգ կոպէկով ևս արձակէր, այնու ամենայնիւ ստանալու էր մեծ օգուտ. մանաւանդ գրաւելով բոլոր հարաւային Ռուսիայի մէջ այդ ճրագի վաճառականութիւնը աւելի դիւրագին վաճառելով, և աւելի մօտ լինելով այդ սահմանին։

Ի՞նչ է պատճառը որ չկայ այս բաներից ոչ մինը, ի՞նչ է պատճառը, որ ժողովուրդը միմեանցից բաժանված, փեռեկտված չկամի ամենևին ունենալ մի որ և իցէ ընկերութիւն. ինչու այդպէս հալածված է այդ քաղաքից ընկերսիրութեան հոգին, ինչու նորա բնակիչներից շատերը պարապումեն մի մեքենական վաճառականութեամբ, որի հիմքը էր փոխառութիւն և փոխատուութիւն։ Հարստութի՞ւն չկայ այդ քաղաքի մէջ, — ո՛չ. որովհետև Նախիջևանի ժողովուրդը համեմատելով Ռուսիայի եղերական քաղաքացիների հետ, միջին թուով, շատ վեր է և ճոխ իւր հարստութեամբ։ Գլխաւոր պատճառը քաղաքի յետ մնալուն է ժողովրդի անդաստիարակութիւնը և անկրթութիւնը, սորանից յառաջանումէ անմիաբանութիւնը և այն պատերազմը, որ լոյսը և ճշմարտութիւնը պիտոյ է ունենային խաւարի և ստութեան հետ։

Փառք Աստուծոյ, Նախիջևանը ունի այսօր եթէ ոչ շատ, գոնէ մի քանի ընտիր որդիք, որ վաղուց ահա ազատված լինելով ասիական պղտոր տեսութիւններից, և ամենայն կերպով ամենայն ջանք գործ դնելով քաղաքի և հասարակութեան օգտի համար, աշխատումէին մի փոքր բան հասկացնել այն, մինչև այժմ ասիական հոգու վայրենի և բարբարոս ազդեցութեան տակ մնացած պարոններին, որոնց անձնասիրութիւնը, շահասիրութիւնը, փառասիրութիւնը և խաւարասիրութիւնը

մեծ էր քան թէ նոցա հայութիւնը և ազգասիրութիւնը։ Պարզ երեւումէ ահա սորանից, որ Նախիջևանի այդ ընտիր որդիքը պիտի մի բարոյական պատերազմ կատարէին խաւարի, տգիտութեան, ստութեան և բարբարոսական կամակորութեան հետ։ Յայտնի է և այն որ ստութիւնը, ինչպէս եղած է միշտ և կայ այժմուս աշխարհի երեսին, պիտոյ է շատ հետևողներ ունենար քան թէ կարող էր ճշմարտութիւնը գտանել, որովհետև ստութիւնը, խաբեբայութիւնը արծաթ ունի, նա կաշառքը ձեռքին նստած է պատրաստ, նա կարող է դորանով հաճոյանալ մարդերին և մի անցաւոր և ունայն փառք ճարել. իսկ ճշմարտութիւնը, չունի այդ նիւթական նախամեծարութիւնքը, նա մի վերին և գերամեծար առաքինութիւն է, նորա ճանապարհը նեղ է և փշոտ, նորա դրօշակը կրողի վերայ արձակումէն մանաւանդ ստութեան խաւարատեսիլ զինուորքը իւրեանց նետերը և քարերը։

Մի անպատմելի ուրախութիւն է գալիս իմ վերայ տեսանելով, որ ճշմարտութիւնը ու ազգասիրութիւնը և Նախիջևանի մէջ ունին իւրեանց նահատակները, և այս տեղ ստութիւնը և ազգատեացութիւնը յաղթվելու վերայ են, և այս տեղ պիտոյ է խորտակվի խաւարի ամբարտաւանութեան եղջիւրը։ Փոյթ չէ՛, որ այս րոպէիս վատամարդիկ են դարձած այդ նահատակները խաժամուժ ամբոխի աչքում. փոյթ չէ՛, որ մի տեսաբանական խաբէութեամբ (оптическимъ обманомъ) մի քանի կարճատես մարդիկ կարծումէին տեսանել յաղթութեան պսակը խաւարի ճակատի վերայ. այդ երևակայական խաբէութիւնքը (иллюзіи) կը ցրվին և կը փարատվին, և այդ կարծեցած յաղթութեան պսակը խաւարի ճակատի վերայ, կը դառնայ յաւիտենական խայտառակութեան և արհամարհանքի դրօշմ (клеймо)։

Թող ստութիւնը հազարներով գնէ իւր կարծիքական և սուտ պարծանքը. ճշմարտութիւնը կէս կոպէկի գրչով և կէս կոպէկի թանաքով կը թողու ապագայի դատապարտութեան և արհամարհանքին նորա եղկելի և թշուառ յիշատակը։ Դորա հակառակ ճշմարտութեան զինուորների և նոցա առաջնորդի անունները, վառվռուն աստղերի նման փայլելու են մշտնջենաւոր ժամանակով, գալոց հայկական սերունդի աչքի առաջև, նորա ժամանակակից պատմութեան հորիզոնի վերայ։

Չկայ մարդկութեան պատմութեան մէջ ժամանակ, որ ճշմարտութեան պաշտօնեայքը հանդիպած չլինէին բազմադիմի տհաճութենների և անախորժութենների. այս հիման վերայ, չէ պիտոյ ամենևին զարմանալ, որ մի և նոյն բանը կրկնվումէ և այսօր. բայց այն մարդը, որ անուանումէր իւրեան քրիստոնեայ, պարտական է հետևել Քրիստոսի

ճշմարտութեանը, և նա է մարդը, որ արհամարհելով ամենայն ունայնութիւն կորիծի պէս կ'անցանէ այն նեղ և փշոտ ճանապարհից, դիմելու համար դէպ ի ճշմարտութեան կենդանարար աղբիւրը — Յիսուսի Քրիստոսի գոգը։

Աշխարհի երեսին, ճշմարտութեան պաշտօնեայն միշտ հանդիպել է և հանդիպումէ զանազան անախորժ և վշտացուցիչ բաների, բայց մանաւանդ ողբալի է մի այդպիսի պաշտօնէի վիճակը մեր ազգի մէջ։ Մեր սիրելի Հայերը, որպէս նաև Ասիացիք այն խօսքը ընդունումեն, որ դուրս էր գալիս բարեկամի կամ համախոհի բերանից։ Մի Հայ, որ չէր սիրում ինձ, — իմ անձնաւորութիւնը, — չկամի ընդունել և իմ բերանով քարոզված ճշմարտութիւնը, առանց մտածելու, թէ ես, և իմ քարոզած ճշմարտութիւնը, ջոկ ջոկ բաներ են, թէ ճշմարտութիւն ասացեալը, սեպհականութիւն չէ Մարկոսի, Կիրակոսի, այլ Աստուծոյ, որին մասնակից կարող ենք լինել Յիսուսի Քրիստոսի ձեռքով։ Այս շատ տխուր բան է, Աստուծոյ ճշմարտութիւնը հալածվումէ իմ թշնամիների ձեռքով, որովհետև իմ բերանով քարոզվել էր նա։ Ահա այն մեծախորհուրդ, և որքան մեծախորհուրդ, նոյնքան չարախորհուրդ պատճառը մի ազգի, մի քաղաքի որպէս և Նախիջևանի յետ մնալու։ — Այս բանը քանդել է մեր ազգի տունը, դա այն մրրիկն է, որ ցրուել է Հայոց ազգը աշխարհի չորս կողմը։ Այս ախտը մի անբարոյականութիւն է, և բնական հետևանք անդաստիարակութեան և անկրթութեան։ Եթէ ունեցած էր Նախիջևանը մի ազգային, կամ եւրոպական բազմակողմանի ուսումնարան, որի խորհուրդը եղած լինէր պատրաստել կրթեալ և խելացի քաղաքացիք, գիտուն և լուսաւոր վաճառականք, բանագէտ երկրագործք, հմուտ բնագէտք և այլն և այլն, այն ժամանակ այլ կը լինէր ճշմարտութեան և նորա պաշտօնեաների վիճակը Նախիջևանի մէջ։ Միայն մի այդպիսի ուսումնարանն է, որ կարող էր հաշտեցնել երկու հակառակող բաժինները, ճշմարտութիւն քարոզելով նոցա, որ նուիրելով իւրեանց անձը ստութեան և խաւարի սպասաւորութեանը, քարաձիգ և նետաձիգ էին լինում դէպ ի միւս բաժինը, որի դրօշակի վերայ լուսեղէն տառերով գրած էր — «Ճշմարտութիւն։»

Այդ ուսումնարանի չլինելն է պատճառը, որ Նախիջևանի մէջ, (ինչպէս նաև ուրիշ տեղերում Հայերի մէջ) մի զաւակ, թող լինի նա ամենահարուստի որդի, աճումէ և զարգանումէ առանց ամենայն դաստիարակութեան և կրթութեան, աշխարհի լուսաւորութենից միանգամայն օտար։ Մի այդպիսի զաւակի բուսական և կենդանական կեանքերը կերպարանագործվումեն, իսկ գլխաւորը բանական կեանքը, որով

միայն պիտի զանազանվէր նա բուսականներից և շնչականներից, մնում անկերպարան խաւարի բաբելոնեան գերութեան մէջ, իւր ծնողքի յաւիտենական դատապարտութեան համար։ Այն տեղ, ուր չկայ լուսաւորութեան մի աղբիւր, ուր չկայ տղաների և աղջիկների դաստիարակութիւն, ուր նիւթականը և ժանգը յաղթահարել են աննիւթը և անապականը, ուր չէ քարոզվում ուսումնարանի ամբիոնից սէր, ընկերսիրութիւն, ազգասիրութիւն, մարդասիրութիւն, առաքինութիւն, աշխատութիւն, արիութիւն և այլն և այլն, ի՛նչպէս կարող են յառաջանալ այն բարի բարի-բաները, որոնց չլինելու վերայ մորմոքվելով յառաջ եմ տանում իմ տխուր Յիշատակարանը, և որոնց միայնակ ծնողը ճանաչվում էր բարեկարգ, և ճշմարտութեամբ ոգևորեալ մի ուսումնարան։

Քանի որ այդ քաղաքի պատուելիք և մեր սիրական հասարակութիւնը շինելու չէ մի հոյակապ բուն ազգային դպրոց եւրոպական կարգերով, անմիջապէս ինքը հասարակութիւնը լինելով տէր և հոգաբարձու այդ աշխարհական դպրոցին, առանց մէջ բերելու հոգևոր մարդերի գործակցութիւնը, քանի որ կանգնեցնելու չէ մի այդպիսի աշտանակ լուսաւորութեան, քանի որ դոցա երեխայքը, իւրեանց անունները հազիւ հազ գրել ուսանելով, պիտի գան ու գնան աշխարհից, քանի որ եւրոպական մեծավայել հոգևոր սեղանը պատրաստ դրած ու Հայոց զաւակը, հոգևոր սովից և քաղցից միանգամայն կիսամեռ ընկած, իւր խաւար շրջակայքից պիտի նայի այդ լուսաւոր և առատ սեղանին, առանց վայելելու նորան, Նախիջևանի դրութիւնը կը մնայ այնպէս, ինչպէս որ կայ։ Բայց եթէ ճիշդ խօսենք, այդպէս ևս չէ կարող մնալ, որովհետև բնութիւնը դադար չունի, նա գտանվում անդադար շարժողութեան մէջ որ է նորա կեանքը. աշխարհի երեսին երկու բան կայ, — այո, կամ ոչ. — յառաջ, կամ յետ. — լինել, կամ չլինել։ Այս հիմքերի վերայ հարկաւորաբար պիտոյ է մտածել, որ եթէ Նախիջևանը հոգաբարձու չլինի յառաջ գնալու համար, ուրեմն անտարակոյս պիտի յետ գնայ, և պիտի չքանան այնուհետև մեր բարի բարի յոյսերը, որ ունէինք այդ քաղաքից։

Ի հարկէ լսելու եմ այն սովորական պատասխանը, թէ մի այդպիսի ուսումնարան մշտնջենաւորապէս պահպանելու համար, հարկաւոր է մեծ արծաթագլուխ, թէ քաղաքի գանձարանը չունի այնքան արծաթ, որ կարողանար դիմանալ այդ ծախքին։ Գիտեմ, և ընդունում եմ, այդ ճշմարիտ է. բայց դորա ընդդէմ կայ և ասելիք։ Եթէ կամենայ քաղաքը, եթէ յօժարի ճանաչել ճշմարտութիւնը, և յետ դնելով ամենայն կոյր կամակորութիւն սրբէ իւր վերայից անմիաբանութեան և

գժտութեան արատը, եթէ նոյն ճանապարհով ընթանայ, որով գնումեն նորա ընտիր որդիքը ճշմարտութեան և ազգասիրութեան քաջ նահատակները, այն ժամանակ կը գոյանայ և այդ արծաթագլուխը։

Քաղաքը եօթանասուն և հինգ տարի է, որ կայ, դիցուք առաջին քսան և հինգ տարումը դժուար էր, բայց գոնէ այս դարու սկզբից, եթէ հոգաբարձութիւն արած լինէին մի արծաթագլուխ գոյացնելու համար, արդեօք, յիսուն տարու մէջ, մի բան յառաջացած կը լինէ՞ր թէ ո՛չ։ Բայց այսպիսի հոգաբարձութիւնք ես բոլորովին անտես արած եմ տեսանում. և ո՛չ միայն այնչափ, այլև մինչև այսօր դեռ ևս հոգաբարձու չեն, Նախիջևանի լինելոց ուսումնարանի անունով, Հնդկաստանի մէջ թողած արծաթը ձեռք բերելու մասին, թէև հրատարակութիւն ևս եղաւ դորա համար Կալկաթայի Ա***էր օրագրի միջնորդութեամբ։ Ապա այս իրողութիւնը ի՞նչպէս պիտոյ է համաձայնեցնել այն պատասխանի հետ, թէ ուսումնարանի չլինելը հետևանք էր արծաթագլխի չլինելուն։

Բոլոր բանականութիւնը թոյլ չէ տալիս ընդունել Նախիջևանի այն գանգատը, թէ չունի արծաթագլուխ, քաղաքի և ազգի այս և այն օգտակար գործը յառաջացնելու համար, որովհետև եղածների մասին անհոգ մնալով կորուսանումէ իւր ձեռքից. նա մինչև այժմ չգիտէ իւր ո՛չ հարստութիւնը և ո՛չ աղքատութիւնը, ո՛չ արդիւնքը և ո՛չ ծախքը, որովհետև չկայ միաբան գործակցութիւն մի ազգային բանի մէջ. ամենայն մարդ համարումէ իւրեան մասնաւոր, — նա ասումէ, — իմ ի՞նչ գործն է, թող ինչ կամին անեն. առանց մտածելու թէ — ո՞վ են այդ կամեցողքը և անողքը, ո՛չ ապաքէն իւր նման անդամք հասարակութեան։ Ահա այս կերպով, հասարակութիւնը կորուսանելով իւր ամբողջութիւնը, նորա միաբան ոյժը բաժանվումէ նախ և յառաջ երկու կամ երեք մեծ հատուած. յետոյ, այդ հատուածի պատկանողքը ևս իւրեանց մասնաւորի տեղ դնելով, թողնումեն քաղաքի և հասարակութեան օգուտը երեսի վերայ։ Ամենայն անդամ հասարակութեան իւր տեղումը ունի իւր ձայնը և իրաւունքը. արտօնութիւնքը և առանձնաշնորհութիւնքը չեն տրված մի միայն Մարկոսին, Կիրակոսին, որ ուրիշները չկարողանային մասնակից լինել. Նախիջևանի ամեն մի անդամը հաւասարաչափ վայելումէ այդ իրաւունքները և արտօնութիւնքը և իրաւունք ունի բողոքելու, եթէ մի քանի մարդիկ հարստահարելով նորան կամէին ինքեանց միայն սեպհականել նորանց։ Ազգի և հասարակութեան գործի մէջ, նորա անդամքը մասնաւոր մարդիկ չեն, եթէ դոքա մասնաւորք են, եթէ դոցա չէ վերաբերում այդ գործը, ազգի և հասարակութեան

անունով, ուրեմն ո՞վ է հասարակութիւնը, ո՞վ է ազգը։ Դորա հակառակ ամեն մի բարոյական մարդու վերայ պարտականութիւն կայ, ազգային գործի անունը լսածի պէս իսկոյն մէջ մտանել և իւր կարողութեան և զօրութեան չափ օգնական լինել այդ գործի յառաջադիմութեանը, խօսքով և գործով, ամենևին այն սրտով և այն ջերմեռանդութեամբ ինչպէս կ՚ընթանար այն դիպուածում, եթէ այդ գործը վերաբերվէր մասնաւորապէս իւրեան։ Բայց եթէ ճշմարիտը պիտոյ է խոստովանել, ուրեմն հասարակութեան և ընդհանուր բարու համար աւելի հարկաւոր է քրտնել և աշխատել քան թէ իւր սեպհականի, որովհետև մի անհիմն բան է մասնաւորի երջանկութիւնը առանց ընդհանուրի և հասարակաց բարօրութեան։

Նախիջևանը, մեր սիրելի Նախիջևանը, ամենայն կարեկցութեան արժանի Նախիջևանը, տեսանելով այս րոպէիս իւր վիճակը, գոնէ պիտի բարւոքէր ներկան գալոց ժամանակները ապահովելու համար. գոնէ այժմ պիտոյ է հոգաբարձու լինէր մի արծաթագլուխ կանաչացնելու համար, մի լինելոց ուսումնարանի մասին, եթէ ոչ այժմ, գոնէ ապագայումը. և մի՞ թէ չէ կարելի սկսանել այժմ մի հիմնաւոր հոգաբարձութիւն այդ բանի համար։ Ինչո՞ւ պիտի հրաժարվին երևելի հարուստները յիսուն մանէթ, միջակ հարուստները քսանևհինգ մանէթ, իսկ հասարակ ժողովուրդը տասներկու մանէթ ամենայն տարի ազգային գանձանակը ձգելուց։ Տարակոյս չկայ, որ հարուստ մարդը հարիւր արծաթ ևս կը համաձայնի ձգել. և գիւղացիք անգամ կարող են մասնակից լինել դորան։ Մի՞ թէ քաղաքը չէ կարող գոյացնել իւր լինելոց ուսումնարանի անունով արդիւնքի աղբիւրներ, մի՞ թէ իւր անշարժ կալքերից և քսան հազար դեսեատին հողի արդիւնքից չէ կարող հինգ հազար մանէթ յետ ձգել տարին ուսումնարանի անունով, եթէ այդ կալքերի և հողերի կառավարութիւնը տնօրինվէր հասարակութեան կամքով և գիտութեամբ, այլև նորա օգտի համար։ Մի՞ թէ մի խմաստուն և ազգասէր քաղաքագլուխ խորհուրդ կատարելով քաղաքի գլխաւորների և ամբողջ հասարակութեան հետ սահմանէ այս կարգերը, ժողովուրդը պիտոյ է ընդդէմ դառնայ։ Ի՞նչ է ժողովրդի բեռը ազգի և հասարակութեան համար, որի ծանրութեան տակ հարստահարված լինելով, չկարողանար այս քաղցր լուծը յանձն առնուլ։ Ի՞նչ է պատճառը, որ Կոստանդնուպօլսի մէջ, և այն մարդիկը, որ Վանայ կողմերից եկած էին բեռնակրութիւն առնելու համար, իւրաքանչիւրը այդ պանդխտական և մշակ մարդերից վճարումէ ազգային դպրոցների, հիւանդանոցի, աղքատանոցի, անկելանոցի օգտի և պահպանութեան համար տարին հինգ տասն մանէթ, չնայելով, որ միւս կողմից Խատտի-Հիւ-

մայունի դուրս գալուց յետոյ, Տաճկաստանի լուծը ծանրացած էր նորա քրիստոնեայ հպատակների վերայ։ Մի՞ թէ Նախիջևանցու սրտից այնքան թռել է Աստուծոյ երկիւղը և ահը, ազգասիրութիւնը և վերջապէս զաւակասիրութիւնը (որ ամենայն անասունք ևս ունին), որ իւր քաղաքի մէջ նստած, վայելելով ամենայն ազատութիւն ամենայն նեղութեններից, վայելելով, փառք Աստուծոյ, Ռուսաց մարդասէր և ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍՐՆԵՐԻ *շնորհքը, չէ պիտոյ յօժարի իւր զաւակների կրթութեան և ապագայ բարօրութեան համար, տարեկան մի քան վճարել ազգային գանձարանին ուսումնարանի անունով։ Ոչ ոք այդպէս վատ կարծիք չունի Նախիջևանի մասին, մանաւանդ տեսանելով որ լուսաւորութեան սէրը օր ըստ օրէ արմատ արձակելու վերայ է, թէև սակաւ մարդերի մէջ։ Ի՞նչ պիտոյ է անել. պիտոյ է յուսալ, որ այդ սակաւքը շատանան, միայն հարկաւոր էր իսկոյն սկսանել մի բարի գործի հիմնարկութիւն, չինել մի առարկայ, որ մօտ լինէր ժողովրդի հոգուն և սրտին, այնուհետև ամենայն կարող մարդ զանազան դիպուածներում չէր խնայելու իւր օգնութիւնը։ Այն արծաթը, որ մի Հայ մարդ պիտի ներս բերէր ազգային գանձարանը ուսումնարանի անունով, կորած չէր. նա տալիս է այդ գումարը իւր զաւակին և նորա ժառանգներին մշտնջենաւոր ժամանակով, դորանով ապահովումէր նա իւր զաւակի կրթութիւնը և լուսաւորութիւնը, ապա ուրեմն և նորա երջանկութիւնը աշխարհի երեսին։*

Բայց .... ափսոս և հազար ափսոս, որ այս ասածներս մնալու են Յիշատակարանիս մէջ, առանց մասնակցութիւն գտանելու ընդհանուրի սրտի մէջ. ափսոս, որ սրտիս ցաւը և կսկիծը, պատճառված իմ սիրելի ազգակիցների լուսաւորութեան մասին անհոգութենից, պիտի գերեզման իջուցանեն ինձ։ Թող այսօր լինէր այդ ուսումնարանը ոտքի վերայ, էգուց գնայի ես գերեզման, գոնէ փարատված կը լինէր սրտիս կսկիծը և խաղաղ հոգով, ուրախագէմ կը հանդիպէի հրեշտակին, որ գալու էր, ինձ, իմ Արարչի առեանը տանելու համար։

Այս տեղ շատ անգամ կրկնելով «ազգային ուսումնարան» խօսքը, թէև իսկոյն վերաբերած ենք նարօդնոյ և գօսուդարստվեննոյ *որպիսութիւն յայտնող բառերը, այնու ամենայնիւ աւելորդ չէր մի փոքր պարզ խօսել։*

*Ազգային ուսումնարան ասելով, չեմ հասկանում այնպիսի ուսումնարանք, որոնց մասին հրատարակումէր Մեղուն ուրախացած. այդպիսի բաները արժանի չեն և ուսումնարան անունը իւրեանց վերայ կրելու։ Օբսկուրանտների (*խաւարապաշտների*) կարծիքով արդէն մի մեծ*

բան էր եթէ՞ մի աբեղայ կամ մի եպիսկոպոս, մի տիրացու նշանակուէր մի գիւղում վարժապետ, և հաւաքուէր նորա մօտ մի քանի աշակերտք. ապա պատրաստ էին այդ օբսկուրանտները մինչև երկինք բարձրացնել մի այդպիսի գործողութիւն, առանց մտածելու թէ ինչը այդ ողորմելի տիրացուն բաց ի գիշեր ցերեկ խոնարհեցո՛—ասրեցո՛ ասելով փրփրելուց այլ բան չգիտէր. ազգի համար եղած թէ չեղած այդպիսի չնչին բաներ մի և նոյն են։ Ամենայն ողջամիտ Հայի յայտնի է, որ կամին ներկել խաժամուժ ամբոխի աչքը, թէ ահա այս ինչ աբեղայ կամ այս ինչ եպիսկոպոս ազգասէր է, դպրոցներ է բաց անում, — ինչ ուսեալ մարդ է, — ապա նորա քարոզը, այնպէս հրաշալի քարոզ ասաց ուսումնարանի և ազգասիրութեան վերայ, որ ոչ ինչ չհասկացայ, փառաւորի նա, ի հարկէ այդպէս է հարկաւոր. վաղուց այդպիսի մարդիկ պէտք էին մեր ազգին . . . . .

Մեր ազգին հարկաւոր են ճշմարտապէս ազգի վերայ մտածողք և ոչ թէ այդպիսի սուտ ազգասէրք, որոնք ազգասիրութեան դիմակ ծածկելով երեսի վերայ, երկաթի կօշիկները հագած, մաշել են Հայաստանի քաղաքների և գիւղերի շէմքերը, սորան վատաբանելու, նորան պարսաւելու, իւրեանց սուտ արժանաւորութիւնը Սուրբ Թարգմանիչների Սահակի, Մեսրովբի և Խորենացու արժանաւորութեններին նման ցոյց տալու համար։ Տեսած ենք այդպիսի սուտ ազգասէրներից և այնպիսիքը, որ իւրեանց լեզուի քերականութիւնը անգամ չգիտէին, որ ծնած էին մի միայն խաբեբայութեան համար, և համարձակւում էին բազմութեան մէջ, ամենայն ամօթ ու պատկառանք յետ դրած, մեծ մեծ խօսել, թէ հասուցած էին 400 աշակերտք։

Ովին են խաբում, թող գնան իւրեանց գիւղերումը պարծենան շինականների առաջև, բայց մի օրինաւոր ընկերութիւն այդպիսի անամօթ լրբութիւնը կարող էր միայն լռացեալ արհամարհանքով վարձատրել։

Մեր ասած ուսումնարանը, նման չէ այդ օբսկուրանտների ուսումնարանին. դոցա վարժապետքը, այն ողորմելի և թշուառ էակները աշխարհի երեսին, արժանի չէին ամենևին առանց պատրաստութեան ոտք կոխել մեր խնդրած ուսումնարանի շէմքի վերայ։ Այն ուսումնարանը, որ կարող էր լուսաւորութեան աւազան դառնալ մեր ազգի համար, պիտոյ է ուսուցանէր իւր աշակերտներին, հայերէն, յունարէն, լատիներէն, փրանսիարէն, գերմաներէն և ռուսերէն, ընդհանուր պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Հայոց պատմութիւն, Ռուսաց պատմութիւն, հնախօսութիւն, օրէնսգիտութիւն, վաճառականու-

թեան ուսմունք, վաճառականութեան պատմութիւն, վիճակագրութիւն, մաթեմաթիկա, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր բնական պատմութիւն, գիւղական տնտեսութիւն, մեքենականութիւն, կրօնագիտութիւն, վայելչագրութիւն և նկարչութիւն։ Ահա այն ուսումնարանը, որի լինելը ցանկալի և հոգով չափ փափագելի էր մեր ամեններիս սրտի համար։

Մի անփարատելի տխրութիւն է գալիս իմ վերայ երբ մտածում եմ, թէ իմ սիրական Հայը առաջնորդված լինելով մինչև այժմ օբսկուրանտների ձեռքով, կարդալով Յիշատակարանս—իմ միայնութեան և տխրութեան զաւակը—ծիծաղելու էր իմ վերայ, ծաղր անելու ինձ, և դեռ ես մի կարեկցութիւն ցոյց տալով ասելու էր, «խեղճ մարդ, ի՛նչ բաներ է խօսում, ի՛նչ քարոզներ է տալիս, չգիտէ որ մեր ականջը ընդունակ է լսելու միայն ոսկու և արծաթի ձայն, չէ իմանում որ մեր համար նա է օրինաւոր ազգասէրը, որ առանց մեղանից արծաթ խնդրելու բացումէր ուսումնարաններ, և դեռ ես գովումէր մեզ, մեր ազգը, մեր նախնական աւանդութիւնքը, չգիտէ որ մեր համար մի և նոյն է ուսումնարանի լինելը կամ չլինելը, բայց թէ առանց մեր ձեռնտուութեան, մի գիւղում, մի գոմի մէջ, երևումէր մի տիրացու ահագին գաւազանը ձեռքին իւր աշակերտների ոսկերքը ջարդելու համար, և այդ տիրացուի առաջև կային նստած մի քանի երեխայք այբբենարանները ձեռքերին, շատ ուրախ ենք, և շատ շնորհակալ այն մարդուց, որ այդպիսի մեծ և երևելի հոգաբարձութիւն էր ցոյց տուել մեր ազգին։»

Ո՛վ Նախախնամութիւն, եթէ արդարև այսպէս պիտի խօսի Յիշատակարանիս կարդացող Հայը, ինչո՞ւ ապա վառեցիր բորբոքեցիր իմ մէջ մի ազգասիրութեան անշիջանելի կրակ, ինչո՞ւ այդպէս անգթաբար պատժեցիր ինձ բորբոքելով այդ կրակը, մինչ նա, փոխանակ ջերմացնելու իմ սիրելի ազգակիցների պաղած սիրտը, խորովելու էր իմ ներսը։ Նախախնամութիւն, խնայէ ինձ.... Նախախնամութիւն, խնայէ իմ սիրական ազգին. Նախախնամութիւն ......

---

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։

2. Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութենների, Հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութենների մասին։

3. Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգայողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար 9½ մանէթ։

Печатать позволяется. С. Петербургъ, Іюля 25-го, 1858 года.

Цензоръ Палаузовъ.